[Տիտղոսաթերթը և փաստաթղթաշրջանառության կառավարման էջը պետք է թարմացվեն մինչև հրապարակումը]

ԱՅԳ-1 200ՄՎՏ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՎ ԿԱՅԱՆ

Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան

4-րդ խմբագրություն -18/10/2023

[Տիտղոսաթերթը և փաստաթղթաշրջանառության կառավարման էջը պետք է թարմացվեն մինչև հրապարակումը]

Բովանդակություն

1. Ներածություն 6
2. Նպատակներ և շրջանակներ 7
3. Կանոնակարգեր և պահանջներ 8
3.1. Ազգային պահանջներ 8
3.2 Միջազգային պահանջներ 9
4. Շահագրգիռ կողմերի բացահայտում և վերլուծություն 21
5. Շահագրգիռ կողմերի ներգրավման գործիքներ 29
5.1. Ծանուցման մեթոդներ 29
5.1.1 Ուղղակի ծանուցում 29
5.1.2 Նամակներ և էլեկտրոնային հաղորդագրություններ 30
5.1.3 Ցուցապաստառներ և պաստառներ 30
5.1.4 Սոցիալական լրատվամիջոցներ 30
5.1.5 ԶԼՄ-ների ներգրավում 30
5.2. Հրապարակման և քննարկման մեթոդներ 31
5.2.1 Առցանց հրապարակում 32
5.2.2 Տպագիր պատճենների հրապարակում 32
5.2.3 Դեմ-առ-դեմ հանդիպումներ 32
5.2.4 Հանրային քննարկումներ 33
5.2.5 Ֆոկուս խմբեր 34
5.2.6 Հարցումներ 34
5.2.7 Փոստ և էլեկտրոնային փոստ 35
5.2.8 Բողոքների արկղեր 35
6 ԲևՍ շահագրգիռ կողմերի ներգրավումը մինչ օրս 36
6.1 Շահագրգիռ կողմերի ներգրավման շրջանակների որոշում 38
6.1.1 Դաշտադեմի համայնքապետարան - համայնքապետ 38
6.1.2 Թալինի համայնքապետարան - համայնքապետ 40
6.1.3 Առաջին Հանրային քննարկում 42
6.1.4 Երկրորդ Հանրային քննարկում 46
6.2 Սոցիալական հետազոտություն 50
6.3 ԲՍԱԳ ԵՎ ԿՊՎԾ քննարկումներ 53
6.3.1 Երրորդ Հանրային քննարկում – Թալին համայնք 54
6.3.2 Երրորդ Հանրային քննարկում – Դաշտադեմ համայնք 59
6.3.3 Երրորդ Հանրային քննարկում – Աշնակ համայնք 65
6.3.4 Երրորդ Հանրային քննարկում – Կաթնաղբյուր համայնք 70
6.3.5 Չորրորդ Հանրային քննարկում – Թալին 74
6.3.6 Չորրորդ Հանրային քննարկում – Դաշտադեմ համայնք 77
7 Շահագրգիռ կողմերի պլանավորված ներգրավում 82
8 Բողոքարկման մեխանիզմ 88
8.1.1 Շրջանակ 89
8.1.2 Բողոքարկման մեխանիզմի կառավարման ընթացակարգերի

հրապարակում 90
8.1.3 Բողոքի ներկայացում 91
8.1.4 Բողոքների ստացում 92
8.1.5 Բողոքների դիտարկում և քննում 93
8.1.6 Բողոքների լուծման տարբերակներ և պատասխաններ 94
9 Գնահատում և հաշվետվությունների ներկայացում 95
10 Դերեր և պարտականություններ 97
10.1 Այգ-1 ԲևՍ գծով ղեկավար 97
10.2. Այգ-1 Համայնքի հետ կապերի պատասխանատու (ՀԿՊ) 97
10.3. ՆԳՇ / ՇևՊ/ Շահագործումից հանման կապալառու 98

Հապավումների ցանկ

Հապավում	Սահմանում
ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ՀԿՀԱԱՇՄ	Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի
ՀԶԾ	Համայնքի զարգացման ծրագիր
ՀԿՊ	Համայնքի հետ կապերի պատասխանատու
ՀԿՀ	Համայնքների հետ կապերի հանձնաժողով
ԱՇՄԹ	Առևտրային շահագործման մեկնարկի թվական
ՎԶԵԲ	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
ԲԵՍ	Բնապահպանական և սոցիալական
ՆԳՇ	Նախագծում, գնումներ և շինարարություն
ԲՍԿ	Բնապահպանական, սոցիալական և կառավարման
ԲՍԱԳ	Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատում
ԲՍԿՀ	Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ
ՖԽՔ	Ֆոկուս խմբերի քննարկումներ
ՄՌ	Մարդկային ռեսուրսներ
ՄՖԿ	Միջազգային ֆինանսական կորպորացիա
ՀԿՑ	Հիմնական կատարողական ցուցանիշ
ԿՊՎԾ	Կենսագործունեության պայմանների վերականգնման ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ԱՄԾ	Աշխատանքի մեկնարկի ծանուցում
ՇԵՊ	Շահագործում և պահպանում
ԿՊ	Կատարողական պահանջ
ԿՍ	Կատարողական ստանդարտ
ՖՎ	Ֆոտովոլտայիկ
ՇԿՆՊ	Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան
ՀՆԸ	Հատուկ նշանակության ընկերություն
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

1. Ներածություն

«Մասդար Արմենիա 1» ՓԲԸ-ն («Ծրագրի ընկերություն» կամ «Ընկերություն») Հայաստանի Արագածոտնի մարզում իրականացնում է 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտայիկ (ՖՎ) էլեկտրակայանի ծրագիրը (ԱՅԳ-1 կամ «Ծրագիր») :

Ծրագիրն անցել է Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումը (ԲՍԱԳ) և պահանջում է Բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգ (ԲՍԿՀ)՝ բնապահպանական և սոցիալական (ԲևՍ) պարտավորությունների հետ համապատասխանությունը կառավարելու նպատակով:

Ծրագրի նպատակն է ապահովել լիարժեք համապատասխանությունը Ազգային օրենսդրությանը և Վարկատուների պահանջներին, այդ թվում (սակայն չսահմանափակվելով) Միջազգային ֆինանսական կորպորացիայի (ՄՖԿ) կատարողական ստանդարտներին (2012), Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) անվտանգության քաղաքականությանը (2009) և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) Կատարողական պահանջներին (2019), որոնք դիտարկվում են սույն ՇԿՆՊ-ում:

Սույն փաստաթուղթը Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանն է (ՇԿՆՊ) Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման գործընթացի համար: Այն նկարագրում է շահագրգիռ կողմերի բացահայտումը և վերլուծությունը, Ծրագրի ԲՍԱԳ աշխատանքային շրջանակների սահմանման և ԲՍԱԳ հաշվետվության փուլերի ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավումը և սահմանում է Շահագրգիռ կողմերի ներգրավման շրջանակը, որը պետք է իրականացվի Ծրագրի շինարարության, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում:

Ծրագրի շինարարական, շահագործման և շահագործումից հանելու փուլերի համար կպատրաստվեն կոնկրետ փուլերի ՇԿՆՊ-ներ (այսինքն՝ սույն փաստաթուղթը կթարմացվի՝ շինարարական, շահագործման և շահագործումից հանելու ԲՍԿՀ-երը ներառելու նպատակով) ՝ յուրաքանչյուր փուլի համար կոնկրետ պահանջվող շահագրգիռ կողմերի ներգրավման հետագա մշակմամբ:

2. Նպատակներ և շրջանակներ

Շահագրգիռ կողմերն այն անձինք կամ խմբերն են, որոնց վրա ազդում է ծրագիրը, ինչպես նաև նրանք, ովքեր կարող են ծրագրում շահագրգռվածություն և/կամ դրա արդյունքի վրա ազդելու կարողություն ունենալ: Շահագրգիռ կողմերի թվում են տեղական ազդակիր համայնքները և անհատները, նրանց պաշտոնական և ոչ պաշտոնական ներկայացուցիչները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները և կարող են ներառել քաղաքական գործիչներ, կրոնական առաջնորդներ, քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և հատուկ հետաքրքրություններ ունեցող խմբեր, կրթական համայնք և բիզնեսներ:

Շահագրգիռ կողմերի ներգրավումը շարունակական գործընթաց է, որը սկսվում է Ծրագրի նախաձեռնման և նախագծման փուլում: Ծրագիրը մշակողը փոխգործակցում է շահագրգիռ կողմերի հետ՝ Ծրագրի համար համապատասխան հաստատումներ և սոցիալական աջակցություն ստանալու համար: Բացի այդ, ծրագրի Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման նախապատրաստման ընթացքում շահագրգիռ կողմերը համակարգված կերպով ներգրավվում են անկախ խորհրդատուների կողմից: Շահագրգիռ կողմերի ներգրավումը շարունակվում է Ծրագրի շինարարության, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում:

Շահագրգիռ կողմերի ներգրավման սույն ԲՍԱԳ փուլի պլանը նպատակ ունի.

- Բացահայտել և վերլուծել Ծրագրի շահագրգիռ կողմերին:
- Ուրվագծել համակարգված մոտեցում՝ Ընկերության և ծրագրի շահագրգիռ կողմերի, մասնավորապես անմիջականորեն ազդակիր համայնքների միջև կառուցողական հարաբերություններ ստեղծելու և պահպանելու համար:
- Ամփոփել ԲՍԱԳ փուլի ընթացքում ձեռնարկված շահագրգիռ կողմերի ներգրավումը, և
- Պատշաճ կերպով կառավարել տեղական համայնքների և այլ շահագրգիռ կողմերի բողոքները և արձագանքել դրանց:

Շահագրգիռ կողմերի ներգրավման սույն պլանը պատրաստվել է ԲՍԱԳ քննարկման հանդիպումներից հետո: ՇԿՆՊ-ն «դինամիկ» փաստաթուղթ է, ինչը նշանակում է, որ այն կթարմացվի ծրագրի ողջ ընթացքում: Ինչպես վերը նշվեց, ՇԿՆՊ-ի հիմնական թարմացումները տեղի կունենան Ծրագրի շինարարության, շահագործման և շահագործումից հանելու փուլերից առաջ՝ ԲՍԿՀ-ի շրջանակներում՝ մանրամասնելով յուրաքանչյուր փուլի համար պահանջվող կոնկրետ շահագրգիռ կողմերի ներգրավումը:

3. Կանոնակարգեր և պահանջներ

Այս գլխի նպատակն է ընդհանուր ակնարկ ներկայացնել Ծրագրի համար կիրառելի կարգավորող պահանջներին՝ կապված շահագրգիռ կողմերի ներգրավման հետ: Հայաստանի բնապահպանական և սոցիալական ամբողջ օրենսդրության և Ծրագրի նկատմամբ կիրառելի բոլոր միջազգային բնապահպանական և սոցիալական պահանջների ավելի ամբողջական ակնարկը տրված է ԲՍԱԳ-ում:

3.1. Ազգային պահանջներ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եվ փորձաքննության մասին օրենք

Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարությունն այն գործադիր մարմինն է, որն օրենսդրական պատասխանատվություն է կրում Հայաստանում ԲՍԱԳ գործընթացն իրականացնելու համար:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի՝ Բ կատեգորիային դասված ծրագրերի համար կպահանջվի փորձաքննության երկու փուլ՝ 4 հանրային քննարկումով: Նախքան առաջին փուլի (այսինքն՝ շրջանակի) ներկայացումը, հանրությունը պետք է տեղեկացվի ծրագրի մասին 30 աշխատանքային օրվա ընթացքում: Երկրորդ փուլում (այսինքն՝ ԲՍԱԳ հաշվետվության փուլ) ՇՄԱԳ-ի վերջնական հաշվետվությունը պետք է ներկայացվի հանրությանը (3-րդ հանրային քննարկում) և այնուհետև ներկայացվի Շրջակա միջավայրի նախարարություն:

Հանրային քննարկումները պետք է կազմակերպվեն ՀՀ կառավարության 2014 թ. նոյեմբերի 19-ի թիվ 1325-Ն որոշման և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջների հիման վրա: Սույն օրենքը պահանջում է, որ քննարկումների անցկացման գործընթացները և գործողությունները (այսինքն՝ ծրագրի ժամանակացույցը, ծրագրի տեղեկատվական թերթիկները, մասնակիցների ցանկը, բողոքները, մասնակիցների կողմից բարձրացված հարցերն ու մտահոգությունները), և դրանց արդյունքները (օրինակ՝ համաձայնագրեր և որոշումներ) փաստաթղթավորվեն:

Օրենքի 6-րդ գլուխը սահմանում է Հայաստանի ՇՄԱԳ օրենսդրությամբ նախատեսված հանրային ծանուցման և քննարկման ընթացակարգերը, որոնք

ներկայացված են ստորև.

- լիազոր մարմինը՝ ձեռնարկողի ներկայացրած հայտի, հաշվետվությունների և փորձաքննական եզրակացության նախագծի մասին՝ լսումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ.
- ձեռնարկողը՝ հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լսումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ.
- ազդակիր համայնքի տարածքային կառավարման մարմինները և համայնքի ղեկավարը՝ հիմնադրութային փաստաթղթի և նախատեսվող գործունեության ու դրանց ազդեցության գնահատումների գործընթացների իրականացման մասին՝ լսումներից առնվազն 7 աշխատանքային օր առաջ:

Հանրության իրազեկումն ու մասնակցությունն ապահովելու նպատակով գնահատումների և փորձաքննության գործընթացները ենթակա են հանրային ծանուցման և քննարկման:

Ծանուցումը պետք է պարունակի տեղեկատվություն ձեռնարկողի մասին, հիմնադրութային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության համառոտ նկարագրությունը, իրականացման վայրը, դրանց հետ ծանոթանալու և քննարկումների իրականացման վայրը, պայմանները, դիտողություններ ու առաջարկություններ ներկայացնելու ժամկետները և այլ տեղեկություններ: Լիազոր մարմինն ապահովում է իր ներկայացուցչի մասնակցությունը քննարկումներին: Հանրային քննարկումների արդյունքում իրականացնողը կազմում է համապատասխան արձանագրություն՝ կցվում է տեսաձայնագրությունը: Հանրության հիմնավորված դիտողությունները և առաջարկությունները ձեռնարկողը և լիազորված մարմինը պետք է հաշվի առնեն: Հաշվի չառնելու դեպքում տրվում են հիմնավոր պատճառաբանումներ:

3.2 Միջազգային պահանջներ

<u>ՄՖԿ կատարողական ստանդարտներ (2012)</u>

ՄՖԿ կատարողական ստանդարտները (2012) պահանջում են շահագրգիռ կողմերի բովանդակալից ներգրավում, որը համաչափ է Ծրագրի ռիսկերին և հանրային շահերին: «Սոցիալական և բնապահպանական գնահատման և կառավարման համակարգեր» առաջին կատարողական ստանդարտը ավելի խորությամբ է նկարագրում շահագրգիռ կողմերի ներգրավման պահանջները: Դրանում նշվում է հետևյալը.

Շահագրգիռ կողմերի ներգրավում

Շահագրգիռ կողմերի ներգրավումը շարունակական գործընթաց է, որը կարող է տարբեր չափերով ներառել հետևյալ տարրերը. շահագրգիռ կողմերի վերլուծություն և պլանավորում, տեղեկատվության բացահայտում և տարածում, քննարկում և մասնակցություն, բողոքարկման մեխանիզմ և շարունակական հաշվետվողա-կանություն ազդակիր համայնքներին:

Շահագրգիռ կողմերի ներգրավման բնույթը, հաճախականությունը և ջանքերի մակարդակը կարող են զգալիորեն տարբեր լինել և պետք է համարժեք լինեն ծրագրի ռիսկերին և բացասական ազդեցություններին, ինչպես նաև ծրագրի մշակման փուլին:

Շահագրգիռ կողմերի վերլուծություն և ներգրավման պլանավորում

Պատվիրատուները պետք է բացահայտեն իրենց գործողություններով շահագրգռված շահագրգիռ կողմերի շրջանակը և հաշվի առնեն, թե արտաքին հաղորդակցությունն ինչպես կարող է նպաստել բոլոր շահագրգիռ կողմերի հետ երկխոսությանը: Այն դեպքում, երբ ծրագրերը ներառում են հատուկ որոշված ֆիզիկական տարրեր, ասպեկտներ և/կամ կառուցվածքներ, որոնք կարող են բացասական բնապահպանական և սոցիալական ազդեցություններ առաջացնել ազդակիր համայնքների վրա, Պատվիրատուն պետք է բացահայտի ազդակիր համայնքները և բավարարի ստորև նկարագրված համապատասխան պահանջները:

Պատվիրատուն կմշակի և կիրականացնի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան, որը պետք է կազմվի ըստ ծրագրի ռիսկերի և ազդեցությունների և մշակման փուլի և հարմարեցված լինի ազդակիր համայնքների առանձնահատկություններին և շահերին:

Եթե կիրառելի է, Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանը կներառի տարբերակված միջոցներ՝ անապահով կամ խոցելի համարվողների արդյունավետ մասնակցությունը թույլ տալու համար: Այն դեպքում, երբ շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացը էապես կախված է համայնքի ներկայացուցիչներից, Պատվիրատուն կգործադրի բոլոր ողջամիտ ջանքերը՝ ստուգելու, որ այդպիսի անձինք իրականում ներկայացնում են ազդակիր համայնքների տեսակետները, և որ կարելի է վստահ լինել, որ նրանք քննարկումների արդյունքները բարեխղճորեն կհաղորդեն իրենց ընտրողներին:

Տեղեկատվության բացահայտում

Ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության բացահայտումն օգնում է ազդակիր համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին հասկանալ ծրագրի ռիսկերը, ազդեցությունները և հնարավորությունները: Պատվիրատուն կապահովի ազդակիր համայնքների համար հետևյալ համապատասխան տեղեկատվության հասանելիությունը՝

- Ծրագրի նպատակը, բնույթը և մասշտաբը
- Առաջարկվող ծրագրի գործողությունների տևողությունը
- Նման համայնքների համար ցանկացած ռիսկը և հնարավոր ազդեցությունը և համապատասխան մեղմացնող միջոցառումները
- Շահագրգիռ կողմերի ներգրավման նախատեսվող գործընթացը
- Բողոքարկման մեխանիզմը:

Քննարկում

Այն դեպքում, երբ ազդակիր համայնքները ենթակա են բացահայտված ռիսկերի և ծրագրի անբարենպաստ ազդեցությունների, Պատվիրատուն պետք է ձեռնարկի քննարկումների գործընթաց այնպես, որ Ազդակիր համայնքներին հնարավորություն ընձեռվի արտահայտելու իրենց տեսակետը ծրագրի ռիսկերի, ազդեցությունների և մեղմացման միջոցառումների վերաբերյալ և թույլ տա Պատվիրատուին դիտարկել և պատասխանել դրանց: Քննարկման գործընթացի համար պահանջվող ներգրավվածության չափն ու աստիճանը պետք է համաչափ լինի ծրագրի ռիսկերին և անբարենպաստ ազդեցություններին, ինչպես նաև ազդակիր համայնքների կողմից բարձրացված մտահոգություններին: Արդյունավետ քննարկումը երկկողմանի գործընթաց է, որը պետք է.

- Սկսվի բնապահպանական և սոցիալական ռիսկերի և ազդեցությունների բացահայտման գործընթացի սկզբից և շարունակվի շարունակական հիմունքներով, երբ առաջանում են ռիսկեր և ազդեցություններ,
- Հիմնված լինի համապատասխան, թափանցիկ, օբյեկտիվ, բովանդակալից և հեշտ հասանելի տեղեկատվության նախնական բացահայտման և տարածման վրա, որը պետք է լինի մշակութային առումով համապատասխան տեղական լեզվով (լեզուներ) և ձևաչափով և հասկանալի լինի ազդակիր համայնքների համար,
- Կենտրոնանա ուղղակի, այլ ոչ անուղղակի ազդակիրների ներառական ներգրավվածության վրա,
- Զերծ լինի արտաքին մանիպուլյացիաներից, միջամտություններից, հարկադրանքից կամ ահաբեկումից.

- Հնարավորության դեպքում հնարավոր դարձնի բովանդակալից մասնակցությունը, և
- Լինի փաստաթղթավորված:

Պատվիրատուն պետք է իր քննարկման գործընթացը հարմարեցնի ազդակիր համայնքների լեզվական նախասիրություններին, նրանց որոշումների կայացման գործընթացին և անապահով կամ խոցելի խմբերի կարիքներին: Եթե պատվիրատուներն արդեն ներգրավվել են նման գործընթացում, նրանք պետք է համապատասխան փաստաթղթավորված ապացույցներ ներկայացնեն նման ներգրավվածության վերաբերյալ:

<u>Արտաքին հաղորդակցություն և բողոքարկման մեխանիզմներ</u>

Արտաքին հաղորդակցություն

Պատվիրատուները պետք է իրականացնեն և պահպանեն արտաքին հաղորդակցության ընթացակարգ, որը ներառում է հետևյալ մեթոդները՝

- Ստանալ և գրանցել հանրությունից արտաքին հաղորդակցությունները
- Ընտրել և գնահատել բարձրացված խնդիրները և որոշել դրանց լուծման ուղիները
- Տրամադրել պատասխաններ, հետևել դրանց և փաստաթղթավորել, եթե այդպիսիք կան, և
- Ըստ անհրաժեշտության ուղղել կառավարման ծրագիրը: Բացի այդ, պատվիրատուներին խրախուսվում է հրապարակայնորեն հասանելի պարբերական հաշվետվություններ ներկայացնել իրենց բնապահպանական և սոցիալական կայունության վերաբերյալ:

Բողոքարկման մեխանիզմ ազդակիր համայնքների համար

Այնտեղ, որտեղ կան ազդակիր համայնքներ, պատվիրատուն պետք է ստեղծի բողոքարկման մեխանիզմ՝ պատվիրատուի բնապահպանական և սոցիալական գործունեության վերաբերյալ ազդակիր համայնքների մտահոգությունները և բողոքները ստանալու և դրանց լուծումը հեշտացնելու համար: Բողոքների ներկայացման մեխանիզմը պետք է հարմարեցվի ծրագրի ռիսկերին և անբարենպաստ ազդեցություններին, և դրա հիմնական օգտագործողը պետք է լինեն ազդակիր համայնքները:

Այն պետք է նպատակ ունենա արագ լուծել խնդիրները՝ օգտագործելով հստակ և թափանցիկ քննարկման գործընթաց, որը մշակութային առումով համապատասխան է և հեշտությամբ հասանելի, առանց որևէ ծախսի կամ հատուցման այն կողմի համար, որը բարձրացրել է խնդիրը կամ մտահոգությունը: Այս մեխանիզմը չպետք է խոչընդոտի դատական կամ վարչական պաշտպանության միջոցների հասանելիությանը: Պատվիրատուն մեխանիզմի մասին պետք է տեղեկացնի ազդակիր համայնքներին շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացում:

Շարունակական հաշվետվողականություն ազդակիր համայնքներին

Պատվիրատուն պետք է ազդակիր համայնքներին տրամադրի պարբերական հաշվետվություններ, որոնք նկարագրում են Ծրագրի Գործողությունների պլանների իրականացման առաջընթացը այն հարցերի վերաբերյալ, որոնք ազդակիր համայնքների համար շարունակական ռիսկ կամ ազդեցություն են ներկայացնում, ինչպես նաև այն հարցերի վերաբերյալ, որոնք քննարկումների գործընթացի կամ բողոքարկման մեխանիզմի միջոցով ճանաչվել են որպես այս համայնքների մտահոգության ոլորտներ: Այն դեպքում, երբ կառավարման ծրագիրը հանգեցնում է ազդակիր համայնքներին հուզող հարցերի վերաբերյալ Գործողությունների պլաններում նկարագրված մեղմացման միջոցառումներում կամ գործողություններում զգալի փոփոխությունների կամ լրացումների, ազդակիր համայնքներին կտրամադրվեն թարմացված համապատասխան մեղմացնող միջոցառումները կամ գործողությունները: Այս հաշվետվությունների ներկայացման հաճախականությունը պետք է համաչափ լինի ազդակիր համայնքների մտահոգություններին, սակայն դրանք պետք է ներկայացվեն ոչ պակաս, քան

տարին մեկ անգամ:

ՎԶԵԲ ԿՊ 10: Տեղեկատվության բացահայտում և շահագրգիռ կողմերի ներգրավում

ՎԶԵԲ-ը շահագրգիռ կողմերի ներգրավումը համարում է առաջադեմ գործարար պրակտիկայի և կորպորատիվ քաղաքացիության էական մաս, ինչպես նաև ծրագրերի որակի բարելավման միջոց: Մասնավորապես, համայնքների արդյունավետ ներգրավվածությունը առանցքային է ծրագրերից ազդակիր համայնքների վրա ռիսկերի և ազդեցությունների հաջող կառավարման համար, ինչպես նաև կարևոր նշանակություն ունի համայնքի համար ընդլայնված օգուտների հասնելու առումով:

Շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը շարունակական գործընթաց է, որը ներառում է (i) պատվիրատուի կողմից համապատասխան տեղեկատվության հրապարակումը, որպեսզի շահագրգիռ կողմերի հետ բովանդակալից քննարկումների հնարավորություն ընձեռվի, (ii) բովանդակալից քննարկում հնարավոր ազդակիր կողմերի հետ, և (iii) ընթացակարգ կամ քաղաքականություն, որով մարդիկ կարող են մեկնաբանություններ անել կամ բողոքներ ներկայացնել: Այս գործընթացը պետք է սկսվի ծրագրի պլանավորման ամենավաղ փուլում և շարունակվի ծրագրի ողջ տևողության ընթացքում:

Շահագրգիռ կողմերի բացահայտում և վերլուծություն

Շահագրգիռ կողմերի հաջող ներգրավման առաջին քայլը պատվիրատուի կողմից այն տարբեր անհատներին կամ խմբերին բացահայտելն է, որոնք (i) ազդեցություն են կրում կամ կարող են (ուղղակի կամ անուղղակի) ազդեցություն կրել ծրագրից («ազդակիր կողմեր»), կամ (ii) կարող են ունենալ շահագրգռվածություն ծրագրում («այլ շահագրգիռ կողմեր»): Որպես շահագրգիռ կողմերի բացահայտման գործընթացի մաս, պատվիրատուն կբացահայտի այն անհատներին և խմբերին, որոնք կարող են տարբեր կամ անհամաչափ ազդեցություն կրել ծրագրից՝ իրենց անապահով կամ խոցելի կարգավիճակի պատճառով: Պատվիրատուն նաև կբացահայտի, թե ինչ ազդեցություն կարող են կրել շահագրգիռ կողմերը, և որքանով են հնարավոր (փաստացի կամ ենթադրյալ) ազդեցությունները: Եթե նկատվում են ազդեցություններ, կարող է պահանջվել լրացուցիչ հաղորդակցություն՝ տեղեկատվություն տրամադրելու և ազդեցությունների գնահատված մակարդակի վերաբերյալ հավաստիացում տրամադրելու համար:

Համապատասխան մակարդակով մանրամասներ պետք է ներառվեն շահագրգիռ կողմերի բացահայտման և վերլուծության մեջ, որպեսզի Բանկին հնարավորություն տրվի որոշել հաղորդակցության այն մակարդակը, որը համապատասխանում է խնդրո առարկա ծրագրին: Աշխատակիցները միշտ համարվում են շահագրգիռ կողմեր:

Շահագրգիռ կողմերի ներգրավման պլան

Պատվիրատուն կտեղեկացնի ՎԶԵԲ-ին, թե ինչպես է կարգավորվելու բացահայտված շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցությունը ծրագրի նախապատրաստման և իրականացման ընթացքում, այդ թվում՝ նախատեսվող բողոքարկման ընթացակարգի տեսակը: Ազդակիր կողմերի և այլ շահագրգիռ կողմերի համար կարող են տեղին լինել տարբեր մակարդակներով ներգրավում և քննարկումներ:

Այն դեպքում, երբ շահագրգիռ կողմերի խմբերը նույնականացվում են որպես անապահով կամ խոցելի, նման շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցվելու համար կարող են անհրաժեշտ լինել հատուկ մոտեցումներ և ռեսուրսների բարձր մակարդակ, որպեսզի նրանք լիովին հասկանան իրենց վրա հնարավոր ազդեցություն ունեցող խնդիրները: Պատվիրատուները պետք է նաև ՎԶԵԲ-ին տեղեկացնեն տրամադրված ցանկացած տեղեկատվության կամ քննարկման գործունեության մասին, որոնք իրականացվել են նախքան ֆինանսավորման համար ՎԶԵԲ-ին դիմելը:

Տեղեկատվության բացահայտում

Ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության բացահայտումն օգնում է շահագրգիռ կողմերին հասկանալ ծրագրի ռիսկերը, ազդեցությունները և հնարավորությունները: Եթե համայնքները կարող են ազդեցություն կրել ծրագրի բնապահպանական կամ սոցիալական բացասական ազդեցություններից, պատվիրատուն նրանց համար կբացահայտի հետևյալ տեղեկատվությունը («Տեղեկատվություն»).

- ծրագրի նպատակային բնույթը և մասշտաբը,
- առաջարկվող ծրագրային գործողությունների տևողությունը,
- շրջակա միջավայրի, աշխատողների առողջության և անվտանգության, հանրային առողջության և անվտանգության և համայնքների վրա այլ սոցիալական

ազդեցությունների հետ կապված ցանկացած ռիսկ և հնարավոր ազդեցություն ինչպես նաև առաջարկվող մեղմացման պլանները,

- նախատեսվող քննարկումների գործընթացը, եթե այդպիսիք կան, և հանրության մասնակցության հնարավորություններն ու ուղիները
- նախատեսվող հանրային հանդիպումների ժամը/վայրը և այն գործընթացը, որով հանդիպումները ծանուցվում, ամփոփվում և զեկուցվում են:

Տեղեկատվությունը կիրապարակվի տեղական լեզվով (լեզուներով) և հասանելի և մշակութային առումով համապատասխան ձևով՝ հաշվի առնելով ցանկացած խոցելի անձանց (օրինակ՝ էթնիկ խմբեր կամ տեղահանված անձինք): Հնարավոր զգալի բացասական սոցիալական կամ բնապահպանական ազդեցություն ունեցող ծրագրերի համար բացահայտումը պետք է տեղի ունենա բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացի սկզբում:

Բովանդակալից քննարկուն

Ցանկացած կոնկրետ քննարկման անհրաժեշտությունը և բնույթը կհամաձայնեցվեն ՎԶԵԲ-ի հետ՝ հիմնվելով շահագրգիռ կողմերի բացահայտման, վերլուծության և ծրագրի մանրամասն նկարագրության վրա և կախված աշխատողների և ազդակիր համայնքների վրա ընթացիկ և հնարավոր անբարենպաստ ազդեցությունների բնույթից և մեծությունից: Այն դեպքում, երբ աշխատողները և/կամ ազդակիր համայնքները ենթակա են կամ կարող են ենթակա լինել ծրագրի զգալի ռիսկերի կամ անբարենպաստ ազդեցությունների, պատվիրատուն կիրականացնի բովանդակալից քննարկումների գործընթաց այնպես, որ ազդակիր կողմերին հնարավորություն ընձեռվի արտահայտելու իրենց տեսակետները ծրագրի ռիսկերի, ազդեցությունների և մեղմացման միջոցառումների վերաբերյալ և թույլ տա պատվիրատուին դիտարկել և արձագանքել դրանց:

Բովանդակալից քննարկումը՝

- պետք է հիմնված լինի համապատասխան և համարժեք տեղեկատվության բացահայտման վրա, ներառյալ, որտեղ առնչվում է և տեղին է, փաստաթղթերի և պլանների նախագծային տարբերակները՝ նախքան որոշումների ընդունումը, երբ տարբերակները դեռևս բաց են
- պետք է սկսվի բնապահպանական և սոցիալական գնահատման գործընթացը վաղ փուլում
- պետք է կենտրոնանա սոցիալական և բնապահպանական ռիսկերի և անբարենպաստ ազդեցությունների, ինչպես նաև դրանց լուծմանն ուղղված առաջարկվող միջոցառումների և գործողությունների վրա
- պետք է իրականացվի շարունակական հիմունքներով՝ խնդիրների բնույթի,

ազդեցությունների և հնարավորությունների զարգացմանը զուգընթաց:

Քննարկման գործընթացը կիրականացվի ներառական և մշակութային առումով համապատասխան ձևով: Պատվիրատուն կհարմարեցնի իր քննարկման գործընթացը ազդակիր կողմերի լեզվական նախասիրություններին, նրանց որոշումների կայացման գործընթացին և ցանկացած անապահով կամ խոցելի խմբերի կարիքներին: Ազդակիր կողմերից բացի, քննարկումը կներառի նաև ցանկացած խմբի կամ անհատի, ովքեր ճանաչվել են որպես այլ շահագրգիռ կողմեր: Քննարկման գործընթացը կփաստաթղթավորվի որպես պատվիրատուի հանրային պարտավորության մաս: Պատվիրատուն հանրային քննարկումների գործընթացի մասնակիցներին ժամանակին կտեղեկացնի ծրագրի վերաբերյալ վերջնական որոշման, հարակից բնապահպանական և սոցիալական մեղմացման միջոցառումների և տեղական համայնքների համար ծրագրի ցանկացած օգուտների, ինչպես նաև այն պատճառների և նկատառումների մասին, որոնց վրա հիմնված է որոշումը, և առկա գանգատարկման կամ բողոքարկման մեխանիզմի կամ գործընթացի մասին:

Ներգրավում ծրագրի իրականացման և արտաքին հաշվետվողականության ժամանակ

Ծրագրի ողջ ընթացքում պատվիրատուն շարունակական տեղեկատվություն կտրամադրի բացահայտված շահագրգիռ կողմերին՝ ծրագրի բնույթին և դրա հետ կապված բնապահպանական և սոցիալական ազդեցություններին և հանրային հետաքրքրության մակարդակին համարժեք: Այս շարունակական ներգրավումը պետք է հիմնված լինի համալիր ուսումնասիրության գործընթացի ընթացքում հաստատված հաղորդակցության և ներգրավման ուղիների վրա: Մասնավորապես, պատվիրատուները պետք է օգտագործեն համայնքի ներգրավման համապատասխան պրակտիկա՝ տեղեկատվություն հրապարակելու և ԲՍԳՊ-ում մեղմացնող միջոցառումների իրականացման արդյունավետության, ինչպես նաև ծրագրի վերաբերյալ ազդակիր համայնքների շարունակական օգուտների և մտահոգությունների վերաբերյալ արձագանք ստանալու համար: Կարող է անհրաժեշտ լինել բացահայտել լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի ցիկլի առանցքային փուլերում, օրինակ՝ նախքան շինարարությունը սկսելը կամ նախքան շահագործման մեկնարկը:

Բողոքարկման մեխանիզմ

Պատվիրատուն պետք է տեղյակ լինի և ժամանակին արձագանքի շահագրգիռ կողմերի՝ ծրագրի հետ կապված մտահոգություններին: Այդ նպատակով պատվիրատուն կստեղծի բողոքարկման մեխանիզմ, գործընթաց կամ ընթացակարգ՝ պատվիրատուի բնապահպանական և սոցիալական կատարողականի վերաբերյալ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները ստանալու և դրանց լուծումը հեշտացնելու համար: Բողոքարկման մեխանիզմը պետք է հարմարեցվի՝ հաշվի առնելով ծրագրի ռիսկերը և հնարավոր բացասական ազդեցությունները:

Բողոքարկման մեխանիզմը, գործընթացը կամ ընթացակարգը պետք է անհապաղ և արդյունավետ կերպով լուծի մտահոգությունները՝ օգտագործելով հասկանալի և թափանցիկ գործընթաց, որը մշակութային առումով համապատասխան է և հեշտությամբ հասանելի է ազդակիր համայնքների բոլոր հատվածներին՝ առանց որևէ ծախսերի և առանց հատուցման: Մեխանիզմը, ընթացակարգի գործընթացը չպետք է խոչընդոտի դատական կամ վարչական պաշտպանության միջոցների հասանելիությանը: Այն ծրագրերի համար, որոնց նկատմամբ կիրառվում է ԿՊ 5 կամ ԿՊ 7-ը, պատվիրատուն կապահովի անկախ, օբյեկտիվ բողոքարկման մեխանիզմի առկայությունը: Պատվիրատուն ազդակիր համայնքներին կտեղեկացնի բողոքարկման գործընթացի մասին իր համայնքային ներգրավման գործունեության ընթացքում և պարբերաբար կզեկուցի հանրությանը դրա իրականացման մասին՝ պաշտպանելով անհատների կոնֆիդենցիալությունը: Աշխատողների համար բողոքարկման մեխանիզմները պետք է տարանջատվեն հանրային բողոքարկման մեխանիզմներից և պետք է համապատասխանեն ԿՊ 2-ին:

Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) անվտանգության քաղաքականության հայեցակարգ (2009)

ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայեցակարգը պահանջում է ԱԶԲ-ի վարկառուներից/հաճախորդներից իրականացնել քննարկման բովանդակալից գործընթացներ ԱԶԲ-ի կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերում: Բովանդակալից քննարկումը գործընթաց է, որը (i) սկսվում է ծրագրի նախապատրաստման փուլում և իրականացվում է շարունակական հիմունքներով ծրագրի ողջ ցիկլի ընթացքում. (ii) ապահովում է համապատասխան և համարժեք տեղեկատվության ժամանակին բացահայտումը՝ ազդակիր անձանց համար հասկանալի և հեշտությամբ հասանելի

եղանակով, (iii) իրականացվում է ահաբեկումից կամ հարկադրանքից զերծ մթնոլորտում, (iv) գենդերային առումով ներառական և զգայուն է և հարմարեցված է անապահով և խոցելի խմբերի կարիքներին, և (v) հնարավորություն է տալիս ազդակիր անձանց և այլ շահագրգիռ կողմերի բոլոր համապատասխան տեսակետներն ընդգրկել որոշումների կայացման մեջ, ինչպիսիք են ծրագրի նախագծումը, մեղմացման միջոցառումները, զարգացման օգուտների և հնարավորությունների համատեղ օգտագործումը և իրականացման խնդիրները: Քաղաքականության կիրառման համար ԱԶԲ-ն կպահանջի վարկառուներից/հաճախորդներից փոխգործակցել ծրագրի ազդակիր համայնքների, խմբերի կամ մարդկանց, ինչպես նաև քաղաքացիական հասարակության հետ՝ ազդակիր համայնքների համար ռիսկերին և ազդեցություններին համարժեք եղանակով տեղեկատվության հրապարակման, քննարկումների և տեղեկացված մասնակցության միջոցով: Բնապահպանական, հարկադիր վերաբնակեցման կամ բնիկ ժողովուրդների վրա զգալի անբարենպաստ ազդեցություն ունեցող ծրագրերի համար ԱԶԲ ծրագրի թիմերը կմասնակցեն քննարկման գործողություններին՝ հասկանալու ազդակիր անձանց մտահոգությունները և երաշխավորելու, որ այդ մտահոգություններն արծարծվեն ծրագրի նախագծային և անվտանգության պլաններում:

ԱԶԲ-ի Անվտանգության քաղաքականության հայեցակարգն ընդգծում է բողոքարկման մեխանիզմի ստեղծման պահանջները, որը ստանում և լուծում է ազդակիր անձանց մտահոգությունները, բողոքները և գանգատները Ծրագրի բնապահպանական և սոցիալական կատարողականի վերաբերյալ: Բողոքների ներկայացման մեխանիզմը պետք է հարմարեցվի Ծրագրի ռիսկերին և անբարենպաստ ազդեցություններին, անհապաղ լուծի ազդակիր անձնաց մտահոգությունները և բողոքները: Այն նաև պետք է ապահովի, որ գործընթացը լինի հասկանալի և թափանցիկ, գենդերային առումով զգայուն, մշակութային առումով համապատասխան և հեշտությամբ հասանելի լինի ազդակիր անձանց բոլոր հատվածներին: Այն նաև չպետք է խոչընդոտի դատական կամ վարչական պաշտպանության միջոցների հասանելիությանը: Բողոքարկման մեխանիզմը պետք է համապատասխան ձևով հասանելի դարձվի ազդակիր անձանց:

ԱԶԲ. 2011. Հանրային կապերի ոլորտի քաղաքականություն. Քաղաքականությունը նպաստում է ավելի մեծ թափանցիկությանը և հաշվետվողականությանը՝ հնարավորություն տալով ԱԶԲ-ի շահագրգիռ կողմերին, հատկապես զարգացման գործողություններից ազդակիր անձանց, ավելի արդյունավետորեն մասնակցել իրենց վրա ազդող որոշումներում: Ակնկալվում է, որ ԱԶԲ-ի աջակցությամբ

իրականացվող գործողությունները նկատի կառնեն անձնանց՝ տեղեկատվություն և գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու իրավունքը և հաշվի կառնեն շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ ազդակիր անձանց կարծիքները: Տեղեկատվությունը պետք է ազդակիր անձնանց տրամադրվի վաղ փուլերում, որպեսզի նրանք հնարավորություն ունենան զգալի ներդրում ունենալ ծրագրի նախագծման և իրականացման մեջ:

4. Շահագրգիռ կողմերի բացահայտում և վերլուծություն

Հետևելով միջազգային հաջողված փորձին՝ ծրագրի շահագրգիռ կողմերը դասակարգվում են երկու կատեգորիայի.

- Ազդակիր շահագրգիռ կողմեր. այն անձինք կամ հաստատություններն են, որոնք կարող են ազդեցություն կրել ծրագրի մեկ կամ մի քանի պոտենցիալ բացասական ազդեցություններից:
- Շահերի վրա հիմնված շահագրգիռ կողմեր. շահագրգիռ կողմեր, որոնք կարող են շահագրգռված լինել Ծրագրի որոշ գործողություններում՝ իրենց կանոնադրական պարտավորությունների կամ կազմակերպչական նկատառումներով:

Ստորև բերված աղյուսակն ուրվագծում է բացահայտված շահագրգիռ կողմերին և նրանց հետաքրքրությունը ծրագրի նկատմամբ: Եթե կիրառելի է, սույն ՇԿՆՊ-ն կներառի տարբերակված միջոցառումներ, որոնք անապահով կամ խոցելի շահառուներ ճանաչված անձանց թույլ կտան արդյունավետ մասնակցություն ունենալ:

Ստորև բերված աղյուսակը կթարմացվի Ծրագրի իրականացման ընթացքում՝ նոր բացահայտված շահագրգիռ կողմերին ընդգրկելու նպատակով:

Աղյուսակ 1 Շահագրգիռ կողմերի ցանկ

Շահագրգիռ կողմեր	Տեսակ	Հիմնավորում/շահ
Թալին և Դաշտադեմ համայնքների բնակիչներ	Ազդադկիր շահագրգիռ կողմ - Տեղական համայնք	Ծրագիրը գտնվում է Թալին և Դաշտադեմ համայնքների տարածքներում, ինչը կառաջացնի փոքր տնտեսական տեղաշարժեր:
Կաթնաղբյուր և Աշտարակ համայնքների բնակիչներ	Ազդադկիր շահագրգիռ կողմ - Տեղական համայնք	Ծրագիրը գտնվում է այս համայնքներին մոտ: Ծրագրի անուղղակի ազդեցությունները (դրական և բացասական) կարող են հավանական ազդեցություն ունենալ համայնքի վրա:
Լոգիստիկ երթուղիներին մոտ գտնվող բնակիչներ, օրինակ՝ Քարակերտ երկաթուղային կայարան և ճանապարհային ցանց	Ազդադկիր շահագրգիռ կողմ	Ծրագրի համար շինանյութերի մատակարարման արդյունքում ճանապարհների երթևեկության ավելացումը կարող է առաջացնել աղմուկ և փոշու արտանետումներ, որոնք կարող են ազդել երկաթուղային կայարանի և ճանապարհային

		ցանցի մոտ գտնվող բնակիչների վրա:
Հովիվներ, ովքեր օգտվել են ծրագրի տարածքից և համայնքի այլ արոտավայրերից	Ազդադկիր շահագրգիռ կողմ - Տնտեսական տեղաշարժ	Թալին, Դաշտադեմ, Աշնակ և Կաթնաղբյուր համայնքների հովիվներն օգտագործում են Ծրագրի տեղանքը և համայնքի այլ հողատարածքները արածեցման համար, ինչը կհանգեցնի փոքր տնտեսական տեղաշարժի, որը հետագայում քննարկվում է ԿՊՎԾ-ում:
Տարածքում ծառայություններ մատուցողներ	Շահերի վրա հիմնված	Հասարակական սննդի, կացարանների և մանրածախ բիզնեսի ոլորտում ծառայություններ մատուցողները կարող են ավելացնել իրենց եկամուտները ծրագրի արդյունքում՝ Ծրագրին ծառայություններ մատուցելով:
Փոքր և միջին ձեռնարկություններ	Շահերի վրա հիմնված	Տարածքի փոքր և միջին ձեռնարկությունները տրամադրում են տեղական շինանյութեր: Ծրագիրը կարող է դիտարկել անհրաժեշտության դեպքում նյութեր գնելու կամ շինարարական տրանսպորտային միջոցներ/սարքավորումներ վարձելու հնարավորությունը:
Խոցելի անձինք	Ազդադկիր շահագրգիռ կողմ - Տեղական համայնք	Ծրագրից ազդեցություն կրող (դրական և բացասական ազդեցություններ) – ավելի մանրամասն ներկայացված է ստորև:
Ազգային ՀԿ-ներ. - WWF Հայաստան - Օրհուս կենտրոններ - Մարդու իրավունքների խումբ - «Բիոսոֆիա» բնապահպանական ՀԿ - «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԿ - Շողեր ՀԿ - Էկո Փիս ՀԿ - Հայ կանայք հանուն առողջության և առողջ շրջակա միջավայրի (ՀԿՀԱԱՇՄ) - Կանանց ռեսուրսային կենտրոն - Համալսարանական կրթությամբ կանանց	Շահերի վրա հիմնված - ՀԿ	ՀԿ-ները կարևոր դեր են խաղում զարգացման գործում և օգնում անհատներին տեղեկատվություն ստանալ, քննարկել իրենց տեսակետները և արտահայտել իրենց հավաքական կարծիքը: ՀԿ-ները կարող են նաև փորձագիտական ներդրում ունենալ ԲԼՍ խնդիրների վերաբերյալ:

ասոցիացիա -ԻԿՕՄՕՍ/Հայաստան - Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն - Հայկական ճարտարապետության հետազոտությունների հիմնադրամ - Մշակութային ժառանգության տարածաշրջանային կենտրոն		
Շրջակա միջավայրի նախարարություն	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է Հայաստանում շրջակա միջավայրի կառավարման համակարգման, մոնիտորինգի և վերահսկման համար: Շրջակա միջավայրի նախարարությունը պատասխանատու է ՇՄԱԳ հաստատման համար, որն առանցքային կլինի շինարարության և շահագործման ընթացքում ծրագրի բնապահպանական համապատասխանության մոնիտորինգի համար:
Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է որակյալ կրթության և սոցիալական ծառայությունների մատուցման, տեխնոլոգիաների կիրառման և մշակութային ժառանգության պահպանության և խթանման համար:
Արտակարգ իրավիճակների նախարարություն	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում ՀՀ կառավարության քաղաքականության իրականացման համար:
Առողջապահության նախարարություն	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է առողջապահական (այդ թվում՝ աղմուկի և վիբրացիաների) հետ կապված խնդիրների համակարգման և կազմակերպությունների և քաղաքացիների կողմից սանիտարական նորմերի, հիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացման

		նկատմամբ վերահսկողության համար:
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է հետևյալ ոլորտներում պետական քաղաքականության, օրենսդրության և ծրագրերի մշակման և իրականացման համար. սոցիալական ապահովություն, աշխատանք և զբաղվածություն, սոցիալական աջակցություն, հաշմանդամների և տարեցների սոցիալական աջակցություն, ընտանիքների, կանանց և երեխաների սոցիալական պաշտպանություն, և այլն:
Հայաստանի Հանրապետության առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է օրենքով սահմանված վերահսկողության և (կամ) այլ գործառույթների իրականացման համար: Տեսչությունը կարող է պատժամիջոցներ կիրառել առողջապահության, աշխատողների առողջության և անվտանգության ոլորտներում՝ օրենքով սահմանված կարգով հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից:
Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Պատասխանատու է էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիաների տրամադրման և հանրային ծառայությունների (ներառյալ էլեկտրաէներգիայի մատակարարման, փոխանցման և բաշխման) սակագների սահմանման համար:
Արագածոտնի մարզպետարան	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Արագածոտնի մարզի մարզպետարան
Թալինի համայնքապետարան	Շահերի վրա հիմնված - պետական մարմին	Ծրագրի տարածքում տեղական ինքնակառավարման մարմին, որն, ի թիվս այլոց, ընդգրկում է չորս ազդակիր համայնքները:

Խոցելի շահագրգիռ կողմեր

Շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացի տեսանկյունից խոցելի շահագրգիռ կողմերն այն խմբեր են, որոնք մեկ կամ մի քանի հատուկ բնութագրերի պատճառով կարող են շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացին մասնակցելու հատուկ դժվարություններ ունենալ: Շահագրգիռ կողմերի վերլուծությունը և առկա տեղեկատվության ուսումնասիրությունը շահերի վրա հիմնված շահագրգիռ կողմերի համար խոցելիություն չեն բացահայտել: Տեղական համայնքների և ազդակիր տնային տնտեսությունների շրջանում հայտնաբերվել են խոցելիության հետևյալ աղբյուրները.

- **Կանայք**. Կանայք ենթակա են խոցելիության տարբեր մակարդակների կյանքի տարբեր հարթություններում, այդ թվում՝ եկամուտ, կրթություն, առողջություն, մասնակցություն քաղաքականությանը և բիզնեսին, և նրանք հատկապես խոցելի են հատուկ բռնությունների, ինչպես օրինակ՝ գենդերային բռնության, թրաֆիքինգի և սեռական խտրականության նկատմամբ: Ինչպես բոլոր նահապետական հասարակություններում, տղամարդիկ ունեն անհամաչափ իշխանություն և գերակշռում են քաղաքական ղեկավարության, բարոյական հեղինակության, սոցիալական և տնտեսական արտոնությունների դերերում: Գենդերային անհավասարության ինդեքսով Հայաստանը 81-րդ տեղում է 187 երկրների և տարածքների ցանկում: ԱՀԿ-ի կողմից մշակված գենդերային անհավասարության ինդեքսը պատկերացումներ է տալիս առողջության, իրավունքների և հնարավորությունների ընդլայնման և աշխատաշուկայի առումով գենդերային անհավասարության վերաբերյալ: Ցուցանիշի ավելի բարձր արժեքները ցույց են տալիս ավելի մեծ անհավասարություն: Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից կազմված 2018 թ. գենդերային խզման ինդեքսով, Հայաստանը կանանց քաղաքական իրավունքների ընդլայնման առումով դրական գնահատական ունի և 149 երկրների մեջ 115-րդ տեղում է: Հայաստանի համար ԵՄ Երկրի գենդերային նկարագիրը (2021) եզրակացնում է, որ գենդերային դերերի նկատմամբ սոցիալական վերաբերմունքը մնում է կոշտ: ԲՍԱԳ հաշվետվությունը նկարագրում է գենդերային տարբերությունները ուսումնասիրված սոցիալական ասպեկտներից յուրաքանչյուրի համար: Ծրագրի տարածքում աշխատուժի մեջ կանանց մասնակցության մակարդակն ընդհանուր առմամբ ավելի ցածր է տղամարդկանց համեմատությամբ: Տեղական համայնքներում կանայք հիմնականում աշխատում են ցածր կամ միջին աշխատավարձով աշխատատեղերում: Ի տարբերություն վարձու աշխատանքի, տեղական համայնքներում կանայք հիմնականում աշխատում են գյուղատնտեսության և անասնապահության ոլորտներում: Հարկ է նաև նշել, որ 4 համայնքապետերից ոչ մեկը կին չէ, իսկ ավագանու քսանյոթ անդամներից

միայն մեկն է կին:

- **Աղքատություն**. Համայնքի աղքատ անդամներն ավելի քիչ հավանական է, որ օգտվեն ծրագրի հնարավորություններից և կարող են ավելի շատ դժվարություններ ունենալ բացասական ազդեցություններին հարմարվելու համար: Աղքատ շահագրգիռ կողմերը ավելի քիչ հավանականությամբ հասանելիություն կունենան շահագրգիռ կողմերի ներգրավման մեխանիզմներին կամ կմասնակցեն շահագրգիռ կողմերի ներգրավման գործողություններին, եթե դրա հետ կապված որոշակի ծախսեր կան:
- **Անուսներ/անգրագետներ.** Համայնքի անուս անդամներն ի վիճակի չեն ուսումնասիրել հրապարակված փաստաթղթերը կամ տրամադրել գրավոր հետադարձ կապ և կարող են դժվարությունների հանդիպել տրամադրված տեղեկատվությամբ բովանդակալից կերպով զբաղվելու համար: Հարկ է նշել, որ Հայաստանն ունի 99% գրագիտության մակարդակ, ուստի չի ակնկալվում, որ դա խնդիր լինի.
- **Հաշմանդամներ.** Համայնքի հաշմանդամ կամ հիվանդ անդամները լրացուցիչ մարտահրավերների են բախվում շահագրգիռ կողմերի ներգրավման որոշակի միջոցառումներին (ինչպիսիք են հանդիպումները, ֆոկուս խմբերը կամ աշխատաժողովները) մասնակցելու առումով:
- **Լեզու.** Տարածքում խոսվող լեզուն հիմնականում հայերենն է: Նյութերը տրամադրվում են հայերեն, իսկ անհրաժեշտության դեպքում՝ անգլերեն: Նյութերը կպատրաստվեն նաև անգլերեն լեզվով՝ ներքին հաշվառման համար:
- **Էթնիկ պատկանելություն**. Ծրագրի տարածքում գտնվող մարդիկ Հայաստանի քաղաքացիներ են, նրանցից շատերը ծնվել և մեծացել են այդ տարածքում կամ արտագաղթել են Արցախյան պատերազմի հետևանքով: Էթնիկ պատկանելությունը Ծրագրի տարածքում կիրառելի խոցելիության չափանիշ չէ, քանի որ չկան էթնիկ փոքրամասնություններ:
- **Համակարգչային անգրագիտություն / ինտերնետ հասանելիության բացակայություն**. ԲՍԱԳ պահանջները ներառում են ԲՍԱԳ փաստաթղթերի առցանց հրապարակում: Ինտերնետ հասանելիության բացակայությունը կամ համակարգչային անգրագիտությունը կարող է խանգարել համայնքի որոշ անդամների համար տեղեկատվության հասանելիությանը:
- **Երիտասարդներ**. Քաղաքական և իշխանական պաշտոնները սովորաբար զբաղեցնում են տարեց տղամարդիկ: Երիտասարդները մարզում աշխատանքի սահմանափակ հնարավորություններ ունեն, և որոշ երիտասարդներ մշտապես տեղափոխվում են Երևան՝ կրթության և աշխատանքի համար:

Տեղական համայնքներում չկան էական էթնիկական կամ կրոնական տարբերություններ, որոնք կարող են որոշակի խմբերի համար հանգեցնել խոցելիության: Բացահայտված խոցելի խմբերի բովանդակալից մասնակցությունը

հեշտացնելու համար որպես ՇԿՆՊ-ի մաս կիրականացվեն հետևյալ հատուկ գործողությունները:

Կանայք

- Կկազմակերպվեն կին մասնակիցներով ֆոկուս խմբեր և կհավաքվեն նրանց կոնկրետ մտահոգությունները:
- Ծրագիրը կհեշտացնի հանրային քննարկումների ժամանակ խմբերի հանդիպումները՝ տեղեկատվություն և կոնկրետ մտահոգություններ հավաքելու համար:
- Ծրագիրը կունենա նշանակված կին աշխատակից, որը կընդունի և կուսումնասիրի կանանց կողմից ներկայացված բողոքները:
- Ներկայումս տեղական համայնքներում կանանց ասոցիացիաներ չկան, սակայն ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվելու դեպքում նրանց քննարկում կապահովվի:

Աղքատներ

- Ծրագիրը որևէ վճար չի գանձի հանրային քննարկումների գործընթացի որևէ նյութի և գործունեության համար, ինչպիսիք են հանդիպումներին մասնակցությունը, տպագիր նյութերի հանձնումը (հիմնական փաստաթղթերի ոչ տեխնիկական ամփոփագրեր) և այլն:
- Հաղորդակցության որոշ մեխանիզմներ պահանջում են ծախսեր (օրինակ՝ հեռախոսազանգերը, նամակները, էլ. նամակները պահանջում են ինտերնետ հասանելիություն և այլն): Այլընտրանքային անվճար մեխանիզմներ են նախագծվել՝ տնտեսապես անապահով խավերի բովանդակալից մասնակցությունը հեշտացնելու համար (այսինքն՝ փոստարկղեր, բաց հանդիպումներ, բացահայտված փաստաթղթերի հրապարակայնորեն հասանելի տպագիր պատճեններ):
- Բողոքարկման մեխանիզմն անվճար կլինի:

Ինտերնետ հասանելիության բացակայություն

- Բացահայտված փաստաթղթերի տպագիր պատճենները հասանելի կլինեն մոտակա համայնքներում (համայնքապետեր) և բաց քննարկումների ժամանակ:
- Ոչ տեխնիկական ամփոփագրերը, ՆԳՀ-ի և ՇՄԱԳ-ի տպագիր պատճենները կցուցադրվեն տեղամասի մուտքի մոտ և տեղական համայնքներում (համայնքապետեր):
- Բջջային հեռախոսների օգտագործումը տարածված է նույնիսկ աղքատների կամ համակարգչային գրագիտություն չունեցողների շրջանում:
- Ծրագրի ընկերության ներկայացուցիչների/Հանրության հետ կապերի

պատասխանատուի (ՀԿՊ) հեռախոսահամարները կցուցադրվեն տեղամասի մուտքի մոտ և շահագրգիռ կողմերի ներգրավման նյութերի վրա՝ ուղղակի կապը հեշտացնելու համար:

Հաշմանդամներ

- Հատուկ միջոցներ կնախատեսվեն հաշմանդամություն ունեցող շահագրգիռ կողմերի համար, ովքեր ցանկություն կհայտնեն մասնակցել հանդիպումներին կամ բողոքների լուծման մեխանիզմին կամ բացահայտումների հասանելիություն ունենալ: Սա կարող է ներառել տրանսպորտի ապահովումը՝ քննարկման հանդիպումներին մասնակցելու կամ ՀԿՊ-ի՝ տնային տնտեսություններ այցելելու համար: Եթե հաշմանդամություն ունեցող անձը մասնակցության համար պահանջում է (իր ընտանիքի միջոցով կամ ուղղակիորեն) հեշտացնել իր մասնակցությունը, ապա դա կգնահատվի յուրաքանչյուր դեպքի հիման վրա (կախված հաշմանդամությունից):
- Քննարկման հանդիպման հայտարարությունները հատուկ կընդգծեն, որ նման աջակցությունը հասանելի է:

Երիտասարդներ

Ներկայումս տեղական համայնքներում երիտասարդական ասոցիացիաներ չկան, սակայն ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվելու դեպքում նրանց համար քննարկում կապահովվի:

5. Շահագրգիռ կողմերի ներգրավման գործիքներ

Այս բաժինը նկարագրում է այն գործիքները, որոնք օգտագործվելու են/օգտագործվել են ՇԿՆՊ-ի նպատակներն իրականացնելու համար: Շահագրգիռ կողմերի հետ սույն ՇԿՆՊ-ն քննարկելուց հետո կարող են օգտագործվել լրացուցիչ գործիքներ:

Օգտագործվելիք ներգրավման գործիքները, բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- Ծանուցման մեթոդներ. օգտագործվում են բացահայտված շահագրգիռ կողմերին և բնակչությանը ՇԿՆՊ-ի գործունեության և ԲՍԱԳ գործընթացի մասին տեղեկացնելու համար,
- Հրապարակման և քննարկման մեթոդներ. օգտագործվում են շահագրգիռ կողմերին տեղեկատվություն տրամադրելու (միակողմանի) և/կամ նրանց երկկողմանի երկխոսության մեջ ներգրավելու համար, որի միջոցով տեղեկատվությունն ուղարկվում է շահագրգիռ կողմերին, և նրանք իրենց հերթին կարող են արտահայտել իրենց տեսակետներն ու մտահոգությունները ծրագրի վերաբերյալ, և
- Բողոքարկման մեխանիզմ (նկարագրված է Գլուխ 8-ում):

5.1. Ծանուցման մեթոդներ

Ստորև նկարագրված ծանուցման մեթոդները կօգտագործվեն Ծրագրի, ԲՍԱԳ-ի և ԲՍԿՀ-ի վերաբերյալ տեղեկատվության հրապարակման և քննարկման գործողությունների մասին հայտարարելու համար: Սոցիալական հետազոտության ընթացքում տնային տնտեսություններին խնդրել են բացահայտել իրենց նախընտրած հաղորդակցության եղանակը. հարցվածների 41.2%-ը նախընտրում է ծրագրի մասին ծանուցումները ստանալ համայնքներում փակցվող պաստառների միջոցով, 40%-ը՝ հեռախոսով և 8.8%-ը՝ էլեկտրոնային փոստով: Նշենք, որ հարցված տնային տնտեսությունների 10%-ը իրենց նախապատվությունը չեն նշել:

5.1.1 Ուղղակի ծանուցում

Հիմնական շահագրգիռ կողմերի համար (օրինակ՝ համայնքապետեր, համայնքապետարաններ և այլն), ՀԿՊ-ները կարող են նրանց ուղղակիորեն տեղեկացնել շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեության մասին՝ քաղաքավարության այցերի / պաշտոնական հանդիպումների միջոցով:

5.1.2 Նամակներ և էլեկտրոնային հաղորդագրություններ

Նամակները հարմար են շահերի վրա հիմնված շահագրգիռ կողմերին, այդ թվում՝ պետական մարմիններին, հանրային գերատեսչություններին և ՀԿ-ներին ներգրավելու համար:

5.1.3 Ցուցապաստառներ և պաստառներ

Ցուցապաստառները և պաստառներն օգտակար են տեղական համայնքներին և այլ ազդակիր շահագրգիռ կողմերին քննարկման գործունեության մասին տեղեկացնելու համար: Այս մեթոդները պետք է հնարավորության դեպքում կիրառվեն կոնկրետ գործողությունից առնվազն 2 շաբաթ առաջ՝ համապատասխան տեղեկատվության բանավոր տարածումը թույլ տալու նպատակով: Ցուցապաստառների և պաստառների հիմնական վայրերն են համայնքապետարանները, համայնքապետերի գրասենյակները, եկեղեցիները, ֆեյսբուքը, խանութները և սրճարանները: ԲՍԱԳ-ի շահագրգիռ կողմերի ներգրավման փուլում հանրային հանդիպումների պաստառները համայնքապետարանի պաշտոնյաների հետ միասին բաժանվել են տեղական համայնքներում՝ հանդիպման օրվանից 14 օր առաջ: Հանրային քննարկումների ընթացքում խորհրդատուները ցուցադրել են ծրագրի պաստառները, որոնք օգտագործվել են որպես համայնքի անդամներին ծրագրի ցուցադրման մեթոդ: Բացի այդ, բրոշյուրներ են բաժանվել համայնքներին՝ ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակելու նպատակով:

5.1.4 Սոցիալական լրատվամիջոցներ

Տեղական համայնքների անդամները ակտիվ են և մեծ ուշադրություն են դարձնում իրենց համայնքների ֆեյսբուքյան էջերում ցանկացած ծանուցումներին, ընդհանուր նորություններին և տեղական համայնքի տեղի ունենալիք գործունեությանը: Ծրագիրը կօգտագործի ֆեյսբուքյան գրառումները որպես համայնքի անդամներին Ծրագրի և շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեության մասին ծանուցելու մեթոդ:

5.1.5 ԶԼՄ-ների ներգրավում

Լրատվամիջոցներում (թերթեր, հեռուստատեսություն) գովազդն օգտակար է բնակչության որոշակի հատվածներին տեղեկատվություն փոխանցելու համար, սակայն տեղական մակարդակում արդյունավետությունը սահմանափակ է:

ԱՅԳ-1 ծրագիրը երեք անգամ հեռարձակվել է հայկական հեռուստատեսային լրատվական կայաններով: 2021 թ. նոյեմբերի 18-ին Առաջին ալիքի լրատվականով հեռարձակվեց մի հատված, որը հեռուստադիտողներին պատկերացում տվեց Ծրագրի տարածքում դրոնով լուսանկարահանման միջոցով, ինչպես նաև հիմնական տեղեկություններ ապահովեց ՖՎ կայանի բնութագրերի, Հայաստանում կլիմայի փոփոխության առումով Ծրագրի օգուտների, Հայաստանում այլ ՖՎ ծրագրերի և այն մասին, թե ինչպիսի տեսք կունենա կայանը դիտողների համար: ԱՅԳ-1 ծրագրի մեկ այլ հեռուստատեսային հատված ցուցադրվեց 2021 թ. հունիսի 24-ին Առաջին ալիքի լրատվականով: Դա մի փոքր հատված էր կառավարության նիստից, որտեղ ԱՅԳ-1 ծրագիրը մանրամասն քննարկվեց կառավարության մյուս անդամների հետ:

2022 թ. մայիսի 19-ին Հայաստանի Առաջին ալիքի լրատվականով հարցազրույցներ են անցկացրել Ծրագրի բնապահպանության մասնագետ Միքայել Թևոսյանը, Ծրագրի գլխավոր հնագետ Բորիս Գասպարյանը և ՀՊՀՖ-ի ներկայացուցիչ Հայկ Թադևոսյանը: Հարցազրույցը հեռարձակվել է հանրային հեռուստատեսությամբ՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով: Նորությունների հատվածը ներառում էր Ծրագրի տեղամասի, ՖՎ կայանի սարքավորումների տեսանյութեր և տեղեկատվություն ՀՊՀՖ-ի, Մասդարի և տեղամասի տեղադրության մասին, և այլն:

18 նոյեմբեր 2021թ. https://www.youtube.com/watch?v=1j_naXMFGLY

24 հունիս 2021թ. https://www.youtube.com/watch?v=S56cpSBHdKI

19 մայիս 2022թ. https://www.facebook.com/watch/?v=696326331646549

5.2. Հրապարակման և քննարկման մեթոդներ

Ծրագրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության հրապարակումն օգնում է ազդակիր համայնքներին և այլ շահագրգիռ կողմերին հասկանալ ծրագրի ռիսկերը, ազդեցությունները և հնարավորությունները: Շահագրգիռ կողմերին ամբողջական, ճշգրիտ և հասկանալի տեղեկատվություն տրամադրելը կարևոր է բովանդակալից մասնակցությունը հնարավոր դարձնելու համար:

Շահագրգիռ կողմերի քննարկման մեթոդները հետադարձ կապ տրամադրելու և ծրագրի, ԲՍԱԳ-ի և ԲՍԿՀ-ի վերաբերյալ իրենց մտահոգությունները, բողոքները

կամ առաջարկությունները ներկայացնելու մեխանիզմ են ապահովում:

Ծրագրի մասին գրավոր տեղեկատվությունը կհրապարակվի հայերեն և անգլերեն լեզուներով՝ ներքին հաշվառման համար: Մինչ այժմ կիրառվել են կամ կկիրառվեն հետևյալ մեթոդները.

Տեղեկատվության հրապարակում.

- տպագիր պատճենների հրապարակում և
- առցանց հրապարակում:

Տեղեկատվության հրապարակում և քննարկում.

- Դեմ-առ-դեմ հանդիպումներ,
- Հանրային քննարկումներ / բաց հանդիպումներ,
- Ֆոկուս խմբեր,
- Հարցաթերթիկներ/հարցումներ,
- Փոստ և էլեկտրոնային փոստ և
- Առաջարկությունների արկղեր:

5.2.1 Առցանց հրապարակում

Առցանց հրապարակումը թույլ է տալիս արագ և անվճար հասանելի դարձնել փաստաթղթերը բոլոր այն շահագրգիռ կողմերի համար, ովքեր ինտերնետ ունեն: Առցանց հրապարակված փաստաթղթերը կվերբեռնվեն Մասդարի կայքում:

Ծրագրի Վարկատուները նաև առցանց կհրապարակեն ԲևՍ փաստաթղթերի փաթեթը ՝ որպես իրենց ԲևՍ ուսումնասիրության գործընթացի մաս՝ իրենց ներքին ընթացակարգերին համապատասխան:

5.2.2 Տպագիր պատճենների հրապարակում

Տպագիր փաստաթղթերի հրապարակումը անվճար հասանելի կլինի տեղական համայնքների համար Հանրային քննարկումների ժամանակ: Ծրագրին վերաբերող փաստաթղթերը կբացատրվեն հեշտ և պարզ եղանակով, որպեսզի բնապահպանական գիտելիքներ չունեցող համայնքի անդամները կարողանան հասկանալ:

5.2.3 Դեմ-առ-դեմ հանդիպումներ

Դեմ-առ-դեմ հանդիպումները հատկապես հարմար են Ծրագիրը և ԲևՍ կառավարման գործընթացը շահերի վրա հիմնված շահագրգիռ կողմերի հետ քննարկելու համար, քանի որ հանդիպումը կարող է կենտրոնանալ նրանց հատուկ

մտահոգությունների վրա: Կկազմվեն բոլոր հանդիպումների արձանագրությունները:

5.2.4 Հանրային քննարկումներ

Հանրային հանդիպումները շահագրգիռ կողմերին հնարավորություն են տալիս կիսվել իրենց տեսակետներով և կարծիքներով: Ցանկացած անհատի, ով գնում է հանդիպման, թույլատրվում է ներկա գտնվել և կիսվել իր մտահոգություններով, այնպես որ հնարավոր լինի բացահայտել այն շահագրգիռ կողմերին, որոնք նախկինում չեն ճանաչվել: Հանրային հանդիպումները նպաստում են թափանցիկությանը, քանի որ բոլոր շահագրգիռ կողմերը կարող են տեսնել, որ նույն տեղեկատվությունը կիսվում է բոլորի հետ, և համայնքի անդամները կարող են իմանալ իրենց ներկայացուցիչների դիրքորոշման մասին:

Հանդիպումները տեղի են ունեցել և կանցկացվեն հայերենով, որը տեղական լեզուն է: Տեղական առաջատար փորձագետները Հայաստանի մայրաքաղաք Երևանից են: Շահագրգիռ կողմերի ներգրավումը մինչ այժմ իրականացվել է հիմնականում հայերեն լեզվով և կշարունակվի ապագայում ծրագրի տեղեկատվության տարածման ընթացքում: Ցանկության դեպքում ծրագրի տեղեկատվությունը փոխանցելու համար կարող է օգտագործվել նաև անգլերենը, սակայն չի ակնկալվում, որ դա կպահանջվի:

Ծրագիրն ընդունում է ներկայիս գլոբալ ՔՈՎԻԴ-19 իրավիճակը և հետևել է բոլոր անհրաժեշտ նախազգուշական միջոցներին՝ համաձայն կառավարության ուղեցույցների: Հանրային քննարկումներն անցկացվել են այն ժամանակ, երբ երկիրն արգելափակման իրավիճակում չէր և հետևել են կառավարության առողջության և անվտանգության բոլոր համապատասխան ուղեցույցներին:

Մեթոդաբանությունը նկարագրված է ստորև.

Նախնական ներկայացումը ներկաներին ներկայացնում է հիմնական համապատասխան տեղեկատվությունը տեսողական և բանավոր ձևով, որպեսզի յուրաքանչյուր մասնակից ստանա ամբողջական տեղեկատվությունը: Հանդիպման ընթացքում զգալի ժամանակ պետք է հատկացվի շահագրգիռ կողմերին՝ իրենց տեսակետներն արտահայտելու համար: Շահագրգիռ կողմերի բարձրացրած յուրաքանչյուր հարցի պատասխան կտրվի, և բոլոր մեկնաբանությունները, հարցերն ու պատասխանները կգրանցվեն:

Կանանց մասնակցությունը խրախուսելու նպատակով հիմնական քննարկումից հետո կկազմակերպվեն ֆոկուս խմբեր՝ համոզվելու, որ ներկա գտնվող կանայք իրենց կոնկրետ տեսակետներն ու կարծիքները հայտնում են: Եթե որևէ հաշմանդամ անձ օգնություն խնդրի հանրային հանդիպմանը մասնակցելու համար, Ծրագիրը կձեռնարկի անհրաժեշտ միջոցներն՝ ապահովելու, որ նրանք կարողանան ներկա գտնվել կամ տրամադրել համապատասխան տեղեկատվություն և իմանալ նրանց կարծիքը:

Բոլոր հանդիպումներն անցկացվում են հայերեն լեզվով:

5.2.5 Ֆոկուս խմբեր

Ֆոկուս խմբերը թույլ են տալիս քննարկել շահագրգիռ կողմերի որոշակի խմբի հետ, որոնք ավելի քիչ հավանականությամբ կարող են մասնակցել կամ բարձրաձայնել իրենց մտահոգությունները բաց հանրային հանդիպումների ժամանակ: Հաջողված պրակտիկա է հանրային հանդիպումների շրջանակներում տարբեր մասնակիցների հետ ֆոկուս-խմբեր կազմակերպելը՝ կանանց, երիտասարդների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլ խմբերի ավելի կոնկրետ արձագանքները/կարծքիները ստանալու համար:

Հիմնական քննարկման հանդիպումից հետո տեղական համայնքների համար նույն օրը ֆոկուս խմբեր կկազմակերպվեն, որտեղ կներառվեն տղամարդիկ, կանայք, երիտասարդներ և հաշմանդամություն ունեցող անձինք, ովքեր ներկա են Հանրային քննարկումներին:

5.2.6 Հարցումներ

Հարցումները կարող են թույլ տալ շահագրգիռ կողմերին կառուցվածքային ձևով արտահայտել իրենց տեսակետները, որոնք կարող են մշակվել և համակարգվել Ծրագրի կողմից: Անուս կամ ֆորմալ կրթություն չունեցող մարդկանց համար կարող է դժվար լինել լրացնել հարցաթերթիկները: Չի ակնկալվում, որ սա խնդիր կլինի տեղական համայնքներում՝ հաշվի առնելով Հայաստանի 99% գրագիտության մակարդակը: Այնուամենայնիվ, անհրաժեշտության դեպքում աջակցություն կարող է տրամադրվել վարողների / ՀԿՊ-ի (նշանակված լինելու դեպքում) / հաշվարարների միջոցով, որոնք կարող են բացատրել հարցերը, թարգմանել այն լեզվով, որն ավելի հեշտ է պատասխանողի համար և լրացնել պատասխանը պահանջվող ձևաչափով:

Շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացին առնչվող տեղեկատվությունը

հավաքագրվել է տնային տնտեսությունների հիմնական սոցիալական հետազոտության ընթացքում:

5.2.7 Փոստ և էլեկտրոնային փոստ

Շահագրգիռ կողմերի համար կստեղծվեն փոստային և էլ-փոստի հասցեներ, որպեսզի նրանք կարողանան կապ հաստատել ԲՍԱԳ խորհրդատուների / ՀԿՊ-ի (նշանակված լինելու դեպքում) հետ: Էլեկտրոնային փոստը և կոնտակտային համարը կհրապարակվեն ընկերության կայքում և հրապարակվող նյութերում:

5.2.8 Բողոքների արկղեր

Բողոքների արկղերը ցուցադրվել են համայնքապետերի գրասենյակների մոտ 2021 թ. նոյեմբերի 30-ին: Համայնքապետարանների աշխատակիցները վերապատրաստվել են և համաձայնել են ձևաթուղթը տրամադրել այն մարդկանց, ովքեր կցանկանան բողոք գրանցել: Մինչ օրս բողոքների արկղերի միջոցով գրանցված բողոքներ չեն եղել: Հանրային քննարկման բոլոր հանդիպումների մասնակիցներին հիշեցվել է բողոքների արկղերի մասին և խրախուսվել է անհրաժեշտության դեպքում օգտագործել դրանք:

6 ԲևՍ շահագրգիռ կողմերի ներգրավումը մինչ օրս

Սույն գլուխը նկարագրում է ԲՍԱԳ գործընթացի համար ձեռնարկված շահագրգիռ կողմերի ներգրավումը, ներառյալ հետևյալ փուլերը.

- 2021 / 2022 ԲՍԱԳ շրջանակների որոշման քննարկումներ,
- 2022 / 2023 ԲՍԱԿ և ԿՊՎԾ քննարկումներ,
- 2022թ. տնային տնտեսությունների հետազոտություն [տնային տնտեսությունների հետազոտության հիմնական նպատակն էր հավաքել սոցիալական ելակետային տեղեկատվություն, ինչպես նաև հրապարակել ծրագրի մասին տեղեկատվությունը և մասնակիցներից կարծիքներ հավաքել]

Վերոնշյալ ցանկն ուրվագծում է քննարկման հիմնական փուլերը, սակայն հարկ է նշել, որ տեղական իշխանությունները և համայնքները 2021 և 2022 թթ. ընթացքում պարբերաբար տեղեկացվել են ԲՍԱԳ առաջընթացի մասին:

Աղյուսակ 2 Շահագրգիռ կողմերի ներգրավման մինչ օրս իրականացված գործողություններ

Թվական	Ներգրավման տեսակ	Շահագրգիռ կողմերի ներգրավման մանրամասներ
24 հունիս, 2021	Հրապարակում	«ԱՅԳ-1» ծրագրի մասին լուրերի հատվածը հեռարձակվեց Հայկական լրատվական հեռուստաալիքներից մեկով
18 օգոստոս, 2021	Ներգրավում	Հանդիպում Դաշտադեմի համայնքապետի հետ
26 օգոստոս, 2021	Ներգրավում	Հանդիպում Թալինի համայնքապետի հետ
18 նոյեմբեր, 2021	Հրապարակում	«ԱՅԳ-1» ծրագրի մասին լուրերի հատվածը հեռարձակվեց Հայկական լրատվական հեռուստաալիքներից մեկով
30 նոյեմբեր, 2021	Ծանուցում	Ծանուցում համայնքապետարանին առ այն, որ տեղի է ունենալու առաջին Հանրային քննարկումը
30 նոյեմբեր, 2021	Ծանուցում	Ազդակիր համայնքներում տեղադրվեցին պաստառներ, որոնք ծանուցում են համայնքի անդամներին առաջին Հանրային քննարկման անցկացման մասին:
30 նոյեմբեր, 2021	Բողոքների կառավարում	Չորս ազդակիր համայնքներից յուրաքանչյուրում տեղադրվեցին բողոքների արկղեր:
9 դեկտեմբեր, 2021	Հրապարակում	ՆԳՀ-ի նախագիծը տրամադրվեց համայնքապետին և թողնվել համայնքապետարանում, որպեսզի հասանելի լինի հանրությանը:
9 դեկտեմբեր, 2021	Ներգրավում	Թալին համայնքում տեղի ունեցան առաջին Հանրային քննարկումները, որին մասնակցեցին չորս ազդակիր համայնքները:
9 դեկտեմբեր, 2021	Հրապարակում	Քննարկման ժամանակ համայնքի անդամներին բաժանվեց ԱյԳ-1 Ծրագրի մասին գրքույկը
19 մայիս, 2022	Հրապարակում	Հարցազրույց հայկական հեռուստաալիքի հետ՝ ԱՅԳ-1 ծրագրի մանրամասները նկարագրելու նպատակով
16 հունիս, 2022	Ծանուցում	Ծանուցում համայնքապետերին առ այն, որ տեղի է ունենալու երկրորդ Հանրային քննարկումը

21 հունիս, 2022	Ծանուցում	Ազդակիր համայնքներում տեղադրվեցին պաստառներ, որոնք ծանուցում էին համայնքի անդամներին երկրորդ Հանրային քննարկման անցկացման մասին
1 հուլիս, 2022	Ծանուցում	Ֆեյսբուքյան գրառում արվեց համայնքի էջերում՝ տեղեկացնելով համայնքի անդամներին, որ տեղի է ունենալու առաջին Հանրային քննարկումը
1 հուլիս, 2022	Ներգրավում	Թալին համայնքում տեղի ունեցան երկրորդ Հանրային քննարկումները, որին մասնակցեցին չորս ազդակիր համայնքները
1 հուլիս, 2022	Հրապարակում	Քննարկման ժամանակ համայնքի անդամներին բաժանվեց ԱՅԳ-1 Ծրագրի գրքույկը և հրապարակվեց վերլուծության հաշվետվությունը
18 նոյեմբեր, 2022	Ծանուցում	Ծանուցում Թալինի համայնքապետին առ այն, որ տեղի է ունենալու երրորդ Հանրային քննարկումը
21 նոյեմբեր, 2022	Ծանուցում	Ազդակիր համայնքներում տեղադրվեցին պաստառներ, որոնք ծանուցում էին համայնքի անդամներին երրորդ Հանրային քննարկման անցկացման մասին
21 նոյեմբեր, 2022	Ծանուցում	Ֆեյսբուքյան գրառում արվեց համայնքի էջերում՝ տեղեկացնելով համայնքի անդամներին, որ տեղի է ունենալու երրորդ Հանրային քննարկումը
19 նոյեմբեր, 2022	Ծանուցում	Ծանուցում և հրավեր ուղարկվեց ՀԿ-ներին և Gold Standard/Ոսկե ստանդարտին երրորդ Հանրային քննարկման համար
20 դեկտեմբեր, 2022	Ներգրավում	Թալին համայնքում տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը և անցկացվեց կանանց հետ ֆոկուս խումբ
20 դեկտեմբեր, 2022	Ներգրավում	Դաշտադեմ համայնքում տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը և անցկացվեց կանանց հետ ֆոկուս խումբ
20 դեկտեմբեր, 2022	Ներգրավում	Աշնակ համայնքում տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը և անցկացվեց կանանց հետ ֆոկուս խումբ
20 դեկտեմբեր, 2022	Ներգրավում	Կաթնաղբյուր համայնքում տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը և անցկացվեց կանանց հետ ֆոկուս խումբ
20 դեկտեմբեր, 2022	Հրապարակում	Համայնքի անդամներին բաժանվեց ոչ տեխնիկական ամփոփագիրը և համայնքի անդամների հետ քննարկման ժամանակ հրապարակվեց ՇՄԱԳ-ը
5 ապրիլ, 2023	Ծանուցում	Համայնքապետերին ծանուցման միջոցով և Ֆեյսբուքում ծանուցում ուղարկվեց Թալին, Դաշտադեմ, Աշնակ և Կաթնաղբյուր համայնքներին առ այն, որ տեղի կունենա երրորդ Հանրային քննարկումը
12 ապրիլ, 2023	Ներգրավում	Թալինի համայնքներում տեղի ունեցան չորրորդ Հանրային քննարկումները՝ Աշնակից և Կաթնանբյուրից մասնակցությամբ, և անցկացվեց կանանց հետ ֆոկուս խումբ
12 ապրիլ, 2023	Ներգրավում	Դաշտադեմ համայնքում տեղի ունեցավ չորրորդ Հանրային քննարկումը և անցկացվեց կանանց հետ ֆոկուս խումբ

6.1 Շահագրգիռ կողմերի ներգրավման շրջանակների որոշում

2021թ.-ի 4-րդ եռամսյակում կազմակերպվել են մի շարք դեմ-առ-դեմ հանդիպումներ, իսկ 2021թ.-ի 4-րդ եռամսյակում և 2022թ.-ի 1-ին եռամսյակում կազմակերպվել է հանրային քննարկում: Ծրագրի համար շահագրգիռ կողմերի ներգրավման առաջին գործողությունն իրականացվել է 2021թ. օգոստոսի 18-ին, որպես ԲՍԱԳ շրջանակների որոշման փուլի քննարկումների մի մաս, որի շրջանակներում իրականացվել է հանդիպում Դաշտադեմի համայնքապետի հետ: Էներջի Ըդվայզորիի և ՀՊՀՖ -ի անդամները հանդիպել են համայնքապետ Գագիկ Ավետիսյանի հետ: Շահագրգիռ կողմերի ներգրավման երկրորդ հանդիպումն անցկացվել է 2021 թ. օգոստոսի 26-ին, կազմակերպվել է հանդիպում Թալինի համայնքապետի հետ: Էներջի Ըդվայզորիի և ՀՊՀՖ -ի անդամները հանդիպել են համայնքապետ Սարգիս Արամյանի հետ: Այնուհետ, 2021 թ. դեկտեմբերի 9-ին համայնքում կազմակերպվել է հանրային քննարկում: Հանրային քննարկման և համայնքապետերի հետ հանդիպումների ժամանակ հրապարակվել է Ծրագրին առնչվող տեղեկատվությունը: Էներջի Ըդվայզորիի հայկական թիմը՝ պարոն Գարիկ Արաբյան (Ծրագրի համակարգող-Հայաստան), պարոն Արսեն Հայրիյան (Սոցիալական և շահագրգիռ կողմերի ներգրավման փորձագետ) և Միքայել Թևոսյան (բնապահպանական փորձագետ), ղեկավարում էին հանդիպումները շահագրգիռ կողմերի հետ, ինչին աջակցում էին Գրիգոր Պետրոսյանը և Գրիգոր Չոբանյանը ՀՊՀՖ-ից:

Շրջանակների որոշման փուլի հանդիպումների ընթացքում Խորհրդատուների կողմից բարձրացված հարցերի և շահագրգիռ կողմերի արձագանքների ամփոփումը ներկայացված է ստորև.

6.1.1 Դաշտադեմի համայնքապետարան - համայնքապետ

Դաշտադեմի համայնքապետի հետ հանդիպումը տեղի ունեցավ 2021 թ. օգոստոսի 18-ին: Ծրագրի և ԲՍԱԳ գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվեց պարոն Գագիկ Ավետիսյանին: Բացատրվեցին Ծրագրի հիմնական բնութագրերը, այդ թվում՝ տեղամասի մակերեսը, բոլոր զգայուն օբյեկտներից հեռավորությունները, հիմնական գործողությունները, աշխատանքների շրջանակը, մուտքի ճանապարհները, պլանավորված արևային էլեկտրակայանի հզորությունը, սոցիալական և բնապահպանական ոլորտների վրա դրական և բացասական

ազդեցությունները, մեղմացման միջոցառումները և այլընտրանքային տարբերակները: Ծրագրին և ԲՍԱԳ գործընթացին վերաբերող տեղեկատվությունը (Շրջանակների որոշման ՈՏԱ-ի և ՆԳՀ-ի տպագիր պատճենը) տրամադրվեց պարոն Գագիկ Ավետիսյանին: Էներջի Ըդվայզորին նաև բացատրեց, որ թիմը կենտրոնացած է Ծրագրի տարածքի մանրամասն ԲՍԱԳ ուսումնասիրություն իրականացնելու վրա, և որ ավելի ուշ կանցկացվի Հանրային քննարկում: Հաշվի առնելով տեղամասի գտնվելու վայրը՝ խորհրդատուները հարցեր տվեցին հողօգտագործման վերաբերյալ: Համայնքապետը բացատրեց, որ տարածքը, ինչպես և համայնքային այլ հողատարածքները, օգտագործվում է որպես արոտավայր: Խորհրդատուները բացատրեցին, որ ակնկալվում է, որ փոքր տնտեսական տեղաշարժեր տեղի կունենան համայնքային արոտավայրերի առնչությամբ: Պարոն Ավետիսյանին բացատրվեց նաև Մասդարի կողմից համայնքներին տրվող վճարման պայմանագիրը (ըստ ՀՀ օրենքի՝ որպես նվիրատվություն դասակարգված): Էներջի Ըդվայզորիի թիմը պարոն Ավետիսյանին տվեց մի շարք հարցեր՝ կապված Ծրագրի տեղամասի և դրա նախկին հողօգտագործման հետ: Պարոն Ավետիսյանը ներկայացրեց իր ակնկալիքները ծրագրից և հայտնեց իր մտահոգությունները Ծրագրի վերաբերյալ, որը մանրամասն ներկայացված է ստորև.

Դաշտադեմի համայնքապետն ընդգծեց իր ակնկալիքները Ծրագրից, այդ թվում՝ ՀՀ կառավարության որոշման համաձայն Կառուցապատողի կողմից համայնքին նվիրատվության ստացումը, աշխատատեղերի հնարավորությունները և Դաշտադեմից մոտեցնող ճանապարհի կառուցումը՝ Ծրագրի տեղամասին մոտ այլ հողերի հասանելիությունը հեշտացնելու համար: Էներջի Ըդվայզորին արձանագրեց պարոն Ավետիսյանի ակնկալիքները և բացատրեց, որ համայնքը կստանա նվիրատվության վճարը Մասդարի կողմից արդեն իսկ կնքված պայմանագրի համաձայն: Էներջի Ըդվայզորին նաև հավաստիացրեց պարոն Ավետիսյանին, որ ՖՎ կայանի շինարարության փուլում Ծրագիրն աշխատանքի տեղավորելու հնարավորություններ կստեղծի տեղական համայնքի անդամների համար: Քննարկվեց մուտքային ճանապարհը, և Էներջի Ըդվայզորին հավաստիացրեց, որ իրենք այս տեղեկատվությունը կփոխանցեն Մասդարի նախագծային թիմին՝ նրանց քննարկման համար:

Պարոն Ավետիսյանը նաև մտահոգություն հայտնեց, հիմնականում, որ կառավարությունը Դաշտադեմ համայնքը կմիավորի մի քանի այլ համայնքների, այդ թվում՝ Թալինի հետ: Պարոն Ավետիսյանի մտահոգությունը կապված էր նվիրատվության բաշխման հետ, և արդյոք այն կբաժանվի միավորման պայմանագրում ընդգրկված բոլոր համայնքների միջև: Էներջի Ըդվայզորին նշեց, որ նվիրատվության պայմանագիրը չի բաշխվի միավորման պայմանագրում ընդգրկված բոլոր համայնքների միջև, և որ համաձայնեցված գումարը կլինի միայն Դաշտադեմի և Թալինի համար, քանի որ Ծրագիրն օգտագործելու է այդ համայնքների հողերը: Նա հայտնեց, որ նվիրատվության մեջ չի նշվում, թե ինչ գումար կարող է օգտագործել Դաշտադեմ համայնքը: Էներջի Ըդվայզորին ընդգծեց, որ նվիրատվության վճարը պետք է օգտագործվի համայնքի սոցիալական ենթակառուցվածքների բարելավման համար, և նշեց, որ համայնքը պետք է Մասդարի կողմից հաստատում ստանա ծրագրի համար՝ նախքան նվիրատվության գումարն օգտագործելը, որպեսզի երաշխավորվի գումարի շահավետ օգտագործումը:

Պարոն Ավետիսյանն իր մտահոգությունը հայտնեց նվիրատվության ստացման հետ կապված: Նա նշեց, որ կցանկանար այդ գումարն օգտագործել մինչև միավորման գործընթացի ավարտը: Էներջի Ըդվայզորին արձանագրեց այս խնդրանքը:

Ցուցապաստառ – Հանդիպում Դաշտադեմի համայնքապետի հետ

6.1.2 Թալինի համայնքապետարան - համայնքապետ

Թալինի համայնքապետի հետ հանդիպումը տեղի ունեցավ 2021 թ. օգոստոսի 26-ին: Ծրագրի և ԲՍԱԳ գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցվեց

պարոն Սարգիս Արամյանին: Բացատրվեցին Ծրագրի հիմնական բնութագրերը, այդ թվում՝ տեղամասի մակերեսը, բոլոր զգայուն օբյեկտներից հեռավորությունները, հիմնական գործողությունները, աշխատանքների շրջանակը, մուտքի ճանապարհները, պլանավորված արևային էլեկտրակայանի հզորությունը, սոցիալական և բնապահպանական ոլորտների վրա դրական և բացասական ազդեցությունները, մեղմացման միջոցառումները և այլընտրանքային տարբերակները: Ծրագրին և ԲՍԱԳ գործընթացին վերաբերող տեղեկատվությունը (Շրջանակների որոշման ՈՏԱ-ի և ՆԳՀ-ի տպագիր պատճենը) տրամադրվեց պարոն Սարգիս Արամյանին: Էներջի Ըդվայզորին նաև բացատրեց, որ թիմը կենտրոնացած է Ծրագրի տարածքի մանրամասն ԲՍԱԳ ուսումնասիրություն իրականացնելու վրա, և որ ավելի ուշ կանցկացվի Հանրային քննարկում: Հաշվի առնելով տեղամասի գտնվելու վայրը՝ խորհրդատուները բացատրեցին, որ ակնկալվում է, որ շատ քիչ տնտեսական տեղաշարժեր տեղի կունենան համայնքային արոտավայրերի առնչությամբ: Պարոն Արամյանին բացատրվեց նաև Ծրագրի կողմից համայնքներին տրվող վճարման պայմանագիրը (ըստ ՀՀ օրենքի՝ որպես նվիրատվություն դասակարգված): Էներջի Ըդվայզորիի թիմը պարոն Սարգիս Արամյանին ուղղեց մի շարք հարցեր՝ կապված Ծրագրի տեղամասի և դրա նախկին հողօգտագործման հետ: Սարգիս Արամյանը ներկայացրեց իր ակնկալիքները ծրագրից և հայտնեց իր մտահոգությունները Ծրագրի վերաբերյալ: Նա ընդգծեց, որ Ծրագրից իր ակնկալիքներն են Թալինում բնակվող համայնքի անդամներին աշխատանքի հնարավորություններ ապահովելը: Էներջի Ըդվայզորին վստահեցրեց պարոն Սարգսին, որ Ծրագիրն աշխատանքի տեղավորելու հնարավորություններ կստեղծի տեղական համայնքի անդամների համար ՖՎ կայանի կառուցման փուլում: Պարոն Սարգիսը նշեց, որ ինքը բավարարված է դրանով և նշեց, որ այլ մտահոգություններ չունի Ծրագրի վերաբերյալ:

Ցուցապաստառ – Հանդիպում Թալինի համայնքապետի հետ

6.1.3 Առաջին Հանրային քննարկում

Հանրային քննարկումը տեղի ունեցավ 2021 թ. դեկտեմբերի 9-ին: 2021 թ. նոյեմբերի 30-ին համայնքապետարանում և մարզպետարանում տեղադրվեցին պաստառներ, իսկ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվեց ծանուցում: Պաստառների վրա ընդգծված էր քննարկման հանդիպման վայրն ու ժամը: Դրանք նաև ընդգծում էին, որ տրանսպորտը հասանելի կլինի ճամփորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նոյեմբերի 30-ին տեղեկացվեց նաև համայնքապետը: Քննարկման ընթացքում պահպանվել են հակահամաճարակային միջոցառումները (սոցիալական հեռավորություն, դիմակներ, ախտահանիչներ): Նոյեմբերի 30-ին բողոքների արկղեր տեղադրվեցին նաև համայնքապետերի գրասենյակներում, որպեսզի մարդիկ ներկայացնեն Ծրագրի վերաբերյալ դիտողությունները կամ մտահոգությունները:

Առաջին հանրային քննարկման ընթացքում մասնակիցներին բաժանվեցին Ծրագրի հիմնական բնութագրերը ներկայացնող բրոշյուրներ, այդ թվում՝ Ծրագրի մասին տեղեկատվությունը, տեղամասի գտնվելու վայրը, աշխատանքների շրջանակը, դրական և բացասական ազդեցությունները, մեղմացման միջոցառումները և այլն: Ամբողջ տեղեկատվությունը տրամադրվել է հայերեն:

Համայնքի ներկա անդամներին ներկայացվեց նաև PowerPoint -ով շնորհանդես, որը բացատրում էր Ծրագիրը, Ծրագրի հիմնական գործողությունները և օգուտները, ռիսկերն ու ազդեցությունները: Շնորհանդեսի նպատակը հիմնականում համայնքի

բնակիչներ հանդիսացող ներկաներին տեղեկատվություն տրամադրելն էր:

Շրջանակների որոշման փուլում անցկացված հանրային քննարկմանը մասնակցեցին կառավարման մարմինները, կառուցապատողների ներկայացուցիչները, խորհրդատուները և համայնքի 15 անդամներ: Շնորհանդեսից հետո խորհրդատուները ձայն տվեցին համայնքի անդամներին՝ ցանկացած հարց կամ մտահոգություն արտահայտելու համար: Քննարկման մանրամասները ներկայացված են ստորև:

Ողջույնի խոսք հղվեց քննարկմանը ներկա տեղական համայնքի անդամներին: Ներկաներին տեղեկացվեց, որ «Մասդար Արմենիա 1» ՓԲԸ-ն հանդիսանում է վերականգնվող էներգիայի ծրագրի մշակող և նախատեսվում է Արագածոտնի մարզի Թալին և Դաշտադեմ համայնքների վարչական տարածքում կառուցել և շահագործել արևային էլեկտրակայան, որը կկոչվի ԱՅԳ-1:

Էներջի Ըդվայզորիի անդամները վարեցին այս քննարկումը և ներկայացան համայնքի ներկա գտնվող անդամներին: Նրանք նշեցին, որ Ի-Էյ-ը ԱՅԳ-1 ծրագրի հայաստանյան պաշտոնական խորհրդատուն է: Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի: Ներկայացվեց օրենքը և նկարագրվեց, թե ինչպես է այն կիրառվում Ծրագրի նկատմամբ, որպեսզի համայնքի անդամները հասկանան ներգրավված գործընթացները և թե որքան կարևոր դեր են խաղում հանրային քննարկումներն այս օրենքում: Քննարկվեց Ծրագրի կատեգորիան և այն դասակարգվեց որպես «Բ» կատեգորիայի ծրագիր: Համայնքի անդամներին տեղեկացվեց նաև, որ Ծրագրի «Բ» կատեգորիան կներառի 4 հանրային քննարկումների իրականացում: Ներկաներին տեղեկացվեց, որ դեկտեմբերի 9-ի հանդիպումը առաջին հանրային քննարկումն էր, և որ մյուս 3 քննարկումների ժամկետները կորոշվեն ապագայում՝ նկարագրված օրենքի համաձայն բավարար ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով: Ներկաներին տեղեկացվեց նաև, որ Ծրագիրը կհամապատասխանի միջազգային չափանիշներին, քանի որ Ծրագիրը ֆինանսավորելու են միջազգային վարկատու բանկերը, և այդ ստանդարտներն ունեն բնապահպանական և սոցիալական կատարողականի հատուկ պահանջներ:

Հրապարակվեցին Ծրագրի հիմնական առանձնահատկությունները, ինչպիսիք են տեղամասի գտնվելու վայրը, աշխատանքների շրջանակը, դրական և բացասական ազդեցությունները, ակնկալվող մեղմացման միջոցառումները և այլն, և ընդգծվեց, որ հետագա մանրամասն տեղեկատվությունը կներկայացվի առաջիկա հանրային քննարկումների ժամանակ, երբ Ծրագրի աշխատանքային նախագիծը և ՇՄԱԳ հաշվետվությունը պատրաստ լիեն ներկայացման: Քննարկվեց առաջարկվող ելակետային հետազոտությունների և ուսումնասիրությունների շրջանակը:

Ներկաներին տեղեկացվեց, որ իրենք կարող են իրենց կարծիքները, մտահոգությունները և առաջարկությունները հայտնել ոչ միայն հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների արկղերի միջոցով:

Համայնքի ներկայացուցիչները հետաքրքրվեցին վերականգնվող էներգետիկայի ոլորտում Հայաստանի Հանրապետության ներուժով: Հարցին պատասխանելով՝ Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչները տեղեկացրին համայնքի ներկայացուցչին, որ մինչև 2020 թ. արևային էներգիան արդեն կազմում էր աշխարհում էներգիայի ընդհանուր արտադրության 30%-ը, և Հայաստանը նույնպես այս ոլորտում ունի մեծ հնարավորություններ:

Խորհրդատուները շարունակեցին նկարագրել Ծրագրի ընդհանուր առանձնահատկությունները, իրականացված աշխատանքը, հնարավոր ռիսկերը, բացասական ազդեցությունները և նման ազդեցությունները մեղմելուն ուղղված նախնական ակնկալվող միջոցառումները: Կարևորվեց, որ Ծրագրի տարածքը, աշխատանքների շրջանակը, մուտքի ճանապարհները, պլանավորված արևային էլեկտրակայանի հզորությունը և ընդհանուր առմամբ Ծրագիրը չպետք է ունենան մեծ բնապահպանական ռիսկեր, սակայն ընդգծվեց, որ կենսաբազմազանության և պատմամշակութային ժառանգության առումով որոշ բնապահպանական ռիսկեր նկատվել են հետազոտության սկզբնական փուլերում:

Ներկաներին ցուցադրվեց նախատեսվող «Այգ-1» արևային էլեկտրակայանի քարտեզը Google Earth Pro հավելվածի միջոցով: Ներկայացված քարտեզը նկարագրում էր Ծրագրի տարածքի սահմանները, ինչպես նաև զգայուն

օբյեկտներից հեռավորությունները և մուտքի ճանապարհների սկզբնական հատակագիծը: Կարևորվեց, որ քարտեզում կարող են կատարվել որոշ փոփոխություններ՝ պայմանավորված մանրամասն հետազոտությամբ կամ այլ հանգամանքներով, և այդ դեպքում բոլոր փոփոխությունները հասանելի կլինեն նաև շահագրգիռ անձանց/կազմակերպությունների համար: Քննարկման մասնակիցներին տեղեկացվեց, որ կիրականացվեն համապատասխան մանրամասն դաշտային հետազոտություններ՝ նշված հնարավոր ռիսկերի մասին բավարար տեղեկատվություն հավաքելու համար: Ներկաների հետ քննարկվեցին մեղմացման միջոցառումները, այդ թվում՝ թե ինչպես են դրանք հետագայում մշակվելու դաշտային հետազոտությունների ընթացքում և դրանից հետո:

Քննարկվեցին համայնքի համար սոցիալական ռիսկերն ու ազդեցությունները՝ նկարագրելով ինչպես բացասական, այնպես էլ դրական ազդեցությունները: Մասնակիցները հետաքրքրվեցին, թե ինչ դրական ազդեցություն կունենա Ծրագիրն ընդհանրապես և մասնավորապես Թալին համայնքի համար:

Ծրագրի արդյունքում դրական ազդեցությունները նկարագրվեցին ի պատասխան վերը մանրամասնված հետաքրքրության՝ նշելով, որ համայնքում զբաղվածության մակարդակը կավելանա հիմնականում շինարարության ընթացքում, այսինքն՝ կստեղծվեն նոր աշխատատեղեր: Ավելին, Թալին և Դաշտադեմ համայնքները նվիրատվության պայմանագրի արդյունքում իրենց բյուջեում կստանան դրամական փոխհատուցում, որը կուղղվի համայնքների զարգացման ծրագրերին: Որպես դրական ազդեցություն քննարկվեց նաև մուտքի ճանապարհների կառուցումը:

Համայնքի ներկայացուցիչները հետաքրքրվեցին, թե քանի աշխատատեղ կստեղծվի Ծրագրի շինարարության և շահագործման փուլերում: Ներկաները տեղեկացվեցին, որ շինարարության փուլում կստեղծվեն համայնքի անդամների համար հարմար մի քանի տասնյակ աշխատատեղեր (այսինքն՝ ոչ մասնագիտացված), իսկ շահագործման փուլում՝ ավելի քիչ (մոտ 10) և նշեցին, որ ավելի կոնկրետ տվյալներ հասանելի կլինեն հաջորդ հանրային քննարկումների ժամանակ:

Մասնակիցները խնդրեցին պարզաբանել, թե ինչ բացասական ազդեցություններ կունենա Ծրագիրը և որոնք են հիմնական ռիսկերը: Էներջի Ըդվայզորիի

ներկայացուցիչը նշեց, որ շինարարության փուլում հիմնական բացասական ազդեցությունը լինելու է փոշին, այլ արտանետումները, ինտենսիվ երթևեկությունը, օտարերկրյա աշխատողների հոսքը, ջրի օգտագործումը, և այլն: Կարևորվեց նաև, որ նշված բացասական ազդեցությունները կլինեն ժամանակավոր: Քննարկվեցին նաև պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտների հետ կապված ռիսկերը, համայնքի անդամներին տեղեկացվեց, որ կիրականացվեն մանրամասն ուսումնասիրություններ և կմշակվեն համապատասխան միջոցառումներ՝ ուղղված բացասական ազդեցությունների բացառմանը և մեղմացմանը:

Նշվեց նաև, որ համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերն ու առաջարկները կարող են հայտնել ոչ միայն հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների արկղերի միջոցով: Հանրային քննարկումը փակվեց և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած հարցի բարձրաձայնման համար: Այլ հարցեր չհնչեցին, և նիստը փակվեց:

Ցուցապաստառ – Համայնքներին քննարկման հանդիպման մասին ծանուցման ձևանմուշ (առաջին հանդիպում)

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով **2021թ. դեկտեմբերի 9-ին ժամը 14:00-ին** ՀՀ Արագածոտնի մարզի **Թալինի համայնքապետարանում** տեղի կունենան «Մասդար Հայաստան 1» ՓԲԸ կողմից ձևավորվող ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի վարչական տարածքում «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումներ (առաջին հանրային քննարկում):
Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ՝ ք.Երևան, Ադոնցի փողոց 10, «Ի Էյ ԷՆԵՐՋԻ ԸԴՎԱՅԶՈՐԻ» ՍՊԸ գրասենյակում:

Լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք կապ հաստատել մեզ հետ հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:

Հեռախոս. 060 75 05 34

Էլ.փոստ.info@advisory.am

6.1.4 Երկրորդ Հանրային քննարկում

2022 թ. հուլիսի 1-ին, ժամը 10:00-ին Թալինի համայնքապետարանում տեղի ունեցավ երկրորդ Հանրային քննարկումը: Մինչև 2022 թ. հունիսի 21-ի քննարկումը, Դաշտադեմ և Կաթնաղբյուր համայնքապետարանի և մարզպետարանի,

Բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում և համայնքների ֆեյսբուքյան էջերում տեղադրվել են պաստառներ: Պաստառների վրա ընդգծված էր քննարկման հանդիպման վայրն ու ժամը: Դրանք նաև ընդգծում էին, որ տրանսպորտը հասանելի կլինի ճամփորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Թալինի քաղաքապետը երկրորդ քննարկման մասին ծանուցվել է 2022 թ. հունիսի 16-ին: Քննարկման ընթացքում ապահովվել են հակահամաճարակային միջոցառումները (սոցիալական հեռավորություն, դիմակներ, ախտահանիչներ):

Ներկա էին Թալինի քաղաքապետարանի, Ծրագրի ընկերության՝ «Մասդար Արմենիա 1» ՓԲԸ-ի, Էներջի Ըդվայզորի ՍՊԸ-ի, ՀՀ Բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոնի» (այսուհետ՝ ՊՈԱԿ) ներկայացուցիչներ և համայնքի անդամներ:

Երկրորդ Հանրային քննարկման ընթացքում մասնակիցներին բաժանվեցին Ծրագրի հիմնական բնութագրիչները, այդ թվում՝ Ծրագրի վերնագրի, տարածքի, աշխատանքների շրջանակի, դրական և բացասական ազդեցությունների, մեղմացման միջոցառումների և այլնի մասին տեղեկություններ ներկայացնող բրոշյուրներ՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար:

Համայնքի ներկա անդամներին ներկայացվեց նաև PowerPoint -ով շնորհանդես, որը բացատրում էր Ծրագիրը, Ծրագրի հիմնական գործողությունները, հնարավոր ռիսկերը և ակնկալվող օգուտները: Շնորհանդեսի նպատակն էր հեշտացնել տեղեկատվության տրամադրումը «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ:

Երկրորդ Հանրային քննարկումներին ընդհանուր առմամբ մասնակցել է 34 մարդ (8-ը՝ Աշնակից, 9-ը՝ Դաշտադեմից, 9-ը՝ Կաթնաղբյուրից և 8-ը՝ Թալինից): Քննարկմանը ներկա համայնքի անդամներին ողջունեցին և տեղեկացրին, որ այս Հանրային քննարկման ընթացքում իրականացվում է «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը:

Այնուհետ ներկաներին դիմեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի փորձագետը: Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի: Ներկայացվեց օրենքը և նկարագրվեց, թե ինչպես է այն կիրառվում Ծրագրի նկատմամբ, որպեսզի համայնքի անդամները հասկանան ներգրավված գործընթացները և թե որքան կարևոր դեր են խաղում Հանրային քննարկումներն այս օրենքում: Քննարկվեց Ծրագրի կատեգորիան և այն, թե ինչու է այն դասվել «Բ» կատեգորիայի ծրագիր, որը պահանջում է քննարկումների 4 փուլ: Ներկայացվեց արևային կայանի կառուցման և շահագործման տեղամասի առնչությամբ Նախագծային ընկերության կողմից իրականացվող աշխատանքների փորձաքննության ընթացակարգը, իրավական պահանջները և համառոտ նկարագրությունը: Ներկաներին տեղեկացվեց, որ այդ օրվա (հուլիսի 1-ին) հանդիպումը երկրորդ Հանրային քննարկումն էր, և որ մյուս 2 քննարկումների ժամկետները կորոշվեն ապագայում՝ բավարար ժամանակ առաջ նախապես ծանուցում ուղարկելով՝ նկարագրված օրենքի պահանջի համաձայն: Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագրի ԲՍԱԳ մշակման հետ կապված բոլոր գործողությունները կկարգավորվեն Հայաստանի օրենսդրությամբ և համապատասխան միջազգային արձանագրություններով: Համայնքի անդամներին տեղեկացվեց, որ ՊՈԱԿ-ն ուշադիր կվերահսկի ԲՍԱԳ հաշվետվության մշակումը և կներկայացնի դրա իրականացման համար անհրաժեշտ պայմանները:

Նշվեց նաև, որ համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերն ու առաջարկները կարող են հայտնել ոչ միայն հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների արկղերի միջոցով:

Ընթացիկ ելակետային հետազոտությունների վերաբերյալ թարմացում արվեց, և համայնքի անդամներին տեղեկացվեց, որ դրա արդյունքները կներկայացվեն երրորդ Հանրային քննարկումների ժամանակ:

Բնակիչներից մեկը հարցրեց, թե Թալինի վարչական տարածքից որքան հող է

նախատեսվում հատկացնել այս գործունեության իրականացման համար: Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչն ընդգծեց, որ Թալինի վարչական տարածքից կտրամադրվի մոտ 170 հա հողատարածք: Արդյունքում մասնակիցների հետ սկսվեց քննարկում, որի ընթացքում բնակիչներից ոմանք ընդգծեցին, որ տվյալ տարածքի տրամադրումն իր ազդեցությունը կունենա անասնապահության վրա, քանի որ այդ տարածքներն օգտագործվում են որպես արոտավայրեր: Ներկաները պարզաբանում խնդրեցին, թե ինչպիսի դրական ազդեցություններից կարող է օգտվել համայնքը ԱՅԳ-1 ծրագրի իրականացման արդյունքում:
Նկարագրվեցին Ծրագրի դրական ազդեցությունները, մասնավորապես սոցիալական ասպեկտների առնչությամբ: Ներկաներին տեղեկացվեց, որ շինարարությունը կտևի մոտ երկու տարի, որի ընթացքում կպահանջվի զգալի աշխատուժ տեղական համայնքներից՝ ստեղծելով աշխատատեղերի հնարավորություն: Համայնքի ներկա գտնվող անդամներին տեղեկացվեց, որ շինարարության փուլում իրենց կիրավիրեն աշխատանքի ընդունելու համար: Բացի այդ, ներկաներին նկարագրվեց նվիրատվության պայմանագիրը, որում նշվեց, որ գումար կտրամադրվի Թալին և Դաշտադեմ համայնքներին՝ համայնքների սոցիալական ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման համար: Արածեցման հետ կապված, հովիվներին տեղեկացվեց, որ մշակվում է Կենսամիջոցների վերականգնման ծրագիր՝ միջազգային չափանիշներին համապատասխան: Հովիվներին տեղեկացվեց, որ նրանց համար կկազմակերպվեն կենսամիջոցների վերականգնման հատուկ միջոցառումներ Ծրագրի տեղամասի հետ կապված կորցրած հողերի պատճառով՝ հիմնվելով տեղանքի արտադրողականության հաշվարկի վրա: Մասնակիցները հաստատեցին, որ տեղանքը զգալիորեն չի օգտագործվել այլ տնտեսական գործունեության համար, և որ կա այլընտրանքային արոտավայր:

Քննարկման ընթացքում արձանագրվեցին ներկաների բոլոր կարծիքներն ու առաջարկությունները, և ներկաներին տեղեկացվեց, որ դրանք հաշվի կառնվեն հաջորդ փուլերում, ինչպես նաև կմշակվեն համապատասխան միջոցառումներ՝ Ծրագրի բացասական հետևանքները նվազեցնելու համար: Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ լրացուցիչ հարցեր չտրվեցին, և նիստը փակվեց:

Ցուցապաստառ – Քննարկումների 2- րդ փուլ– Շրջանակների որոշում

6.2 Սոցիալական հետազոտություն

Իրականացվել է տնային տնտեսությունների հետազոտություն՝ Ծրագրի տարածքի վերաբերյալ ելակետային սոցիալական տեղեկատվություն ստանալու համար: Բացի այդ, հարցումը ներառում էր որոշ հարցեր՝ Ծրագրի, մտահոգությունների և հաղորդակցման նախընտրելի մեթոդների վերաբերյալ հարցվողի տեղեկացվածությունը գնահատելու նպատակով: Այս վերջին ասպեկտներն առնչվում են ՇԿՆՊ-ին և, հետևաբար, բերված են այստեղ:

Տնային տնտեսությունների հետազոտության հարցաշարի փորձարկումից հետո տնային տնտեսությունների հետազոտության դաշտային աշխատանքն իրականացվել է 2022 թ. օգոստոսին: Հետազոտության ժամանակ օգտագործված մոտեցումը ներառում էր Աշնակի 10, Կաթնաղբյուրի 10, Դաշտադեմի 25 և Թալինի 35 տնային տնտեսությունների հարցումը: Յուրաքանչյուր տնային տնտեսություն ընտրվել է փողոցների պատահական ընտրությամբ, որտեղ յուրաքանչյուր փողոցի յուրաքանչյուր երկրորդ տնային տնտեսությունը հարցվել է:

Թալինում և Դաշտադեմում հարցվող տնային տնտեսությունների ավելի մեծ թիվ է ընտրվել, քանի որ Ծրագրի հողերը ձեռք են բերվել այս համայնքներից, և Թալինն ավելի մեծ բնակչություն ունի: Ավելին, նախնական ուսումնասիրություններից պարզվել է, որ այս համայնքներում ավելի շատ հողօգտագործողներ կան, որոնք որոշակի աստիճանի տնտեսական տեղաշարժ կունենան՝ համեմատած Աշնակի և Կաթնաղբյուրի հետ: Ծրագրի տեղական համայնքներում ընդհանուր առմամբ կիրառվել է 80 հարցաթերթ: Այս բաժինն ամփոփում է սոցիալական հետազոտության արդյունքները՝ կապված ծրագրի մասին իրազեկվածության, մտահոգությունների և հաղորդակցության նախապատվությունների հետ: Ելակետային հետազոտության ամբողջական արդյունքները, որոնք կենտրոնանում են սոցիալ-տնտեսական ելակետային տվյալների վրա, ներկայացված են ԲՍԱԳ հաշվետվությունում:

Հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների ճնշող մեծամասնությունը (82.5%) հայտնել է, որ լսել է Ծրագրի մասին: Հարցվածների իրազեկվածության մակարդակն ավելի բարձր է Թալին և Դաշտադեմ համայնքներում, քան հարևան Աշնակ և Կաթնաղբյուր գյուղերում: Նրանք նշել են, որ լսել են Ծրագրի մասին հանրային քննարկումների շրջանակներում, պաստառների և բանավոր խոսքի միջոցով: Բոլոր մասնակիցներին տեղեկացվել են լրացուցիչ Հանրային քննարկումների և դրանց մասին հայտարարությունների մասին: Ստորև բերված գրաֆիկը պատկերում է Ծրագրի մասին տեղեկացվածության մակարդակը:

Նկար 1 Ծրագրի մասին տեղեկացվածության մակարդակն ըստ բնակավայրերի

Ազդակիր չորս համայնքների բնակիչները Ծրագրի մասին տեղեկացված են տարբեր մակարդակներով: Մեծ թվով մարդիկ (31 հոգի) լսել էին Ծրագրի մասին, սակայն կոնկրետ մանրամասներ չգիտեին:

Կային նաև համեմատաբար մեծ թվով մարդիկ (9 հոգի), ովքեր մասնակցել էին համայնքի հանդիպումներին և տեղեկացված էին Ծրագրի և ԲՍԱԳ-ի մանրամասներին առնչվող հարցերի մասին: Տնային տնտեսությունների մեծ մասը (60.0%) տեղյակ էր, որ Ծրագրի տարածքն օգտագործվում է որպես արոտավայր, 5.0%-ը կարծում էր, որ այն ընդհանրապես չի օգտագործվում, իսկ 35.0%-ը ընդհանրապես տեղյակ չէր՝ այն օգտագործվում է, թե ոչ:

Այս հարցի այլ պատասխանները թվարկված են ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 3 Հարցված համայնքների անդամների պատասխանները Ծրագրի մասին

Ինչ գիտեն համայնքի անդամները	Պատասխանների թիվը
Տեղյակ եմ, որ ՖՎ կայան է կառուցվելու, կոնկրետ մանրամասներ չգիտեմ	31
Մասնակցել եմ համայնքային հանդիպումներին, լավ տեղեկացված եմ Ծրագրի հետ կապված հարցերին:	9
Թալինի և Դաշտադեմի համայնքային հողատարածքները, որոնք օգտագործվում են որպես արոտավայր, կվաճառվեն ՖՎ կայանի կառուցման համար	6
Գյուղացիները զգալի մտահոգություններ ունեն Ծրագրի	3

վերաբերյալ	
Գիտեմ, որ Ծրագիրը լինելու է Հայաստանի ամենամեծ ՖՎ կայանը	3
Ծրագրի մասին հեռուստատեսությամբ եմ լսել	2
Լսել եմ, որ Ծրագրի տարածքում կան հնագիտական գտածոներ և խաչքարեր	1
ՖՎ կայանը պետք է աջակցություն տրամադրի լուսավորության, ճանապարհների վերանորոգման և կոյուղու համակարգի բարելավման համար	1
Ծրագրի տարածքում էկոհամակարգը կփոխվի շինարարության պատճառով	1
Ճանապարհները պետք է վերանորոգվեն, սակայն Ծրագիրը հրաժարվում է դա անել	1

6.3 ԲՍԱԳ ԵՎ ԿՊՎԾ քննարկումներ

Մինչև երրորդ հանրային քննարկումը, ի լրումն շրջանակների որոշման հանդիպումների համար ձեռնարկված ստանդարտ հայտարարության և հրապարակման, իրականացվել են մի շարք լրացուցիչ քայլեր՝ ԱՅԳ-1 Ծրագիրը ածխածնի արտանետումների քվոտայի Gold Standard/Ոսկե ստանդարտ հարթակում գրանցելու համար:

Քննարկումը թիրախավորել է հետևյալ խմբերը (որոնցից մի քանիսը՝ ի լրումն նախորդ փուլերում քննարկումներին մասնակցած շահագրգիռ կողմերի, ինչպես նշված է ստորև).

- Տեղի բնակիչները, համայնքները և/կամ ներկայացուցիչները, որոնք ակնկալվում է, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդեցություն (բացասական ազդեցություն կամ շահառուներ) կկրեն ծրագրից կամ կարող են շահագրգռված լինել ծրագրով, հրավիրվել և տեղեկացվել են համապատասխան ամսաթվերի և ժամերի վերաբերյալ: Հողի սեփականության իրավունք ունեցող շահագրգիռ կողմերը (կիրառելի չէ այս Ծրագրի համար), հողօգտագործողները և մարգինալացված անհատներն ու խմբերը նույնպես տեղեկացվել են:
- Տեղական քաղաքականություն մշակողներ և տեղական իշխանությունների ներկայացուցիչներ:
- Պետական կառավարական պաշտոնյաներ:
- Տեղական հասարակական կազմակերպություններ (ՀԿ-ներ), ինչպես

նկարագրված է շահագրգիռ կողմերի վերլուծության բաժնում:

- Gold Standard-ի ներկայացուցիչ [ընդգրկված չէր շրջանակների որոշման քննարկումներում]:
- Gold Standard-ի աջակից համապատասխան միջազգային ՀԿ-ներ [որոնք կոնկրետ ներառված չեն եղել շրջանակների որոշման քննարկումներում];
- Շահագրգիռ կողմերը հրավիրվել են ֆիզիկական հանդիպումից 30 օր առաջ:
- Ծրագրի ոչ տեխնիկական ամփոփում, ներառյալ տեղեկատվություն ծրագրի նախագծման, տեխնոլոգիայի, նպատակների, մասշտաբի, տևողության և իրականացման պլանի (մինչ այժմ հայտնի) վերաբերյալ, և ինչպես այն կարող է ազդել տարբեր շահագրգիռ կողմերի խմբերի վրա, այդ թվում՝ հետևյալը.
    - Ծրագրի տնտեսական, սոցիալական և բնապահպանական ազդեցությունների ամփոփում:
    - Կայուն զարգացման նպատակներին (ԿԶՆ) ծրագրի հնարավոր ներդրումների ամփոփում:
    - Ֆիզիկական հանդիպման ժամանակ քննարկվելիք տարբեր թեմաներ ամփոփող միջոցառման նախնական օրակարգ:
    - Ծրագիրը մշակողի ներկայացուցչի կոնտակտային տվյալները՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:
    - Միջոցներ և մեթոդներ՝ հետագա հետադարձ կապ ապահովելու նրանց համար, ովքեր չեն կարող միանալ ֆիզիկական հանդիպմանը:

6.3.1 Երրորդ Հանրային քննարկում – Թալին համայնք

Թալինի համայնքապետարանի շենքում 2022 թ. դեկտեմբերի 20-ին տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը: Թալինի համայնքապետարանում և մարզպետարանում մեկ ամիս առաջ պաստառներ տեղադրվեցին, իսկ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվեց ծանուցում նախատեսված քննարկման օրվանից 30 օր առաջ: Պաստառների վրա ընդգծված էր քննարկման հանդիպման վայրն ու ժամը: Դրանք նաև ընդգծում էին, որ տրանսպորտը հասանելի կլինի մոտակա գյուղերից կամ Թալինից ճանապարհորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Նոյեմբերի 18-ին ծանուցվեց նաև Թալինի քաղաքապետը: Ապահովվեցին հակահամաճարակային միջոցներ (դիմակներ, ախտահանիչներ), սակայն դրանք չօգտագործվեցին, քանի որ դա այլևս չի պահանջվում ազգային կանոնակարգերի համաձայն: ՀԿ-ների և Gold Standard-ի ներկայացուցիչներին ևս ուղարկվեցին հրավիրատոմսեր քննարկման

օրվանից 30 օր առաջ, և տրամադրվեց առցանց մասնակցելու հնարավորություն: Ներկաների համար պատրաստվել էր շնորհանդես, սակայն պրոյեկտորի հետ կապված տեխնիկական խնդիրների պատճառով այս հանդիպմանը հնարավոր չեղավ օգտագործել Powerpoint սահիկաշարը: Փոխարենը ներկայացման նյութի տպագիր պատճենները տրամադրվեցին համայնքի ներկա անդամներին: Շնորհանդեսի նպատակն էր հեշտացնել «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության, շրջանակների ուսումնասիրության արդյունքների և ԲՍԱԳ ընթացիկ հետազոտությունների և ԿՊՎԾ ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվությունը: ԲՍԱԳ-ի ոչ տեխնիկական ամփոփագրի նախագիծը նույնպես բաժանվեց մասնակիցներին՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու նպատակով: Այն մանրամասնում էր ծրագրի մասին ընդհանուր տեղեկությունները, ինչ է իրենից ներկայացնում արևային էներգիան, ազդեցությունները և պոտենցիալ ռիսկերը շինարարության և շահագործման փուլերում և դրական ազդեցությունները, որոնք Ծրագիրը կունենա շինարարության և շահագործման փուլերում:

Քննարկմանը ներկա տեղական համայնքի անդամներին ողջույնի խոսք հղվեց և նրանց տեղեկացրին, որ այս քննարկումը մանրամասն կներկայացնի «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Ներկաներին հիշեցվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի: Ներկաներին տեղեկացվեց, որ հանդիպումը (դեկտեմբերի 20-ին) երրորդ Հանրային քննարկումն էր, և որ վերջնական քննարկման ժամկետները կորոշվեն հետագայում՝ նախապես նկարագրված օրենքի համաձայն բավական ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով:

Քննարկմանը ներկա գտնվողներին տեղեկացվեց, որ նախորդ քննարկման ժամանակ քննարկված դաշտային հետազոտություններն ավարտվել են, Ծրագրի տարածքի կենսաբազմազանության հետազոտությունն ավարտվել է, արձանագրվել են պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտները և մշակվել են շինարարության ընթացքում հնարավոր բնապահպանական ռիսկերը մեղմելուն ուղղված միջոցառումները: Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը քննարկեց շինարարության փուլում ԱՅԳ-1 ծրագրի ազդեցությունը համայնքների վրա: Քննարկվեց այն աշխատողների թիվը, որոնք կպահանջվեն շինարարության փուլի համար, քանի որ դա խնդրել էին նախորդ հանդիպման մասնակիցները: Հստակեցվեց, որ

շինարարության փուլում կպահանջվի 200-500 աշխատող: Ներկաներին տեղեկացվեց, որ այդ վարձված աշխատողներից ոչ բոլորն են լինելու տեղական, այլ 30-70%-ը կընտրվեն տեղական համայնքներից՝ եթե նրանք հետաքրքրված լինեն: Քննարկվեց շահագործման փուլում զբաղվածության հարցը, և ներկաներին տեղեկացվեց, որ շահագործման հիմնական փուլում կպահանջվի 20-25 աշխատող, որոնցից մոտավորապես 50%-ը կկազմեն տեղացիները:

Այնուհետև դաշտային հարցումներն իրականացրած ներկայացուցիչները ներկաներին ներկայացրեցին իրենց արդյունքները:

Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին ներկաներին և ընդգծվեց, որ կենսաբազմազանության հետազոտությունն իրականացվել է տարվա 3 սեզոնների ընթացքում (գարուն, ամառ, աշուն): Ներկաներին տեղեկացվեց, որ հետազոտության ժամանակաշրջանում Կարմիր գրքում գրանցված ոչ մի այնպիսի կենդանատեսակ և բուսատեսակ չի հայտնաբերվել, որը զգալիորեն օգտվում է տեղանքից, միայն որոշ թռչնատեսակներ են բացահայտվել, որոնք թռչում են տարածքի վրայով կամ օգտագործում են ավելի մեծ տարածք:

Նշվեցին հնագիտական դաշտային աշխատանքների մեթոդներն ու արդյունքները, և փորձագետները նկարագրեցին հայտնաբերված հնագիտական գտածոների քանակը և տեսակները:

Թալինի քաղաքապետարանի ավագանու ներկայացուցիչը հետաքրքրվեց՝ հնարավո՞ր է արդյոք պահպանել հայտնաբերված պատմամշակութային բոլոր օբյեկտները: Հնագիտական ուսումնասիրությունների թիմի ներկայացուցիչը մանրամասնեց համապատասխան միջոցառումներն ու սկզբունքները, որոնք մշակվել են պահպանմանը նպաստելու համար: Ազդեցություններից խուսափելը նախընտրելի տարբերակն է, և ցանկացած գտածո կուսումնասիրվի և կփաստաթղթավորվի (և հնարավորության դեպքում կտեղափոխվի) մինչև ազդեցությունները: Ներկաներին տեղեկացվեց նաև, որ շինարարության ընթացքում ներկա են լինելու մասնագետներ՝ ապահովելու, որ որոշակի հնագիտական գտածոներ չխախտվեն շինարարական աշխատանքներից, և որ ազդեցության ենթարկված ցանկացած գտածո խորապես ուսումնասիրվի մինչև որևէ ազդեցություն:

Հնագիտական խմբի ներկայացուցիչը բացատրեց նաև, որ լինելու է Մշակութային

ժառանգության կառավարման պլան, որը կիրականացվի: Կարևորվեց, որ շինարարական աշխատանքների ընթացքում ընթացակարգը կլինի դադարեցնել շինարարությունը, երբ հայտնաբերվում են հնագիտական արժեք ունեցող իրեր:

Թալին բնակավայրի ներկայացուցիչները հարց տվեցին՝ հնարավո՞ր է արդյոք պահպանել ներկայացված պատմամշակութային օբյեկտները և դրանք օգտագործել ապագա զբոսաշրջային նպատակներով: Նշվեց, որ հնագիտական աշխատանքների ընթացքում հայտնաբերված որոշ օբյեկտներ կարող են օգտագործվել զբոսաշրջության նպատակով: Լավ պահպանված ուրուր և աշտարակ և ագլոմերատիվ բնակավայր են հայտնաբերվել տեղամասի սահմանից անմիջապես դուրս (տեղամասի սահմանը փոփոխվել է կառավարության կողմից՝ դրանք բացառելու համար), և դրանք կարող են հետաքրքրություն առաջացնել զբոսաշրջիկների համար:

Արածեցման հետ կապված՝ հովիվներին տեղեկացվեց, որ մշակվում են կենսամիջոցների վերականգնման միջոցառումներ, և քննարկվող միջոցառումները կարող են ներառել մասնագիտական դասընթացների կազմակերպում, ինչպես նաև ձմռան ամիսներին պատվաստանյութերի և փոքր քանակությամբ անասնակերի տրամադրում: Ձայնը տրվեց ներկաներին ՝ առաջարկվող Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու համար: Բնակավայրի ներկայացուցիչները նշեցին, որ ներկայացված միջոցառումների իրականացումն օգտակար չի համարվել և առաջարկեցին վերը նշված միջոցառումների փոխարեն քննարկել ու մշակել այլ տարբերակներ: Նրանց կարծիքները գրանցվեցին, և ներկաներին հավաստիացվեց, որ իրենց կարծիքը հաշվի կառնվի կենսամիջոցների վերականգնման միջոցառումները մշակելիս: Ներկաները խրախուսվեցին առաջարկել իրենց առաջարկած միջոցառումները, և խորհրդատուներն ընդգծեցին, որ լրացուցիչ պոտենցիալ միջոցառումները կներկայացվեն միջազգային և ազգային ԿՊՎԾ/Սոցիալական փորձագետի կողմից հաջորդ հանդիպումներում:

ԿՊՎԾ-ի փոխհատուցման միջոցառումների հետ կապված՝ մասնակիցները հարցրին Ծրագրի տեղամասի համար օգտագործվող համայնքային հողատարածքի համար Թալին համայնքի հետ կնքվող նվիրատվության պայմանագրի մասին: Քննարկումներ տեղի ունեցան բնակավայրի սոցիալական աջակցության համար պայմանագրով նախատեսված գումարի վերաբերյալ:

Համայնքի ներկա անդամներից մեկը նշեց, որ հողատարածքները, որոնք օգտագործվելու են Ծրագրի կողմից, օգտագործվում են որպես արոտավայրեր և հետաքրքրվեց, թե արդյոք ծրագիրը կարող է կառուցվել այլ տեղ: Էներջի Ըդվայզորին արձանագրեց այս խնդրանքը և բացատրեց հովիվներին փոխհատուցելու ԿՊՎԾ միջոցառումները: Ներկաները քննարկեցին հողի կադաստրային արժեքները, հողի տրամադրման պատճառները և Ծրագրի նշանակությունը Հայաստանի Հանրապետության համար: Էներջի Ըդվայզորին բացատրեց Կառավարության կողմից կազմակերպված նվիրատվությունը համայնքներին՝ կապված հողի հետ և նշեց հողի արժեքի վերաբերյալ մեկնաբանությունները, որոնք պետք է փոխանցվեն կառավարությանը:

Տեղական համայնքի մի մասնակից հարցրեց, թե ինչ բացասական բնապահպանական ազդեցություն կունենա կայանի կառուցումը և արդյոք այն ունի ճառագայթային ազդեցություն: Ներկաներին տեղեկացվեց, որ արևային կայանները էլեկտրամագնիսական ճառագայթման հետևանքով առաջացած էական բացասական ազդեցություն չունեն շրջակա միջավայրի վրա: Համայնքի անդամին բավարարեց տրված այս պատասխանը.

Բնակիչները Ծրագրի ներկայացուցիչներին խնդրեցին հաջորդ՝ 4-րդ քննարկման ժամանակ ավելի մանրամասն ներկայացնել գործունեության արդյունքում դրական սոցիալ-տնտեսական ազդեցությունները ինչպես համայնքի, այնպես էլ պետության համար: Այս խնդրանքը գրանցվեց, և համայնքի անդամներին վստահեցրին, որ այդ խնդրանքը հնարավոր կլինի բավարարել:

Նշվեց նաև, որ համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերն ու առաջարկները կարող են արտահայտել ոչ միայն Հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների և առաջարկների արկղերի միջոցով: Քննարկման ընթացքում արձանագրվեցին ներկաների բոլոր կարծիքներն ու առաջարկությունները, և ներկաներին տեղեկացվեց, որ դրանք հաշվի կառնվեն հաջորդ փուլերում, ինչպես նաև կմշակվեն համապատասխան միջոցառումներ Ծրագրի բացասական հետևանքները նվազեցնելու համար: Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ հարցեր չտրվեցին, նիստը փակվեց:

Էներջի Ըդվայզորին Թալին համայնքի ներկայացուցչից հետաքրքրվեց՝ արդյոք

բնակավայրի բնակիչները այցելում են Ծրագրի տարածք՝ որպես պատմամշակութային արժեք ունեցող վայր, ինչին համայնքի ներկայացուցիչն ասաց, որ ոչ, բնակիչները չեն այցելում ծրագրի տարածք՝ պատմական կամ մշակութային նպատակներով՝ միայն անասունների արածեցման համար:

Հանդիպմանը մասնակցած կանանց հետ առանձին ֆոկուս-խմբային քննարկում տեղի ունեցավ, որի ընթացքում նրանց հարցրին, թե կա՞ն հարցեր, որոնք չեն կարողացել կամ չեն ցանկացել բարձրացնել քննարկման ընթացքում, ինչի պատասխանը բացասական էր:

Ի սկզբանե նախատեսվում էր ևս մեկ ֆոկուս-խմբային քննարկում կանցկացվի հովիվների հետ, սակայն հաշվի առնելով, որ անասուն ունեցող մասնակիցներն ամենաակտիվ մասնակիցներն էին, առանձին ֆոկուս խումբ չկազմակերպվեց, քանի որ հովիվները նշեցին, որ իրենք արդեն բարձրացրել են իրենց մտահոգությունները:

Ցուցապաստառ – 3-րդ քննարկման հանդիպում- Թալին համայնք

6.3.2 Երրորդ Հանրային քննարկում – Դաշտադեմ համայնք

2022 թ. դեկտեմբերի 20-ին Դաշտադեմի համայնքապետարանում տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը: Նոյեմբերի 22-ին համայնքապետարանում և մարզպետարանում տեղադրվեցին պաստառներ, իսկ նախատեսված քննարկման օրվանից 30 օր առաջ շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվեց ծանուցում: Պաստառներն ընդգծում էին քննարկման հանդիպման վայրն ու ժամը: Դրանք նաև ընդգծում էին, որ ճանապարհորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտը հասանելի կլինի:

Նոյեմբերի 18-ին ծանուցվեցին նաև Դաշտադեմի համայնքապետը և Թալինի քաղաքապետը: Հանդիպման ժամանակ առկա էին հակահամաճարակային միջոցները (դիմակներ, ախտահանիչներ), սակայն դրանք չօգտագործվեցին, քանի որ դա այլևս չէր պահանջվում ազգային կանոնակարգերի համաձայն: Բացի այդ, քննարկումից 30 օր առաջ հրավիրատոմսեր ուղարկվեցին նաև ՀԿ-ների և Gold Standard-ի ներկայացուցիչներին և տրամադրվեց առցանց մասնակցելու հնարավորություն: Շնորհանդեսի նյութի տպագիր պատճենները բաժանվեցին համայնքի ներկա անդամներին: Դրանք համայնքի ներկա անդամներին բացատրում էին Ծրագիրը, Ծրագրի հիմնական գործողությունները և օգուտները: Շնորհանդեսի նպատակն էր դյուրացնել «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին տեղեկատվությունը: ԲՍԱԳ-ի ոչ տեխնիկական ամփոփագրի նախագիծը նույնպես բաժանվեց մասնակիցներին՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար: Այն մանրամասնում էր ծրագրի մասին ընդհանուր տեղեկությունները, թե ինչ է արևային էներգիան, ազդեցությունները շինարարության և շահագործման փուլերում և այն դրական ազդեցությունները, որոնք ծրագիրը կունենա շինարարության և շահագործման փուլերի ընթացքում:

Տեղական համայնքի ներկա գտնվող անդամներին ողջույնի խոսք հղվեց և նրանց տեղեկացրին, որ այս քննարկումը մանրամասն կներկայացնի «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման առաջընթացը:

Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի, և որ հանդիպումը (դեկտեմբերի 20-ին) երրորդ Հանրային քննարկումն էր, և որ վերջնական քննարկման ժամկետները կորոշվեն ապագայում՝ նախկինում նկարագրված օրենքի համաձայն բավական ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով:

Ներկաներին տեղեկացվեց, որ ներկայացված Ծրագրի շրջանակներում Դաշտադեմ բնակավայրի անունից համայնքապետը նախապես ներկայացրել է 3 ակնկալիք՝ շրջանակների որոշման փուլի առաջին հանդիպման ժամանակ: Այդ ակնկալիքները ներառում էին. ներդրումների/սոցիալական ծրագրերի իրականացում բնակավայրում, Դաշտադեմ բնակավայրից աշխատուժի ներգրավում արևային կայանի կառուցման և շահագործման փուլերում և մուտքի ճանապարհի կառուցում,

որն անցնելու է նշված բնակավայրով:

Քննարկմանը ներկաներին տեղեկացվեց, որ նախորդ քննարկման ժամանակ քննարկված դաշտային հետազոտություններն ավարտվել են, Ծրագրի տարածքի կենսաբազմազանության հետազոտությունն ավարտվել է, արձանագրվել են պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտները և մշակվել են շինարարության ընթացքում հնարավոր բնապահպանական ռիսկերը մեղմելուն ուղղված միջոցառումները: Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին ներկաներին և ընդգծվեց, որ կենսաբազմազանության հետազոտությունն իրականացվել է 3 սեզոնների ընթացքում (գարուն, ամառ, աշուն): Ներկաներին տեղեկացվեց, որ այդ հետազոտության ժամանակաշրջանում Կարմիր գրքում գրանցված ոչ մի կենդանատեսակ և բուսատեսակ չի հայտնաբերվել, որ զգալիորեն օգտվում է տվյալ տեղանքից, միայն որոշ տեսակներ են հայտնաբերվել, որոնք թռչում են տեղամասի վրայով կամ օգտագործում են ավելի լայն տարածք: Ներկաներին ներկայացվեցին նաև հնագիտական հետազոտության մանրամասները: Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին համայնքի ներկա գտնվող անդամներին: Ներկաներին տեղեկացվեց հետազոտության արդյունքների մասին և որ հետազոտության ընթացքում մոտ 253 հնագիտական օբյեկտներ են հայտնաբերվել տեղամասում և հարակից տարածքում, և նկարագրվեց հնագիտական արժեքների վրա ազդեցության մեղմացման մոտեցումը: Ներկաներին տրվեցին լրացուցիչ մանրամասներ ԲևՍ ծրագրի հիմնական ազդեցությունների, ինչպես նաև ԲևՍ ռիսկերը նվազագույնի հասցնելուն ուղղված մշակված մեղմացնող միջոցառումների վերաբերյալ:

Հետևելով նախորդ քննարկման ժամանակ բարձրացված հարցերից մեկին՝ ներկաներին ներկայացվեցին նախատեսվող մուտքի ճանապարհների վերաբերյալ մանրամասներ, ցուցադրվեց քարտեզ, որտեղ մանրամասն ներկայացված էր արևային կայան տանող ճանապարհներից մեկը, որը կարող էր անցնել Դաշտադեմ բնակավայրով: Քարտեզը նկարագրվեց ներկաներին, և նրանց տեղեկացրին, որ ի սկզբանե առաջարկված տարբերակը (Դաշտադեմի միջով մուտքի ճանապարհ կառուցելու համար) նպատակահարմար չէր: Դաշտադեմի համայնքապետի կողմից առաջարկվեց այլ մուտքի ճանապարհ: Ներկաներին տեղեկացվեց, որ ներկայացված տարբերակը կքննարկվի, և քննարկման արդյունքների մասին կտեղեկացվի Դաշտադեմ բնակավայրին:

Դաշտադեմ համայնքի ներկայացուցիչներից մեկը նշեց, որ անհրաժեշտ է վերանայել նվիրատվության պայմանագրի և համայնքներին Կառավարության և Ծրագրի կողմից այլ աջակցության համար նախատեսված գումարը: Նրանք նշեցին, որ ներկայիս տնտեսական պայմաններում գումարը չի համապատասխանում այն արժեքին, որը հաստատվել է նախնական պայմանագրի ժամանակ: Բացի այդ, արևային այլ կայանների համեմատ այս ծրագրի շրջանակներում 1 հա-ի համար նախատեսված գումարն ավելի քիչ է: Դաշտադեմի ներկայացուցիչը նշեց նաև, որ այլ արևային կայանների համար նախատեսված հողամասը վաճառվել է կադաստրային գնով: Այս կարծիքն արձանագրվեց, և համայնքի անդամներին տեղեկացվեց, որ Մասդարը կտեղեկացվի և կհաղորդի կառավարությանը, իսկ քննարկման արդյունքները չորրորդ քննարկման ժամանակ կներկայացվեն Դաշտադեմ բնակավայրին: Խորհրդատուները բացատրեցին, որ հողի փոխանցման և նվիրատվության գումարը սահմանվել է Կառավարության, և ոչ թե Ծրագրի կողմից, և որ նախկին արևային կայաններն օգտագործում էին ճանապարհների մոտ գտնվող հողերը, այլ ոչ թե ԱՅԳ-1 Ծրագրին հատկացված համեմատաբար մեկուսացված/անհասանելի հողատարածքը:

Համայնքի ներկայացուցիչները հետաքրքրվեցին, թե ինչ սկզբունքով է որոշվել նվիրատվության չափը: Ներկաներին տեղեկացվեց, որ նվիրատվության չափը որոշել է կառավարությունը:

Համայնքի ներկայացուցիչը կարծիք հայտնեց Ծրագրի ազդեցությունների մասին՝ նշելով, որ արևային կայանի կառուցումը բացասաբար է անդրադառնում անասնաբուծության վրա և հարցրեց, թե ինչպիսի փոխհատուցում է նախատեսվում: Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը բացատրեց Կենսամիջոցների վերականգնման գործընթացը և մշակվող միջոցառումները և նշեց, որ քննարկվող տարբերակները կարող են բաղկացած լինել մասնագիտական դասընթացների կազմակերպումից, ինչպես նաև ձմռան ամիսներին պատվաստանյութերի և փոքր քանակությամբ անասնակերի տրամադրումից: Խոսքը տրվեց ներկաներին՝ առաջարկվող Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու համար: Բնակավայրի ներկայացուցիչները նշեցին, որ ներկայացված միջոցառումների իրականացումը համարվում է անարդյունավետ (որոշ պատվաստանյութեր արդեն տրված են կառավարության կողմից, հովիվները հետաքրքրված չեն դասընթացներով): Բնակավայրի ներկայացուցիչները նշեցին նաև, որ Դաշտադեմում տարբեր ծրագրերի շրջանակներում դասընթացներ են կազմակերպվել, սակայն բնակիչները չեն ցանկանում մասնակցել, և որպես կանոն

ներկա են միայն գյուղապետարանի աշխատակիցները: ՏԻՄ-ն առաջարկեց, որ վերոնշյալ միջոցառումների փոխարեն իրենք կնախընտրեն այդ միջոցներով իրականացնել սոցիալական այլ ծրագրեր: Օրինակ՝ գյուղի մանկապարտեզի տարեկան ծախսերի ապահովումը կամ մանկապարտեզի շենքի վերակառուցումն ու տանիքին արևային մարտկոցների տեղադրումը: Խորհրդատուները նշեցին, որ ԿՊՎԾ-ի կողմից նախապատվությունը կտրվի մասնավորապես հովիվներին ուղղված միջոցառումներին: Արձագանքները գրանցվեցին, և ներկաներին հավաստիացվեց, որ իրենց կարծիքը հաշվի կառնվի կենսամիջոցների վերականգնման միջոցառումներն իրականացնելիս, և նրանք խրախուսվեցին տրամադրել հետագա կարծիքներ և գաղափարներ կենսամիջոցների վերականգնման տարբերակների վերաբերյալ:

Նշվեց նաև, որ համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերն ու առաջարկները կարող են հայտնել ոչ միայն Հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների արկղերի միջոցով: Քննարկման ընթացքում արձանագրվեցին ներկաների բոլոր կարծիքներն ու առաջարկությունները, և ներկաներին տեղեկացվեց, որ դրանք հաշվի կառնվեն հաջորդ փուլերում, ինչպես նաև կմշակվեն համապատասխան միջոցառումներ Ծրագրի բացասական հետևանքները նվազեցնելու համար: Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ հարցեր չտրվեցին, նիստը փակվեց:

Հանդիպման փակումից հետո Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը հանդիպում ունեցավ Դաշտադեմ համայնքի ներկայացուցչի հետ և հարցրեց, արդյոք բնակավայրի բնակիչներն այցելում են ծրագրի տարածք՝ որպես պատմամշակութային արժեք ներկայացնող վայր, ինչին համայնքի ներկայացուցիչը բացասական պատասխան տվեց: Նա ասաց, որ բնակիչները ծրագրի տարածք չեն այցելում պատմամշակութային նպատակներով, միայն անասուններին արածեցնելու համար: Հանդիպմանը մասնակցած կանանց հետ առանձին ֆոկուս-խմբային քննարկում տեղի ունեցավ, որի ընթացքում նրանց հարցրին, արդյոք կա՞ն հարցեր, որոնք չեն կարողացել կամ չեն ցանկացել բարձրացնել քննարկման ընթացքում, ինչին բացասական պատասխան տրվեց: Կանայք նշեցին նաև, որ իրենց համայնքում նախկինում նույնպես դասընթացներ են կազմակերպվել, սակայն համայնքից ոչ ոք չի մասնակցում, և դասընթացներն օգտակար չեն: Ի սկզբանե նախատեսվում էր ևս մեկ ֆոկուս-խմբային քննարկում ունենալ հովիվների հետ, սակայն հաշվի առնելով, որ բոլոր մասնակիցներն անասուններ ունեին և զբաղվում

էին անասնապահությամբ, առանձին ֆոկուս խումբ չկազմակերպվեց հովիվների համար:

Ցուցապաստառ – 3-րդ Հանրային քննարկում – Դաշտադեմ համայնք

6.3.3 Երրորդ Հանրային քննարկում – Աշնակ համայնք

2022 թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 14:00-ին Աշնակի համայնքապետի մոտ տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը: Դեկտեմբերի 21-ին ցուցապաստառներ տեղադրվեցին համայնքապետարանի և մարզպետարանի մոտ: Բացի այդ, նախատեսված քննարկումից 30 օր առաջ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքէջում տեղադրվեց տեղեկություն: Պաստառների վրա ընդգծված էր քննարկման հանդիպման վայրն ու ժամը: Դրանք նաև ընդգծում էին, որ ճանապարհորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտը հասանելի կլինի: Նոյեմբերի 18-ին ծանուցվեց նաև Թալինի քաղաքապետարը: Հակահամաճարակային միջոցները (դիմակներ, ախտահանիչներ) հասանելի էին, սակայն դրանք չօգտագործվեցին, քանի որ դա այլևս չի պահանջվում ազգային կանոնակարգերի համաձայն: Բացի այդ, հրավեր նամակներ ուղարկվեցին ՀԿ-ների և Gold Standard-ի ներկայացուցիչներին քննարկման օրվանից 30 օր առաջ, և նրանց ուղարկվեցին նաև հրապարակման նյութերը, սակայն նրանք ուղղակիորեն չմասնակցեցին: Շնորհանդեսի նյութի տպագիր պատճենները բաժանվեցին համայնքի ներկա անդամներին: Դրանք բացատրում էին Ծրագիրը, Ծրագրի հիմնական գործողությունները և օգուտները համայնքի ներկա անդամներին: Շնորհանդեսի նպատակն էր դյուրացնել «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին տեղեկատվությունը:

Ոչ տեխնիկական ամփոփագիրը նույնպես բաժանվեց մասնակիցներին՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար: Այն մանրամասնում էր ծրագրի մասին ընդհանուր տեղեկությունները, թե ինչ է արևային էներգիան, ազդեցությունները շինարարության և շահագործման փուլերում և դրական ազդեցությունները, որոնք ծրագիրը կունենա շինարարության և շահագործման փուլերի ընթացքում:

Տեղական համայնքի ներկա անդամներին ողջույնի խոսք ասվեց և նրանց տեղեկացրին, որ այս քննարկումը մանրամասն կներկայացնի «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի: Բացատրվեց օրենքը և թե ինչպես է այն կիրառվում Ծրագրի նկատմամբ, որպեսզի համայնքի անդամները հասկանան ներգրավված գործընթացները և ինչպիսի կարևոր դեր են խաղում Հանրային քննարկումները սույն օրենքում: Ներկաներին տեղեկացվեց, որ այդ օրվա (դեկտեմբերի 20-ի) հանդիպումը երրորդ Հանրային քննարկումն էր, և որ վերջնական քննարկման ժամկետները կորոշվեն ապագայում՝ նախապես նկարագրված օրենքի համաձայն բավական ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով:

Քննարկման ներկաներին տեղեկացվեց, որ նախորդ քննարկման ժամանակ քննարկված դաշտային հետազոտությունն ավարտվել է, Ծրագրի տարածքի կենսաբազմազանության հետազոտությունն ավարտվել է, պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտներն արձանագրվել են, ինչպես նաև մշակվել են շինարարության ընթացքում հնարավոր բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները:

Այնուհետ, դաշտային հարցումներն իրականացրած ներկայացուցիչները ներկաների հետ քննարկեցին իրենց բացահայտումները: Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին ներկաներին և ընդգծվեց, որ կենսաբազմազանության հետազոտությունն իրականացվել է 3 սեզոնների ընթացքում (գարուն, ամառ, աշուն): Ներկաներին տեղեկացվեց, որ հետազոտության ժամանակաշրջանում Կարմիր գրքում գրանցված և տարածքը պարբերաբար օգտագործող որևէ կենդանատեսակ և բուսատեսակ չի հայտնաբերվել: Ներկաներին ներկայացվեցին նաև հնագիտական հետազոտության մանրամասները: Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին համայնքի ներկա անդամներին: Ներկաներին տեղեկացվեց հետազոտության արդյունքների մասին և որ հետազոտության ընթացքում մոտ 253 հնագիտական օբյեկտներ են հայտնաբերվել տեղամասում և հարակից տարածքներում:

Ներկաներից մեկը հարցրեց, թե արևային կայանի կառուցումը ի՞նչ դրական ազդեցություն կունենա բնակավայրի և տարածաշրջանի համար:

«Էներջի Ըդվայզորի»-ի ներկայացուցիչը քննարկեց ԱՅԳ-1 ծրագրի դրական

ազդեցությունները, որոնք տեղի կունենան համայնքների համար շինարարության փուլում, ընդգծվեց, որ կայանի կառուցումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Քննարկվեց շինարարության փուլի համար պահանջվող աշխատողների թիվը. շինարարության փուլում կպահանջվի 200-500 աշխատող: Ներկաներին տեղեկացվեց, որ այդ վարձվող աշխատողներից ոչ բոլորն են լինելու տեղական համայնքից, սակայն 30-75%-ը կընտրվեն տեղական համայնքներից, եթե հետաքրքրված լինեն: Քննարկվեց շահագործման փուլում զբաղվածության հարցը, և ներկաներին տեղեկացվեց, որ շահագործման հիմնական փուլում կպահանջվի 20-25 աշխատող, որից 50%-ը կլինեն տեղացիներ:

Մասնակիցներից մեկը հարցրեց՝ արդյոք Աշնակ բնակավայրի վարչական տարածքում դաշտային հետազոտություններ են իրականացվել: Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը նշեց, որ այն տարածքը, որտեղ գտնվում է Ծրագրի տեղամասը Թալին և Դաշտադեմ բնակավայրերի վարչական տարածքներում է, և, հետևաբար, դաշտային հետազոտությունն իրականացվել է հիմնականում այդ տարածքներում, սակայն հարակից տարածքները հետազոտվել են այն դեպքերում, երբ փորձագետները դա անհրաժեշտ են համարել:

Ներկաներից մեկը նշեց, որ շինարարական աշխատանքների ընթացքում կավելանա ծանր մեքենաների տեղաշարժը, որոնք կօգտվեն բնակավայրի ճանապարհներից, և դա որոշակի բացասական ազդեցություն կունենա: Նա հարցրեց, թե ինչ միջոցներ են նախատեսվում այդ ազդեցությունը մեղմելու համար: Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը նշեց, որ համապատասխան գործողությունների ծրագրում կներկայացվեն պահանջներ, որոնք Կապալառուն պարտավոր է իրականացնել շինարարական աշխատանքների ընթացքում՝ այդ թվում՝ օգտագործվող ճանապարհների վերանորոգման, արագության սահմանափակման և տրանսպորտային միջոցների զննման հարցերին վերաբերող:

Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը հարցրեց ներկաներին, արդյոք նրանք օգտագործում են Ծրագրի տարածքում գտնվող հողը որպես արոտավայր: Բնակիչները նշեցին, որ Ծրագրի տարածքում գտնվող տարածքը պարբերաբար օգտագործում են որպես արոտավայր: Հովիվներին տեղեկացվեց, որ մշակվում են կենսամիջոցների վերականգնման միջոցառումներ, որոնք կարող են բաղկացած լինել մասնագիտական դասընթացների կազմակերպումից, ինչպես նաև ձմռան ամիսներին պատվաստանյութերի և փոքր քանակությամբ անասնակերի

տրամադրումից: Խոսքը տրվեց ներկաներին՝ առաջարկվող Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների վերաբերյալ իրենց կարծիքը հայտնելու նպատակով: Բնակավայրի ներկայացուցիչները նշեցին, որ ներկայացված միջոցառումների իրականացումը համարվում է անիմաստ և առաջարկեցին, որ այդ գումարով այլ սոցիալական ծրագրեր իրականացվեն՝ ուղղված բնակավայրի կենսապահովման բարելավմանը: Օրինակ՝ գյուղում ոռոգման կամ խմելու ջրի, էլեկտրամատակարարման համակարգի վերականգնման կամ վերանորոգման աշխատանքների իրականացումը, և այլն: Խորհրդատուները նշեցին, որ ԿՊՎԾ-ի նախապատվությունը արածեցմանը/անասնապահությանն ուղղված միջոցառում-ներն էին, սակայն արձագանքներն ու առաջարկներն արձանագրվեցին, և ներկաներին հավաստիացվեց, որ կենսամիջոցների վերականգնման միջոցառումներն իրականացնելիս հաշվի կառնվեն իրենց կարծիքները:

Ներկաներից մեկը հետաքրքրվեց՝ արևային կայանի շահագործումը բացասական ազդեցություն կունենա՞ մեղվաբուծության վրա: Նրանց տեղեկացվեց, որ նման ազդեցություն չի ակնկալվում, քանի որ դրա վերաբերյալ որևէ գիտական ապացույց չկա, և ՖՎ կայանը չի օգտագործում միջատասպան նյութեր, որոնք կարող են վնասել մեղուներին: Տեղեկացվեց նաև, որ շինարարության ընթացքում վնասված բուսածածկույթը կվերականգնվի:

Նշվեց նաև, որ համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերն ու առաջարկները կարող են հայտնել ոչ միայն Հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների արկղերի միջոցով: Քննարկման ընթացքում արձանագրվեցին ներկաների բոլոր կարծիքներն ու առաջարկությունները, և ներկաներին տեղեկացվեց, որ դրանք հաշվի կառնվեն հաջորդ փուլերում, ինչպես նաև կմշակվեն համապատասխան միջոցառումներ՝ Ծրագրի բացասական հետևանքները նվազեցնելու համար:

Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ հարցեր չտրվեցին, նիստը փակվեց:

Հանդիպման փակումից հետո Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը հանդիպում ունեցավ Աշնակ համայնքի ներկայացուցչի հետ և հարցրեց, թե արդյոք բնակավայրի բնակիչները այցելում են ծրագրի տարածք՝ որպես պատմամշակութային արժեք ներկայացնող վայր, ինչին համայնքի ներկայացուցիչը

բացասական պատասխան տվեց, ասելով, որ բնակիչները չեն այցելում ծրագրի տարածք պատմամշակութային նպատակներով: Հանդիպմանը մասնակցած կանանց հետ առանձին ֆոկուս-խմբային քննարկում տեղի ունեցավ, որի ընթացքում նրանց հարցրին, թե կա՞ն հարցեր, որոնք չեն կարողացել կամ չեն ցանկացել բարձրացնել քննարկման ընթացքում, ինչին բացասական պատասխան տրվեց: Ի սկզբանե նախատեսվում էր ևս մեկ ֆոկուս-խմբային քննարկում ունենալ հովիվների հետ, սակայն հաշվի առնելով, որ բոլոր մասնակիցներն ունեն անասուններ և զբաղվում են անասնապահությամբ, առանձին ֆոկուս խումբ չկազմակերպվեց հովիվների համար:

Ցուցապաստառ – 3-րդ քննարկման հանդիպում – Աշնակ համայնք

6.3.4 Երրորդ Հանրային քննարկում – Կաթնաղբյուր համայնք

2022 թ. դեկտեմբերի 20-ին, ժամը 10:00-ին Կաթնաղբյուրի համայնքապետի մոտ տեղի ունեցավ երրորդ Հանրային քննարկումը: Դեկտեմբերի 22-ին, պաստառներ տեղադրվեցին համայնքների համայնքապետարանի և մարզպետարանի մոտ և նախատեսվող քննարկումից 30 օր առաջ՝ Շրջակա միջավայրի նախարարության պաշտոնական կայքում: Պաստառների վրա ընդգծված էր քննարկման հանդիպման վայրն ու ժամը: Դրանք նաև ընդգծում էին, որ ճանապարհորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտը հասանելի կլինի: Թալինի քաղաքապետը ծանուցվեց 2022 թ. նոյեմբերի 18-ին: Հակահամաճարակային միջոցառումները (դիմակներ, ախտահանիչներ) հասանելի էին, սակայն դրանք չկիրառվեցին, քանի որ դա այլևս չի պահանջվում՝ համաձայն ազգային կանոնակարգերի: Բացի այդ, քննարկումից 30 օր առաջ հրավիրատոմսեր ուղարկվեցին նաև ՀԿ-ների և Gold Standard-ի ներկայացուցիչներին: Շնորհանդեսի նյութի տպագիր պատճենները բաժանվեցին համայնքի ներկա անդամներին: Դրանք համայնքի ներկա անդամներին բացատրում էին Ծրագիրը, Ծրագրի հիմնական գործողությունները և օգուտները: Շնորհանդեսի նպատակն էր դյուրացնել «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության մասին տեղեկատվությունը: Ոչ տեխնիկական ամփոփագիրը նույնպես բաժանվեց մասնակիցներին՝ Ծրագրի վերաբերյալ տեղեկատվություն տարածելու համար: Այն մանրամասնորեն ներկայացնում էր ծրագրի մասին ընդհանուր տեղեկությունները, թե ինչ է արևային էներգիան, ազդեցություններն ու ռիսկերը շինարարության և շահագործման փուլերի ընթացքում և դրական ազդեցությունները, որոնք Ծրագիրը կունենա շինարարության և շահագործման փուլերում:

Տեղական համայնքի ներկա անդամներին, ողջույնի խոսք ասվեց և նրանց տեղեկացրին, որ այս քննարկումը մանրամասն կներկայացնի «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը:

Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի: Բացատրվեց օրենքը և ինչպես է այն կիրառվում Ծրագրի վրա, որպեսզի համայնքի անդամները հասկանան

ներգրավված գործընթացները և թե ինչպիսի կարևոր դեր խաղում Հանրային քննարկումները սույն օրենքում: Ներկաներին տեղեկացվեց, որ այդ օրվա (դեկտեմբերի 20-ի) հանդիպումը երրորդ Հանրային քննարկումն էր, և որ վերջնական քննարկման ժամկետները կորոշվեն ապագայում՝ նախապես նկարագրված օրենքի համաձայն բավարար ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով: Ներկաներին տեղեկացվեց, որ «Մասդար Արմենիա 1» ՓԲԸ-ն պայմանագիր է ստորագրել «Այգ-1» արևային կայանի կառուցման վերաբերյալ 2021 թ. և որ նախատեսվում է կայանը շահագործման հանձնել 2025 թ.:

Քննարկման ներկաներին տեղեկացվեց, որ նախորդ քննարկման ժամանակ քննարկված դաշտային հետազոտությունն ավարտվել է, Ծրագրի տարածքի կենսաբազմազանության հետազոտությունն ավարտվել է, պատմամշակութային արժեք ներկայացնող օբյեկտներն արձանագրվել են, ինչպես նաև մշակվել են շինարարության ընթացքում հնարավոր բնապահպանական ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումները: Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին ներկաներին և ընդգծվեց, որ կենսաբազմազանության հետազոտությունն իրականացվել է 3 սեզոնների ընթացքում (գարուն, ամառ, աշուն): Ներկաներին տեղեկացվեց, որ հետազոտության ժամանակաշրջանում տեղամասից պարբերաբար օգտվող Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակ և բուսատեսակ չի հայտնաբերվել: Ներկաներին ներկայացվեցին նաև հնագիտական հետազոտության մանրամասները: Դաշտային հետազոտության մեթոդներն ու արդյունքները ներկայացվեցին համայնքի ներկա անդամներին: Ներկաներին տեղեկացվեց հետազոտության արդյունքների մասին և որ հետազոտության ընթացքում մոտ 253 հնագիտական օբյեկտներ են հայտնաբերվել տեղամասում և հարակից տարածքներում:

«Էներջի Ըդվայզորի»-ի ներկայացուցիչը քննարկեց ԱՅԳ-1 ծրագրի դրական ազդեցությունները, որոնք տեղի կունենան համայնքների համար շինարարության փուլում, ընդգծվեց, որ կայանի կառուցումը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը: Քննարկվեց շինարարության փուլի համար պահանջվող աշխատողների թիվը. շինարարության փուլում կպահանջվի 200-500 աշխատող: Ներկաներին տեղեկացվեց, որ այդ վարձվող աշխատողներից ոչ բոլորն են լինելու տեղական համայնքից, սակայն 30-75%-ը կընտրվեն տեղական համայնքներից, եթե հետաքրքրված լինեն: Քննարկվեց շահագործման փուլում զբաղվածության հարցը,

և ներկաներին տեղեկացվեց, որ շահագործման հիմնական փուլում կպահանջվի 20-25 աշխատող, որից 50%-ը կլինեն տեղացիներ:

Ներկաները խնդրեցին հստակ ճշտել, թե ինչ տարածք է նախատեսվում օգտագործել ներկայացված արևային վահանակների տեղադրման համար: Ներկաներին ցույց տրվեց Ծրագրի տարածքի քարտեզը և տեղեկացվեց, որ Կաթնաղբյուր բնակավայրի վարչական տարածքից հողատարածք չի ձեռք բերվելու և Կաթնաղբյուրի հողերում չեն կառուցվելու օբյեկտներ, այդ թվում՝ էլեկտրահաղորդման գծերի հենասյուներ:

Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը հարցրեց ներկաներին, արդյոք նրանք օգտագործում են ծրագրի տարածքում գտնվող հողամասը՝ որպես արոտավայր: Բնակիչները նշեցին, որ Ծրագրի տարածքում գտնվող հողամասը պարբերաբար օգտագործում են որպես արոտավայր: Հովիվներին տեղեկացվեց, որ մշակվում են կենսամիջոցների վերականգնման միջոցառումներ, որոնք կարող են բաղկացած լինել մասնագիտական դասընթացների կազմակերպումից, ինչպես նաև ձմռան ամիսներին պատվաստանյութերի և փոքր քանակությամբ անասնակերի տրամադրումից: Խոսքը տրվեց ներկաներին՝ իրենց կարծիքը հայտնելու առաջարկվող Կենսամիջոցների վերականգնման միջոցառումների վերաբերյալ: Բնակավայրի ներկայացուցիչները նշեցին, որ ներկայացված միջոցառումների արդյունավետությունը ցածր են համարում և առաջարկեցին վերը նշված միջոցառումների փոխարեն իրականացնել բնակավայրի կենսապահովման բարելավմանն ուղղված այլ սոցիալական ծրագրեր, օրինակ՝ իրականացնել պոմպակայանի վերակառուցման աշխատանքներ՝ Կաթնաղբյուր բնակավայրի ոռոգման ջրի խնդիրը լուծելու համար: Խորհրդատուները բացատրեցին, որ ԿՊՎԾ-ի նախընտրությունն էր կենտրոնանալ ազդակիր գործունեությանն (այսինքն՝ կապված անասնապահության հետ) ուղղված միջոցառումների վրա, սակայն արձագանքներն ու առաջարկությունները գրանցվեցին, և մասնակիցներին վստահեցրեցին, որ իրենց կարծիքը հաշվի կառնվի կենսամիջոցների վերականգնման միջոցառումներն իրականացնելիս:

Նշվեց նաև, որ համայնքի բնակիչներն իրենց կարծիքները, հարցերն ու առաջարկները կարող են հայտնել ոչ միայն Հանրային քննարկումների ժամանակ, այլև ցանկացած պահի համայնքապետարանում/թաղապետարաններում տրամադրված համապատասխան բողոքների արկղերի միջոցով: Քննարկման ընթացքում արձանագրվեցին ներկաների բոլոր կարծիքներն ու

առաջարկությունները, և ներկաներին տեղեկացվեց, որ դրանք հաշվի կառնվեն հաջորդ փուլերում, ինչպես նաև կմշակվեն համապատասխան միջոցառումներ Ծրագրի բացասական հետևանքները նվազեցնելու համար: Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ հարցեր չտրվեցին, նիստը փակվեց:

Հանդիպման փակումից հետո Էներջի Ըդվայզորիի ներկայացուցիչը հանդիպում ունեցավ Կաթնաղբյուր համայնքի ներկայացուցչի հետ և հարցրեց, թե արդյոք բնակավայրի բնակիչներն այցելում են ծրագրի տարածք՝ որպես պատմամշակութային արժեք ներկայացնող վայր, ինչին համայնքի ներկայացուցիչը բացասական պատասխանեց, ասելով, որ բնակիչները չեն այցելում ծրագրի տարածք պատմամշակութային նպատակներով:

Ցուցապաստառ – 3-րդ քննարկման հանդիպում – Կաթնաղբյուր համայնք

6.3.5 Չորրորդ Հանրային քննարկում – Թալին

2023 թ. ապրիլի 12-ին, ժամը 14.00-ին, Թալին համայնքի քաղաքապետարանում տեղի ունեցավ չորրորդ Հանրային քննարկումը: Քննարկման թիրախում էին Թալին, Կաթնաղբյուր և Աշնակ համայնքները: Ֆեյսբուքյան հայտարարություն տեղադրվեց՝ տեղեկացնելով համայնքի անդամներին քննարկման վայրն ու ժամը: Նշվում էր նաև, որ տրանսպորտը հասանելի կլինի ճանապարհորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար: Անցկացման օրը և վայրը Թալինի քաղաքապետի հետ համաձայնեցվեց ապրիլի 5-ին: Ապահովվեցին հակահամաճարակային միջոցներ (դիմակներ, ախտահանիչներ), սակայն դրանք չօգտագործվեցին, քանի որ դա այլևս չի պահանջվում ազգային կանոնակարգերի համաձայն: Հանդիպմանը ներկա էին Թալինի համայնքապետը, Մասդարի և ՀՊՀՖ-ի, Թալինի քաղաքապետարանի, ԲևՍ խորհրդատուների, ինչպես նաև բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ և համայնքի անդամներ (բնակիչներ): Մասդարի ներկայացուցիչը համայնքի անդամներին ներկայացրեց շնորհանդես:

Տեղական համայնքի ներկա անդամներին ողջույնի խոսք ասվեց, և նրանց տեղեկացրին, որ այս քննարկումը մանրամասն կներկայացնի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացի արդյունքները և ավելի մանրամասն կքննարկի ԿՊՎԾ-ն:

Ներկաներին տեղեկացվեց, որ այդ օրվա (ապրիլի 12) հանդիպումը չորրորդ Հանրային քննարկումն էր, և որ Ծրագիրը որոշել է լրացուցիչ հինգերորդ քննարկում անցկացնել՝ գերազանցելով Հայաստանի օրենսդրական պահանջները: Վերջնական քննարկման ժամկետները կորոշվեն ապագայում՝ բավարար ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով:

Մասդարի ներկայացուցիչը ներկաներին ներկայացրեց Powerpoint-ով նյութ, որը ներառում էր Մասդար Արմենիա 1 ՓԲԸ գործունեության բնույթի, տարբեր երկրներում ընկերության կողմից իրականացված նախկին ծրագրերի և Մասդարի կողմից գլոբալ տաքացման նվազեցման հարցի կարևորման հակիրճ ներկայացումը: Powerpoint սահիկաշարը նկարագրում էր նաև ԱՅԳ-1 ծրագրի կառավարման ընթացակարգը, մանրամասնում էր արևային էներգիայի ոլորտը զարգացնելուն ուղղված Հայաստանի ծրագրերը և ԱՅԳ-1 ծրագիրը՝ որպես այդ

գործընթացի մաս: Ներկաներին տեղեկացվեց, որ արևային կայանի կառուցումն ու շահագործումը կտևի ավելի քան 20 տարի, և այդ պատճառով Մասդարը կարևոր է համարում իրենց հարաբերությունները ազդակիր համայնքների հետ, ինչպես նաև համայնքային փոխգործակցությունը:

Ներկաները Մասդարին խնդրեցին պարզաբանել ԱՅԳ-1-ի՝ նմանատիպ ծրագրերի իրականացման նախկին փորձը: Նրանց տեղեկացվեց, որ Մասդարը նմանատիպ ծրագրեր է իրականացրել ավելի քան 40 երկրներում, և այդ ծրագրերի մասին տեղեկատվությունն անվճար հասանելի է Մասդարի պաշտոնական կայքում: Ներկաներին տեղեկացվեց, որ ԱՅԳ-1 ծրագիրը նախագծվել է՝ հաշվի առնելով ընկերության փորձը և լավագույն չափանիշներն ու փորձը:

Ներկաները հարցրեցին, թե Ծրագրի շահագործման փուլի ավարտից հետո ինչ վիճակում է լինելու այն հողատարածքը, որի վրա տեղակայված է ԱՅԳ-1 Ծրագիրը, նրանք հետաքրքրվեցին, թե ինչ վիճակում են լինելու այդ հողերը, երբ վերադարձվեն համայնքին: Ներկաներին տեղեկացվեց, որ շահագործման փուլի ավարտից հետո, Ծրագրի համար պահանջվող հողատարածքը կվերականգնվի և կվերադարձվի Կառավարությանը նույն վիճակում, ինչ ներկայումս է (մինչ շինարարությունը): Ներկաներին տեղեկացվեց նաև, որ լանդշաֆտը և տեղանքն ամբողջությամբ հաշվի կառնվեն Ծրագրի շինարարության փուլում և տեղանքի էական փոփոխություն (օրինակ՝ հարթեցում) չի նախատեսվում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձագիտական կենտրոնի ներկայացուցիչը հարցրեց, թե շինարարությունից հետո որքան գումար է հատկացվելու հողատարածքի բարեկարգման և վերականգնման համար: Մասդարի ներկայացուցիչը նշեց, որ գումարի ճշգրիտ չափը նախատեսված է ոչ թե առանձին բյուջեով, այլ որպես ընդհանուր ՆԳՇ արժեքի մի մաս: Հատկացված գումարը ներառված է Ծրագրի իրականացման շրջանակում և նշված է համապատասխան փաստաթղթերում: Ներկաները նաև հետաքրքրվեցին, թե նախատեսվու՞մ են լանդշաֆտային/կանաչապատման աշխատանքներ: Մասնակիցներին տեղեկացվեց, որ կանաչապատում (ծառերի տնկում) նախատեսված չէ, քանի որ ծառերի ստվերները կարող են ազդել ՖՎ կայանի աշխատանքի վրա, իսկ տեղական լանդշաֆտը կմնա ներկա վիճակին շատ նման՝ սահմանափակ խոտածածկ բուսականությամբ:

Շնորհանդեսը շարունակվեց և կրկին ընդգծվեց համայնքի կողմից

համագործակցության կարևորությունը: Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագրի շինարարության փուլում Ծրագրային ընկերությունից կլինի աշխատակից, ով մշտական կապ կպահպանի համայնքի հետ: Նշվեցին հնարավոր բացասական ազդեցությունները և դրանց հետ կապված մեղմացումը: Նկարագրվեցին ծրագրի արդյունքում դրական ազդեցությունները՝ նշելով, որ կարևոր է ստեղծել ամուր համակարգ՝ ապահովելու, որ ՆԳՇ-ն և ենթակապալառուները պահպանեն Ծրագրի հանձնառությունները տեղական զբաղվածության վերաբերյալ: Մասնակիցներին ներկայացվեցին Ծրագրի իրականացման սոցիալական միջոցառումների մանրամասները, և մասնակիցներին տեղեկացվեց, որ նրանց առաջարկները ողջունելի են և կքննարկվեն Ծրագրի Ընկերության կողմից:

Հատուկ նկարագրվեց բողոքարկման մեխանիզմը և ընդգծվեց համայնքների և Ծրագրի միջև սահուն հաղորդակցության կարևորությունը՝ ցանկացած բողոք կամ մտահոգություն ակտիվորեն լուծելու համար:

Նկարագրվեց և կետ-առ-առ-կետ ներկայացվեց համայնքների և Կառավարության միջև Ծրագրի առնչությամբ համաձայնեցված վերջնական փոխհատուցումը, այդ թվում՝ Մասդարից պահանջվող նվիրատվությունը և Կառավարության կողմից քաղաքապետարանին տրամադրվելիք լրացուցիչ բյուջետային աջակցությունը: Մասնակիցները բոլորը բավարարված էին վերանայված գումարներից, և նախորդ քննարկման ժամանակ հնչած մտահոգությունները հողի դիմաց վճարվող փոխհատուցման վերաբերյալ համարվեցին փակված:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԿՊՎԾ փոխհատուցման բյուջեն (ընդհանուր գումարը և փոխհատուցման մեթոդաբանությունը) և ԿՊՎԾ փոխհատուցման լրացուցիչ միջոցառումները: Մասնակիցները ողջունեցին լրացուցիչ առաջարկը և նշեցին, որ ներքին քննարկումից հետո գրավոր կպատասխանեն խորհրդատուներին: Այս մոտեցման շուրջ կոնսենսուս կար, որն ընդունվեց հանդիպման կազմակերպիչների կողմից:

Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ հարցեր չտրվեցին, և նիստը փակվեց:

Ցուցապաստառ – 4-րդ քննարկման հանդիպում – Թալին, Կաթնաղբյուր և Աշնակ համայնքներ

6.3.6 Չորրորդ Հանրային քննարկում – Դաշտադեմ համայնք

2023 թ. ապրիլի 12-ին, ժամը 12:00-ին Դաշտադեմի համայնքապետարանում տեղի ունեցավ չորրորդ Հանրային քննարկումը: Ֆեյսբուքյան գրառումը, որը ծանուցում էր համայնքի անդամներին քննարկման մասին, ընդգծում էր քննարկման վայրն ու ժամը: Այն նաև ընդգծում էր, որ ճանապարհորդել չկարողացող համայնքի անդամների, տնտեսական դժվարություններ ունեցող կամ հաշմանդամություն ունեցող անձանց համար տրանսպորտը հասանելի կլինի: Հանդիպումը Դաշտադեմ համայնքապետի հետ համաձայնեցվեց ապրիլի 5-ին: Ապահովվեցին հակահամաճարակային միջոցներ (դիմակներ, ախտահանիչներ), սակայն դրանք չօգտագործվեցին, քանի որ դա այլևս չի պահանջվում ազգային կանոնակարգերի համաձայն: Հանդիպմանը ներկա էին Դաշտադեմի համայնքապետը, Թալին խոշորացված համայնքի ղեկավարը, Մասդարի և ՀՊՀՖ-ի, Թալինի քաղաքապետարանի ներկայացուցիչներ, բնապահպանական խորհրդատուներ, հասարակական կազմակերպություններ և համայնքի անդամներ (բնակիչներ): Մասդարի ներկայացուցիչը շնորհանդես ներկայացրեց համայնքի անդամներին:

Տեղական համայնքի ներկա անդամներին ողջույնի խոսք հղվեց, և նրանց տեղեկացրին, որ այս քննարկումը մանրամասն կներկայացնի «Այգ-1» արևային կայանի կառուցման և շահագործման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության

գնահատման հաշվետվությունը և տրվեց նախորդ քննարկումների արդյունքների հակիրճ ամփոփումը:

Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագիրը ենթակա է բնապահպանական փորձաքննության՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի: Բացատրվեց օրենքը և թե ինչպես է այն կիրառվում Ծրագրի նկատմամբ, որպեսզի համայնքի անդամները հասկանան ներգրավված գործընթացները և թե ինչպիսի կարևոր դեր են խաղում Հանրային քննարկումները սույն օրենքում: Քննարկվեց Ծրագրի կատեգորիան և նշվեց, որ այն դասակարգվել է որպես «Բ» կատեգորիայի ծրագիր: Համայնքի անդամներին տեղեկացվեց նաև, որ Ծրագրի «Բ» կատեգորիան կներառի 4 Հանրային քննարկումների իրականացում:

Ներկաներին տեղեկացվեց, որ այդ օրվա (ապրիլի 12) հանդիպումը չորրորդ Հանրային քննարկումն էր, և որ Ծրագիրը որոշել է լրացուցիչ հինգերորդ քննարկում անցկացնել՝ գերազանցելով Հայաստանի օրենսդրական պահանջները: Վերջնական քննարկման ժամկետները կորոշվեն ապագայում՝ բավարար ժամանակ առաջ ծանուցում ուղարկելով:

Մասդարի ներկայացուցիչը ներկաներին ներկայացրեց Powerpoint սահիկաշարը, որը ներառում էր Մասդար Արմենիա 1 ՓԲԸ գործունեության բնույթի, տարբեր երկրներում ընկերության կողմից իրականացված նախկին ծրագրերի և Մասդարի կողմից գլոբալ տաքացման նվազեցման հարցի կարևորման մասին հակիրճ ներկայացումը: Powerpoint սահիկաշարը նկարագրում էր նաև ԱՅԳ-1 ծրագրի կառավարման ընթացակարգը, մանրամասնում էր արևային էներգիայի ոլորտը զարգացնելու՝ Հայաստանի ծրագրերը և ԱՅԳ-1 ծրագիրը, որպես այդ գործընթացի մաս: Ներկաներին տեղեկացվեց, որ արևային կայանի կառուցումն ու շահագործումը կտևի ավելի քան 20 տարի, և այդ պատճառով Մասդարը կարևոր է համարում իրենց հարաբերությունները ազդակիր համայնքների հետ, ինչպես նաև համայնքային փոխգործակցությունը:

Դաշտադեմ համայնքի ղեկավարն ընդգծեց, որ Ծրագիրն ստացել է համայնքների համաձայնությունը՝ ելնելով որոշ պայմաններից: Եղել է պահանջ, որ ՖՎ կայան տանող ճանապարհներից մեկն անցնի Դաշտադեմ համայնքով: Դաշտադեմ համայնքի ղեկավարը մանրամասնեց, որ նախորդ քննարկումների ժամանակ Մասդարի առաջարկած ճանապարհը համայնքի կողմից համապատասխան չի համարվել, ուստի

առաջարկվել է այս միջոցառումը: Մասդարի ներկայացուցիչն ընդգծեց, որ Ծրագիրը շարունակում է մտահոգված լինել, որ համայնքի միջով առաջարկվող մուտքի ճանապարհը վտանգ կներկայացնի համայնքի անդամների համար, քանի որ մուտքի ճանապարհով ծանր երթևեկություն կլինի: Դաշտադեմով մուտքի ճանապարհի տարբերակը դիտարկվում է, սակայն այն կարող է անհամապատասխան լինել, քանի որ ակնկալվում է, որ Ծրագիրը պետք է համապատասխանի անվտանգության խիստ պահանջներին:

Շնորհանդեսը շարունակվեց և ընդգծվեց համայնքի կողմից համագործակցության կարևորությունը: Ներկաներին տեղեկացվեց, որ Ծրագրի շինարարության փուլում Ծրագրի ընկերությունից կլինի աշխատակից, ով մշտական կապ կպահպանի համայնքի հետ: Կարևորվեց բողոքարկման մեխանիզմի կարևորությունը և ընկերության առջև մտահոգություններն ակտիվորեն բարձրացնելը: Նկարագրվեցին ծրագրի արդյունքում հնարավոր բացասական և դրական ազդեցությունները: Կարևորվեց արդյունավետ համակարգի վերաբերյալ համաձայնության գալը, ինչը ՆԳՇ-ին և ենթակապալառուներին հնարավորություն կտա կատարել տեղական համայնքից աշխատողներ վարձելու պարտավորությունները:

Նկարագրվեց և կետ-առ-կետ ներկայացվեց համայնքների և կառավարության միջև Ծրագրի առնչությամբ համաձայնեցված վերջնական փոխհատուցումը, այդ թվում՝ Մասդարից պահանջվող նվիրատվությունը և Կառավարության կողմից քաղաքապետարանին տրամադրվելիք լրացուցիչ բյուջետային աջակցությունը: Մասնակիցները գոհ էին վերանայված գումարներից, և հողի դիմաց վճարվող փոխհատուցման վերաբերյալ նախորդ քննարկման ժամանակ բարձրացված մտահոգությունները համարվեցին փակված:

Հանդիպման ընթացքում քննարկվեցին ԿՊՎԾ փոխհատուցման բյուջեն (ընդհանուր գումարը և փոխհատուցման մեթոդաբանությունը) և ԿՊՎԾ փոխհատուցման լրացուցիչ միջոցառումները: Մասնակիցները ողջունեցին լրացուցիչ առաջարկը և նշեցին, որ իրենք միասին կքննարկեն և կպատասխանեն խորհրդատուներին նախընտրելի տարբերակ(ներ)ով:

Հայկական ՀԿ-ներից մեկից մասնակիցը հարցրեց, արդյոք թափոնները վտանգավոր են: ՀԿ-ն ընդգծեց, որ շահագործման փուլում կլինեն ՖՎ կայանի կողմից արտադրված թափոններ՝ շահագործումից հանված ՖՎ վահանակների տեսքով: Մասնակիցը նաև ընդգծեց, որ ՇՄԱԳ հաշվետվությունը պետք է տեղեկատվություն ներառի ՖՎ

վահանակների թափոնների կառավարման, քանակի, հավաքման և հեռացման մեթոդների վերաբերյալ: Ներկաները հարցրեցին, թե արդյոք Ծրագրի կողմից տրվելու է սուբսիդիա՝ ՖՎ վահանակների ճիշտ հեռացման համար: Դաշտադեմի համայնքապետն ընդգծեց, որ սուբսիդավորում չի պահանջվում: Էներջի Ըդվայզորիի անդամներից մեկը նշեց, որ թափոնները կառավարվելու են Հայաստանում գործող օրենսդրական պահանջներով: Կարևորվեց նաև, որ ՇՄԱԳ հաշվետվությունում նշված է նաև շրջակա միջավայրի համար թափոնների ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների և մեղմացման գործողությունների մանրամասն նկարագրությունը: Մասդարի ներկայացուցիչը նաև նշեց, որ Մասդարը հանձնառու է ՖՎ վահանակների հավաքմանը, ուստի դրանք կհավաքվեն առանձին և կպահվեն այնքան ժամանակ, մինչև վերամշակման համապատասխան սարքավորումները հասանելի լինեն: Ներկաներին բացատրվեց նաև մեկ այլ երկրում ՖՎ վահանակների թափոնների ռիսկի օրինակը ՝ մանրամասնելով, թե ինչպես է այն լուծվել:

Հանրային քննարկումը փակվեց, և խոսքը տրվեց համայնքի անդամներին՝ իրենց ունեցած ցանկացած այլ հարցերի համար: Այլ հարցեր չտրվեցին, և նիստը փակվեց:

Առանձին ֆոկուս-խմբային քննարկում տեղի ունեցավ ՀՊՀՖ-ի ներկայացուցիչների և Հանրային քննարկմանը մասնակցած կանանց հետ: ՀՊՀՖ-ի ներկայացուցիչները քննարկեցին կանանց նախապատվությունները աջակցության և ԿՊՎԾ միջոցառումների և հնարավոր առաջարկների մասին, որոնք կարող են հետաքրքրել կանանց: Կանայք նշեցին, որ իրենք շահագրգռված կլինեն սովորել հմտություններ, այդ թվում՝ արհեստներ, ծրագրերի կառավարում, հաշվապահություն և այլն՝ իրենց կենսապայմանները բարելավելու նպատակով:

Ցուցապաստառ – 4-րդ քննարկման հանդիպում – Թալին, Կաթնաղբյուր և Աշնակ համայնքներ

7 Շահագրգիռ կողմերի պլանավորված ներգրավում

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները ծրագրի հաջորդ փուլերի համար: Ներգրավման յուրաքանչյուր տեսակի մեթոդաբանությունը և հիմնավորումը թվարկված են նախորդ բաժիններում: ՔՈՎԻԴ-19-ի կառավարման միջոցառումներն անհրաժեշտ չեն համարվում, սակայն անհրաժեշտության դեպքում կրկին կներառվեն:

Աղյուսակ 4 Շահագրգիռ կողմերի պլանավորված ներգրավում

Ներգրավում	Պատասխանատու	Շահագրգիռ կողմ	Ժամկետ
ԲՍԱԳ և ԿՊՎԾ քննարկում և հաստատում			
Հանդիպում ազդակիր չորս համայնքների հետ (Թալին, Դաշտադեմ, Աշնակ և Կաթնաղբյուր) Վարկատուների կողմից տարածք այցելության ժամանակ (քննարկման հանդիպումների 5-րդ փուլ)	Վարկատուներ	Տեղական համայնքներ, տեղական իշխանություններ ,հովիվներ	Ավարտված
ԲՍԱԳ և ԿՊՎԾ և ՇԿՆՊ (այսինքն՝ ԲՍԱԳ փաթեթ) Հրապարակում առցանց և տեղական համայնքներում	ԲՍԱԳ խորհրդատուներ	Բոլոր շահագրգիռ կողմերը, ամենակարևորը՝ տեղական համայնքներ, տեղական իշխանություններ, հովիվներ.	Վարկատուների կողմից ԲՍԱԳ փաթեթի ընդունումից հետո
ԲՍԱԳ փաթեթի քննարկման հանդիպումներ (քննարկման հանդիպումների 6-րդ փուլ)	ԲՍԱԳ խորհրդատուներ	Տեղական համայնքներ, տեղական իշխանություններ, հովիվներ	Վարկատուների կողմից ԲՍԱԳ փաթեթի ընդունումից և հրապարակումից հետո
Մշակութային ժառանգության հիմնական շահագրգիռ կողմերի հետ փոխգործակցություն (այսինքն՝ Մշակույթի նախարարություն, Հնագիտության ինստիտուտ) ՄԺԿՊ-ի վերաբերյալ, մշակութային ժառանգության հետազոտությունների հարցերով զբաղվող ՀԿ-ների ծանուցում և կարծիք ներկայացնելու խնդրանք	Մշակութային ժառանգության փորձագետներ	Մշակույթի նախարարություն, Հնագիտության ինստիտուտ, Մշակութային ժառանգության ՀԿ-ներ	Մինչև ՄԺԿՊ-ի հրապարակումը: Մինչև շինարարության մեկնարկը:

Նախաշինարարական փուլ			
ԲՍԱԳ վերջնական փաթեթ (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում մեկնաբանություններ քննարկումների վերջին փուլից) –տպագիր պատճենների վերահրապարակում	Մասդար	Տեղական շահագրգիռ կողմեր	Քննարկումների 6-րդ փուլից հետո, եթե զգալի թարմացումներ կատարվեն:
ԲՍԱԳ վերջնական փաթեթ (այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում մեկնաբանություններ քննարկումների վերջին փուլից) –առցանց վերահրապարակում	Մասդար	Բոլոր շահագրգիռ կողմեր	Քննարկումների 6-րդ փուլից հետո, եթե զգալի թարմացումներ կատարվեն:
Շինարարության փուլի համար համայնքների հետ կապի պատասխանատուի նշանակում	Մասդար	Բոլոր շահագրգիռ կողմեր	ԱՄԾ-ից մեկ ամիս առաջ

Ներգրավում	Պատասխանատու	Շահագրգիռ կողմ	Նախնական ժամկետ
Շինարարությունից առաջ համայնքի հետ հանդիպում Հիմնական նպատակներ՝ • Կրկին բացատրել շինարարության հիմնական ռիսկերը և դրանցից խուսափելու կամ դրանք մեղմացնելու միջոցները, մասնավորապես, համայնքի համար ԱԱ ռիսկերը: • Բացատրել ՆԳՇ-ի և ենթակապալառուների աշխատանքի ընդունման կարգը: • Թարմացնել շինարարության ակնկալվող ազդեցությունների և մեղմացման մասին տեղեկատվությունը: • Թարմացնել տեղեկատվությունը առկա բողոքարկման մեխանիզմի և ՀԿՊ-ի վերաբերյալ:	ՀՆԸ - ՀԿՊ	Տեղական շահագրգիռ կողմեր և համայնքներ (Թալին, Դաշտադեմ, Աշնակ և Կաթնաղբյուր)	Տեղամասի մոբիլիզացիայից առաջ
Շինարարության փուլ			
ԲևՍ հաշվետվություններ	ԲևՍ գծով ղեկավար	Օրենսդրական մարմինների համար հրապարակում	Օրենսդրական մարմինների պահանջներին համապատասխան
Հանդիպում տեղական իշխանությունների հետ. առաջընթացի թարմացում	ՀԿՊ	Տեղական իշխանություններ	Երկամսյա (երկու ամիսը մեկ անգամ)
Հանդիպումներ տեղական իշխանությունների և Թալին և Դաշտադեմ համայնքների հետ՝ նվիրատվության պայմանագրի օգտագործման վերաբերյալ	ՀԿՊ	Տեղական իշխանություններ և համայնքներ	Շինարարության առաջին երեք ամսվա ընթացքում

ԿՊՎԾ հանձնաժողովի նիստեր (ԿՊՎԾ հանձնաժողովի ստեղծման և գործունեության մանրամասն ժամկետները նշված են ԿՊՎԾ -ում)	ՀԿՊ	ԿՊՎԾ հանձնաժողովի անդամներ (ինչպես նկարագրված է ԿՊՎԾ-ում)	Եռամսյակը մեկ՝ շինարարության ընթացքում, մինչև ԿՊՎԾ ավարտը;
ԲևՍ ամսական հաշվետվությունների ներկայացում Մասդարին	ԲևՍ գծով ղեկավար	Շահագրգիռ կողմեր	Ամսական
Կիսամյակային ԲՍԿՀ-ների ներկայացում վարկատուներին	ԲևՍ գծով ղեկավար	Վարկատուներ	6 ամիսը մեկ անգամ

Ներգրավում	Պատասխանատու	Շահագրգիռ կողմ	Նախնական ժամկետ
Շահագործման փուլ			
Համայնքային հանդիպում, որի նպատակն է՝ • Բացատրել ՇևՊ աշխատանքի ընդունման կարգը: • Թարմացնել ակնկալվող շահագործական ազդեցությունների և մեղմացման մասին տեղեկատվությունը • Թարմացնել տեղեկատվությունը առկա բողոքարկման մեխանիզմի և ՀԿՊ-ների վերաբերյալ:	ՀԿՊ	Տեղական շահագրգիռ կողմեր	1 ամիս ԱՇԹ-ից առաջ
ԲևՍ հաշվետվություններ / ԲՍԿՀ-եր	ԲևՍ գծով ղեկավար	Շահերի վրա հիմնված շահագրգիռ կողմեր (կանոնադրական մարմիններ և վարկատուներ)	Տարեկան կամ ըստ անհրաժեշտության (առաջին տարվա ընթացքում վարկատուների համար տարին երկու անգամ)
Հանդիպում տեղական իշխանությունների հետ. առաջընթացի թարմացում	ՀԿՊ	Տեղական իշխանություններ	1-ին տարվա համար եռամսյակայ ին, այնուհետ տարեկան

Ներգրավում	Պատասխանատու	Շահագրգիռ կողմ	Նախնական ժամկետ
Շահագործումից հանելու փուլ			
Համայնքային հանդիպում, որի նպատակն է՝ • Բացատրել շահագործումից հանելու գործընթացը: • Թարմացնել տեղեկատվությունը շահագործումից հանելուց ակնկալվող ազդեցությունների և մեղմացման վերաբերյալ: • Թարմացնել տեղեկատվությունը առկա բողոքարկման մեխանիզմի վերաբերյալ	ՀԿՊ	Տեղական շահագրգիռ կողմեր	Շահագործումից հանման մեկնարկից 2 ամիս առաջ
• Հանդիպում տեղական իշխանությունների հետ – բացատրել շահագործումից հանելու գործընթացը	ՀԿՊ	Տեղական իշխանություններ	Շահագործումից հանման մեկնարկից 3 ամիս առաջ

8 Բողոքարկման մեխանիզմ

Այս բաժինը տեղեկատվություն է տրամադրում Ծրագրի բողոքարկման մեխանիզմի բնութագրերի մասին: Համայնքային կապի պատասխանատուների (ՀԿՊ-ներ) անունները կթարմացվեն մինչև շինարարության մեկնարկը, իսկ ՇԿՆՊ-ում կթարմացվեն՝ շինարարության փուլում ԲՍԿՀ-ում ներառելու համար:

Բողոքարկման մեխանիզմի նպատակն է ստեղծել մի համակարգ, որը կընդունի Ծրագրի բնապահպանական և սոցիալական կատարողականի վերաբերյալ շահագրգիռ կողմերի մտահոգությունները և բողոքները և և կդյուրացնի դրանց լուծումը: Բողոքարկման մեխանիզմի հիմնական շահառուները ազդակիր համայնքներն են (աշխատողների համար բողոքարկման առանձին մեխանիզմ կներառվի Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլանում): Այն ձգտում է օպերատիվ կերպով լուծել մտահոգությունները՝ օգտագործելով հասկանալի և թափանցիկ քննարկման գործընթաց, որը մշակութային առումով համապատասխան է և հեշտ հասանելի՝ առանց որևէ ծախսերի և առանց հատուցման այն կողմի համար, որը բարձրացրել է խնդիրը կամ մտահոգությունը: Մեխանիզմը չի խոչընդոտի դատական կամ վարչական պաշտպանության միջոցների հասանելիությանը: Բողոքների ներկայացման մեխանիզմը բացատրվել է ԲՍԱԳ քննարկման հանդիպումների ժամանակ և կշարունակվի հրապարակվել ծրագրի ողջ ցիկլի ընթացքում:

Ծրագրի բողոքարկման մեխանիզմը կհամապատասխանի հետևյալ սկզբունքներին.

- Ամենասկզբում պարզաբանել, թե որն է ընթացակարգի նպատակը,
- Վստահեցնել մարդկանց, որ գանգատ/բողոք ներկայացնելու հետ կապված որևէ ծախս կամ հատուցում չի լինի, և
- Ամբողջ գործընթացը (այսինքն, թե ինչպես է բողոքը ստացվում և դիտարկվում, ինչպես են որոշումները կայացվում և բողոքարկման ինչ հնարավորություններ կարող են լինել) կկատարվի հնարավորինս թափանցիկ՝ այն ներկայացնելով գրավոր ձևով, հրապարակելով և բացատրելով շահագրգիռ կողմերին:

Բողոքարկման մեխանիզմի հասանելիության մեթոդները բացահայտվել են տեղական համայնքներին ԲՍԱԳ քննարկումների ընթացքում: Բողոքարկման մեխանիզմը կհրապարակվի տեղամասի մուտքի մոտ, համայնքապետարանների գրասենյակների մոտ և Ծրագրի ընկերության կայքում:

Բողոքարկման ընթացակարգերի և բողոքների գրանցամատյանների մասին բոլոր ներքին տեղեկությունները կփաստաթղթավորվեն անգլերենով: Այդուհանդերձ, բողոքները կարող են գրանցվել հայերեն և անգլերեն լեզուներով: Մեխանիզմին հասանելիությունն անվճար կլինի:

Կանանց համար մեխանիզմի հասանելիությունը հեշտացնելու նպատակով, տեղի կանանց հետ ֆոկուս խմբերի ընթացքում քննարկվել են բողոքարկման մեխանիզմին մուտք գործելու մեթոդները: Տեղի կանայք կոնկրետ առաջարկներ չեն ներկայացրել բողոքարկման մեխանիզմի հասանելիությունը բարելավելու համար: Ավելին, ընկերության կին պաշտոնյաներից մեկը կլինի կանանց հետ կապի կոնտակտային անձը և կղեկավարի կանանց բողոքների դիտարկումը:

Բողոք ներկայացնելը կարող է վտանգներ ներկայացնել մարդկանց համար, հատկապես, եթե այն վերաբերում է այնպիսի հարցերի, ինչպիսիք են կոռուպցիան, պաշտոնեական չարաշահումը, դրամական փոխհատուցումը, կամ եթե դա հակասում է տեղական սոցիալական նորմերին, այդ թվում՝ գենդերային նորմերին: Բողոքարկման մեխանիզմը ներառում է նախազգուշական միջոցներ, ինչպիսիք են չհատուցման հստակ քաղաքականությունը, բողոքի առնչությամբ գաղտնիության ապահովման և հավաքագրված անձնական տվյալների պաշտպանության միջոցները, ինչպես նաև անանուն բողոքներ ներկայացնելու հնարավորությունը: Բողոքների դիտարկումը ներառում է քայլ առ քայլ գործընթաց, ինչպես նաև դրանք պատշաճ կերպով ավարտին հասցնելու համար սահմանված պարտականություններ, ինչպես մանրամասն ներկայացված է ստորև բերված բաժիններում:

8.1.1 Շրջանակ

Բողոքարկման մեխանիզմի շրջանակն է լուսաբանել բոլոր շահագրգիռ կողմերի խնդիրներն ու մտահոգությունները՝ կապված Ծրագրի գործունեության և ԲՍԱԳ փուլում բացահայտված (և ԲՍԱԳ հաշվետվությունում և ԲՍԿՀ-ում փաստաթղթավորված) միջոցառումների իրականացման հետ: Ընդհանրապես, ազդակիր համայնքների բոլոր հայցերը պետք է ընդունվեն և նախքան դիտարկումը չպետք է կայացվի որևէ որոշում, նույնիսկ եթե բողոքները չնչին են: Այնուամենայնիվ, լավագույն փորձի համաձայն, հետևյալ հայցերը պետք է ուղղվեն ծրագրի մակարդակի մեխանիզմներից դուրս.

- **Բողոքներ, որոնք ակնհայտորեն կապված չեն Ծրագրի հետ**. երբեմն դժվար է որոշել, թե որ հարցերն են առնչվում Ծրագրին, որոնք՝ ոչ: Եթե կասկածներ կան, բողոքները պետք է ընդունվեն և

ուսումնասիրվեն,

- **Կառավարության քաղաքականության և պետական կառույցների հետ կապված հարցեր**. Այս բողոքները պետք է ներկայացվեն համապատասխան մարմիններին,
- **Հանցավոր գործունեության և բռնության վերաբերյալ բողոքներ**. Այս դեպքերում բողոքողները պետք է ուղարկվեն արդարադատության համակարգ.
- **Աշխատանքի հետ կապված բողոքներ**. Աշխատանքի և աշխատանքային պայմանների կառավարման պլանի միջոցով կստեղծվի առանձին մեխանիզմ, որի շրջանակում կներառվեն ընկերության աշխատակիցների, կապալառուների, ենթակապալառուների և մատակարարների բոլոր բողոքները: Բողոքարկման այս մեխանիզմը կհամապատասխանեցվի ԱԶԲ անվտանգության պահանջներին, ՎԶԵԲ ԿՊ2 և ՄՖԿ ԿՍ 2 պահանջներին, և
- **Առևտրային վեճեր**. առևտրային հարցերը պետք է ամրագրվեն պայմանագրային համաձայնագրերով, և հարցերը պետք է լուծվեն առևտրային վեճերի լուծման տարբեր մեխանիզմների կամ քաղաքացիական դատարանների միջոցով: Մատակարարներին հասանելի կլինի նախորդ կետով նախատեսված ներքին բողոքարկման մեխանիզմը:

8.1.2 Բողոքարկման մեխանիզմի կառավարման ընթացակարգերի հրապարակում

Բողոքարկման մեխանիզմները կհրապարակվեն հետևյալ կերպ.

- Պաստառներ տեղամասի մուտքի մոտ և բողոքների արկղերի տեղադրման վայրում (համայնքապետերի գրասենյակներ),
- Շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեություն, և
- Առցանց, ՇԿՆՊ-ում:

Առցանց և տպագիր նյութերի վրա տրամադրվող տեղեկատվությունը հասանելի կլինի հայերեն և անգլերեն լեզուներով և կներառի առնվազն հետևյալը.

- Ի՞նչ է Բողոքարկման մեխանիզմը և դրա հիմնական բնութագրերը,
- Ո՞վ կարող է բողոքներ ներկայացնել (այսինքն՝ բոլոր շահագրգիռ կողմերը),
- Որտեղ, երբ և ինչպես համայնքի անդամները կարող են բողոքներ ներկայացնել (համաձայնեցնել շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացում),
- Ո՞վ է պատասխանատու բողոքների ընդունման և դրանց արձագանքման համար,
- Ինչպիսի՞ պատասխան կարող են ակնկալել բողոքատուները ընկերությունից, ներառյալ պատասխանի ժամանակացույցը. և
- Ի՞նչ այլ իրավունքներ և պաշտպանություն են երաշխավորված:

ՀԿՊ-ն (նշանակվելու դեպքում) հայերեն լեզվով կհստակեցնի վերը նշված կետերից

ցանկացածը, եթե պահանջվի շահագրգիռ կողմերի ներգրավման և բողոքատուների հետ շփման ընթացքում:

8.1.3 Բողոքի ներկայացում

Բողոքարկման մեխանիզմը թույլ կտա բողոքներ ներկայացնել մի քանի եղանակով.

- Փոստով,
- Էլ-փոստով;
- Ծրագրի տեղամասի մուտքի մոտ,
- Փոստարկղերով – բողոքների արկղերով (Ծրագրի տեղամասի մուտք, համայնքապետերի գրասենյակներ) և
- Համայնքի կապի պատասխանատուի հետ հանդիպումների ժամանակ:

Գրավոր բողոքները կստացվեն փոստով, էլեկտրոնային փոստով և փոստարկղերով, տեղամասի մուտքի մոտ կամ ՀԿՊ-ի հետ հանդիպումների ժամանակ (նշանակված լինելու դեպքում): Բանավոր բողոքները կստացվեն ծրագրի տեղամասի մուտքի մոտ և ՀԿՊ -ի հետ հանդիպումների ժամանակ (նշանակված լինելու դեպքում): Հետևաբար, անվտանգության աշխատակիցները պետք է տեղյակ լինեն և վերապատրաստվեն՝ բողոքատուի հետ պատշաճ կերպով վարվելու համար: Անվտանգության անձնակազմի վերապատրաստումը կիրականացվի Անվտանգության կառավարման հատուկ պլանի միջոցով՝ համաձայն ԲՍԿՀ-ի: Անվտանգության անձնակազմը պետք է տեղեկացնի Համայնքի հետ կապի պատասխանատուին, որ շահագրգիռ կողմը ցանկանում է բողոք ներկայացնել: Շահագրգիռ կողմերից այն բողոքատուներին, ովքեր նախընտրում են իրենց բողոքները բանավոր ներկայացնել, Համայնքի կապի պատասխանատուները կհանդիպեն ընկերության մուտքի մոտ (կամ կարող են նրանց առաջարկել գնալ ընկերության գրասենյակներ, եթե բողոքատուին այդպես է հարմար) և կգրանցեն բողոքատուի մանրամասները և դրանք բարձրաձայն կկարդան բողոքատուի համար՝ հաստատելու, որ բողոքի հիմնական տարրերը ներառված են:

Բացի բողոքարկման մեխանիզմից, Ծրագրի ՀԿՊ-ի (նշանակված լինելու դեպքում) և ԲևՍ գծով ղեկավարի էլ. փոստի հասցեները հասանելի կլինեն ցանկացած միջադեպի մասին հաղորդելու համար:

Համայնքի հետ կապի պատասխանատուն պարբերաբար կհանդիպի շահագրգիռ կողմերի հետ շինարարության, շահագործման և շահագործումից հանելու ընթացքում: Հանդիպումների հաճախականության վերաբերյալ հատուկ մանրամասները ներկայացված են շահագրգիռ կողմերի պլանավորված ներգրավման բաժնում:

Իգական սեռի կոնտակտային անձը հասանելի կլինի կանանց հետ քննարկելու գենդերային ոտնձգությունների կամ բռնության հետ կապված ցանկացած բողոք: Կանայք խրախուսվում են հաղորդել բռնության կամ ոտնձգության ցանկացած դեպքի տեղի ունենալու մասին: Իգական սեռի կոնտակտային անձը միջոցներ կսահմանի գաղտնիությունը երաշխավորելու համար:

Բողոքարկման մեխանիզմը ԲՍԿՀ-ում կներառի նաև հղումներ Մասդարի ԲՍԿ-ի բողոքարկման մեխանիզմին (էլ. փոստով) և TAQA-ի օգնության գծին (առցանց և հեռախոսով), որտեղ շահագրգիռ կողմերը կարող են լրացուցիչ բողոք ներկայացնել, եթե բավարարված չեն Ծրագրի կողմից առաջարկված լուծումով:

8.1.4 Բողոքների ստացում

Ընկերությունը կհաստատի բողոքի ստացումը 2 օրվա ընթացքում և կպարտավորվի որոշակի ժամկետում պատասխանել բոլոր գրանցված բողոքներին: Մարդկանց տեղեկացումն առ այն, թե երբ կարող են իրենց հետ կապ հաստատել ընկերության աշխատակիցները և/կամ ստանալ իրենց բողոքի պատասխանը, կարող է նվազեցնել բողոքների լուծման գործընթացի հետ կապված անորոշությունը:

Բողոքների համար կիրականացվի հետևյալ ստացման ընթացակարգը.

- Բոլոր մուտք արվող բողոքների ստացումը կհաստատվի որքան հնարավոր է շուտ, նախընտրելի է ներկայացնելու պահին և ոչ ուշ, քան ներկայացվելուց երկու օր անց: Պաշտոնական հաստատումը՝ բողոքի համարով կամ այլ նույնացուցիչով և պատասխանի ժամանակացույցով, հավաստիացնում է բողոքատուին, որ կազմակերպությունը լուրջ է վերաբերվում բողոքին և Ծրագրին է փոխանցում ներկայացված բողոքի արձանագրությունը: Որպես լավ գործելակերպ՝ անձամբ ներկայացվող բողոքների ստացումը կհաստատվի տեղում:
- Դիտողություն/բողոք ստանալուց հետո այն նախ պետք է գրանցվի Շահագրգիռ կողմերի բողոքների գրանցամատյանում:
- Եթե ավելի բարդ ուսումնասիրություն է պահանջվում, բողոքատուն կստանա թարմացում բողոքը ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում՝ բացատրելով բողոքը լուծելու համար անհրաժեշտ գործողությունները և հավանական ժամկետը. և
- Ծրագրի Ընկերությունը առաջին հաստատման մեջ կբացատրի, թե որ հայցերն են ակնհայտորեն մեխանիզմի շրջանակից դուրս և ինչ այլընտրանքային մեխանիզմներ կարող են օգտագործել համայնքները այս հնարավոր խնդիրները լուծելու համար:

8.1.5Բողոքների դիտարկում և քննում

Ապահովելու համար, որ բոլոր բողոքները պատշաճ կերպով քննվում և լուծվում են, կպահվի բողոքների գրանցամատյան, որտեղ կփաստագրվեն յուրաքանչյուր բողոքի լուծման համար ձեռնարկված բոլոր գործողությունները:

Կարող է պահանջվել լայնածավալ քննություն այն դեպքերում, երբ բողոքները բարդ են և չեն կարող արագ լուծվել: Ընկերությունը լիարժեք պատասխանատվություն կստանձնի իր բողոքարկման մեխանիզմի միջոցով ստացվող բողոքների մանրամասների քննության համար՝ հետևելով «բողոքողի համար ոչ մի ծախս» սկզբունքին:

Զգայուն բողոքների դեպքերում, ինչպիսիք են բազմաթիվ շահեր և մեծ թվով ազդակիր անձանց ներգրավող բողոքները, համատեղ քննության նպատակով արտաքին կազմակերպությունների ներգրավումը կամ տեղական իշխանությունների մասնակցությունը թույլ տալը կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, եթե բողոքողները համաձայն են այս մոտեցմանը:

Բարդ բողոքների համար պետք է նշանակվի քննության թիմ: Եթե քննող թիմը ձևավորվի ներքին կարգով, ապա նկատի առնվելիք հարցերը կներառեն հնարավոր շահերի բախումը, որակավորումները, գենդերային կազմը և բյուջեն:

Բողոքատուների հետ հանդիպումները և տեղամաս այցելությունները կարող են օգտակար լինել բողոքների քննության համար և կիրականացվեն համապատասխան դեպքերում:

ՀԿՊ-ն (նշանակվելու դեպքում) ԲևՍ գծով ղեկավարի հետ քննարկում է ստացված բողոքները, քննության ընթացքը և առաջարկվող/համաձայնեցված որոշումը: Բարդ բողոքների դեպքում թիմի մյուս անդամները կարող են մասնակցել բողոքների քննությանը և լուծմանը:

Բողոքատուները ամեն շաբաթ կտեղեկացվեն իրենց բողոքի կարգավիճակի մասին:

8.1.6 Բողոքների լուծման տարբերակներ և պատասխաններ

Բողոքարկման մեխանիզմի հնարավոր առավելություններից մեկը դրա ճկունությունն է: Յուրաքանչյուր կոնկրետ տեսակի բողոքի համար հատուկ ընթացակարգ սահմանելու փոխարեն, կտրամադրվի տարբեր տեսակի բողոքների համար համապատասխան հնարավոր տարբերակների ցանկ: Տարբերակները կարող են ներառել վնասակար գործողությունների փոփոխությունը կամ դադարեցումը կամ դրանց ժամանակի և շրջանակի սահմանափակումը (օրինակ՝ շինարարական աղմուկի համար), ներողություն խնդրելը, կորցրած գույքի փոխարինումը, դրամական փոխհատուցման տրամադրումը, համայնքի ներգրավման ռազմավարության վերանայումը և առկա պարտավորությունների կամ քաղաքականության վերանայումը:

Բողոքների քննության թիմը կներկայացնի բողոքը լուծելու առաջարկ, որը կունենա ավագ ղեկավար կազմի աջակցությունը: Այնուհետև համայնքի հետ կապի պատասխանատուն կապ կհաստատի բողոքատուի հետ՝ առաջարկվող լուծման վերաբերյալ համաձայնություն ստանալու համար:

Եթե բոլոր կողմերն ընդունեն առաջարկվող լուծումը, համաձայնեցված գործողությունները կիրականացվեն սահմանված ժամկետներում: Այն դեպքում, երբ բողոքատուն չի ընդունում առաջարկվող լուծումը, ընկերությունը պետք է վերագնահատի իրավիճակը և համոզվի, որ բողոքարկման մեխանիզմի շրջանակներում բոլոր այլընտրանքներն ուսումնասիրված են: Եթե բողոքարկման մեխանիզմի շրջանակներում հնարավոր չէ համաձայնեցնել բոլոր կողմերի համար ընդունելի լուծում, ապա բողոքը կուղարկվի արտաքին մեխանիզմներին:

Հնարավորության դեպքում կիրականացվի բողոքի բազմակողմանի մոնիտորինգ՝ հավաքելով ապացույցներ առ այն, որ անհրաժեշտ գործողությունները տեղի են ունեցել: Օրինակ՝

- Եթե խնդիրը լուծվել է ի գոհունակություն բողոքատուների, ստանալ հաստատումը և ներկայացնել այն գործի փաստաթղթերի հետ միասին, և
- Լուսանկարել կամ հավաքել այլ փաստաթղթային ապացույցներ, որպեսզի հնարավոր լինի ստեղծել բողոքի համապարփակ գրառումները և դրանց լուծման եղանակները:

Բողոքարկման մեխանիզմի կոնտակտային տվյալները կարող եք գտնել ստորև (ստորև

բերված տվյալները ԲՍԱԳ անկախ խորհրդատուների համար են, ՀԿՊ-ի տվյալները կավելացվեն նշանակվելուց հետո).

Անուն	Հեռախոսահամար	Էլ-փոստի հասցե
Գարիկ Արաբյան	+374 55 093088	g.arabyan@gmail.com
Արսեն Հայրիյան	+374 99 220992	ars.hayriyan@gmail.com

9 Գնահատում և հաշվետվությունների ներկայացում

Սույն Կառավարման պլանի ճիշտ իրականացումն ապահովելու համար պահանջվում է ներքին մոնիտորինգ: Անհրաժեշտ է պարզել, թե արդյոք արդյունքները ձեռք են բերվել, թե՞ անհրաժեշտ են լրացուցիչ կառավարման միջոցառումներ՝ նախատեսված արդյունքին հասնելու համար: Համապատասխանության գնահատումը կիրականացվի ստուգումների և հիմնական կատարողական ցուցանիշների (ՀԿՑ-ներ) մոնիտորինգի միջոցով, ինչպես նշված է ստորև բերված աղյուսակներում:

Աղյուսակ 5 Գնահատման և հաշվետվությունների ներկայացման պահանջներ

Պահանջ	Գործողություններ
Արտաքին տեղեկատվության հրապարակում	Ծրագիրը բոլոր շահագրգիռ կողմերին կտրամադրի հստակ, հասկանալի և մատչելի տեղեկատվություն հետևյալի առնչությամբ՝ • Շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեություն; և • Շահագրգիռ կողմերի բողոքարկման մեխանիզմներ.
Ստուգում	Սույն ԿՊ-ում թվարկված շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունների համարժեք իրականացումը կմշտադիտարկվի որպես ամսական ներքին աուդիտների և եռամսյակային արտաքին աուդիտների մաս, ինչպես նկարագրված է ԲՍԿՀ ձեռնարկում:
Գնահատում	Սույն ԿՊ-ով սահմանված կառավարման միջոցառումների կատարումը գնահատելու համար կմշտադիտարկվեն առնվազն հետևյալ ՀԿՑ-ները:ՀԿՑ-ները պետք է հաշվարկվեն եռամսյակային կտրվածքով. • Շահագրգիռ կողմերի ներգրավման միջոցառումների քանակը, • Տեղեկատվության բացահայտման գործողությունների քանակը, • Շահագրգիռ կողմերի ներգրավմամբ և բողոքարկման մեխանիզմով զբաղվող անձնակազմի թիվը, • Բողոքների դիտարկման և փակման միջին ժամանակը և ժամանակային միտումը. • Բացված բողոքների քանակը, բողոքների ներկայացման եղանակը և միտումը. • Նոր բողոքներում բարձրացված թեմաները և միտումները. • Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը, որոնք պահանջում են ներգրավում իրենց տներում կամ այլ աջակցություն, և • Համապատասխանությունը ներգրավման օրացույցին:

Ներքին հաշվետվողականություն	ԱՅԳ-1-ի ՀԿՊ-ները ամսական կտրվածքով պետք է զեկուցեն ԱՅԳ-1 ԲևՍ գծով ղեկավարին հետևյալի վերաբերյալ.
	• սույն պլանով սահմանված գործողությունների իրականացման կարգավիճակը.
	• ՀԿՑ մոնիտորինգ (ներառյալ նախորդ ամիսների տվյալները՝ միտումները գնահատելու համար)
	  • ՈԱԱԲ վիճակագրություն – Շահագրգիռ կողմերի ներգրավման մատյան,
	• Անհամապատասխանություններ, ուղղիչ և կանխարգելիչ գործողություններ (անհրաժեշտության դեպքում)
	  • ՈԱԱԲ վիճակագրություն – Անհամապատասխանության մատյան, և
	• Բարելավման գործողություններ և ԿՊ-ի թարմացումներ (անհրաժեշտության դեպքում):
	Հարցման դեպքում գնահատման բոլոր ասպեկտները հասանելի կլինեն ներքին հաշվետվողականության համար:

Արտաքին հաշվետվողականություն	ՀԿՑ-ի միտումները հասանելի կլինեն հիմնական արտաքին շահագրգիռ կողմերին՝ ըստ պահանջի:

10 Դերեր և պարտականություններ

10.1 Այգ-1 ԲևՍ գծով ղեկավար

Այգ-1 ԲևՍ գծով ղեկավարն ունի հետևյալ պարտականությունները՝

- Ապահովել, որ առկա լինի համապատասխան կադրերով ապահովված և պատրաստված համայնքների հետ կապի թիմ, և որ նրանք ապահովվեն անհրաժեշտ ռեսուրսներով (օրինակ՝ տրանսպորտային միջոցներ, ընկերության հեռախոսներ, գրասենյակային նյութեր),
- Վերահսկել բոլոր բողոքների դիտարկումը և լուծումը,
- Վերահսկել Ծրագրի տեղեկատվության հրապարակումը,
- Վերահսկել, որ շահագրգիռ կողմերի ներգրավման օրացույցը և Քովիդ միջոցառումները պահպանվեն, և
- Ապահովել, որ ՇԿՆՊ-ն և ներգրավման առկա մեթոդները հրապարակվեն:

10.2. Այգ-1 Համայնքի հետ կապերի պատասխանատու (ՀԿՊ)

Համայնքի հետ կապի պատասխանատուն (նշանակվելու դեպքում) կիրականացնի Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանի բոլոր ասպեկտները: Ակնկալվում է, որ Ծրագրի գործողության ընթացքում կլինի մեկ ՀԿՊ: Եթե ՀԿՊ-ն արական սեռի ներկայացուցիչ է, ապա նրան կաջակցի թիմի կին անդամը, որը վերապատրաստվել է կանանց ներգրավման և կանանց բողոքների առնչությամբ փոխհարաբերությունների հարցերում:

Համայնքի հետ կապի պատասխանատուի պարտականությունները ներկայացված են ստորև.

- Ծրագրի ողջ ցիկլի ընթացքում իրականացնել շահագրգիռ կողմերի ներգրավման պլան՝ ԲևՍ գծով ղեկավարի հսկողության ներքո,
- Իրականացնել Քովիդ 19-ի կառավարման միջոցառումները շահագրգիռ կողմերի ներգրավման գործունեության համար.
- Հավաքել տվյալներ ՀԿՑ հաշվետվության համար,
- Զեկուցել շեղումների և միջադեպերի մասին,
- Շեղումների դեպքում (ներքին կամ արտաքին աուդիտից) ուղղիչ գործողություններ ձեռնարկել,
- Գրանցել բողոքները, հաստատել բողոքի ստացումը, աջակցություն խնդրել համապատասխան թիմից (օրինակ՝ բնապահպանական, առողջապահական և անվտանգության, հողի ձեռքբերման, գենդերային, տրանսպորտի, զբաղվածության)՝ կախված բողոքի բովանդակությունից, տեղեկացնել բողոքատուին բողոքի

հասցեագրման պլանի մասին, կապ հաստատել բողոքատուի հետ բացահայտումների և առաջարկվող լուծման վերաբերյալ և փաստաթղթավորել բողոքների քննության և լուծման գործընթացի արդյունքները, և

- Իրականացնել 8-րդ բաժնում նշված գործողությունները՝ կապված շահագրգիռ կողմերի հետ հանդիպումների և տեղեկատվության բացահայտման հետ:

- ՀԿՊ-ները կխոսեն անգլերեն և հայերեն:

10.3. ՆԳՇ / ՇԼՊ/ Շահագործումից հանման կապալառու

ՆԳՇ / ՇԼՊ/ Շահագործումից հանման կապալառուի ԲԼՍ գծով ղեկավարը կնշանակի ՀԿՊ և անհրաժեշտության դեպքում կմասնակցի շահագրգիռ կողմերի ներգրավման աշխատանքներին և բոլոր բողոքների քննությանը, որոնք առնչվում են ՆԳՇ/ՇԼՊ/ Շահագործումից հանման կապալառուի գործունեությանը, այդ թվում՝ իրենց ենթակապալառուների և մատակարարների հետ կապված գործունեությանը: